



ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

Վիճակագրական վերլուծական հաշվետվություն



Partnership for informed decision-making and positive social impact

Հաշմանդամություն և սահմանման գործիքներին և
մեթոդաբանության ներդրումն աշխարհում և հաշմանդամություն
ունեցող երեխաների մասին միջոցառումներին տեղեկատվություն
փոխանակման և տվյալների կառավարման համակարգի
ձևավորում ծրագիր
Էռնան 2019թ.

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքները 2018 թվականին

Վիճակագրական վերլուծական հաշվետվություն

Սույն հաշվետվությունը մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Հաշմանդամության սահմանման գործիքների ու մեթոդաբանության ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների մասին միջոլորտային տեղեկատվության փոխանակման և տվյալների կառավարման համակարգի ձևավորում» ծրագրի շրջանակներում: Հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները հեղինակներին են և պարտադիր չէ, որ համընկնեն ՅՈՒՆԻՍԵՖի պաշտոնական տեսակետի հետ:

Բովանդակություն

Բովանդակություն.....	2
Գծապատկերների ցանկ	3
Հապավումների ցանկ.....	7
Հիմնական հասկացությունների սահմանումներ	8
Մեղմագիր.....	10
Ներածություն.....	15
Մեթոդաբանությունը.....	19
Վերլուծության նպատակն ու առարկան	19
Վերլուծության շրջանակն ու չափանիշները.....	20
Տվյալների հավաքագրման մեթոդները, հետազոտական էթիկայի սկզբունքները և հիմնական սահմանափակումները	21
ԿԱՊԿ գնահատման արդյունքները թվերով	23
1. Գնահատում անցած երեխաների ժողովրդագրական պատկերը.....	23
2. Արձանագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները.....	27
2.1 Արձանագրված ֆունկցիայի խանգարումների զուգորդումները	30
3. Արձանագրված ֆունկցիայի խանգարումներն ըստ ծանրության աստիճանի և ենթակատեգորիաների	32
Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներ	36
Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումներ.....	39
Լսողական ֆունկցիայի խանգարումներ	42
Տեսողական ֆունկցիայի խանգարումներ	43
Շարժողական ֆունկցիայի խանգարումներ	46
4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին առաջարկված ծառայությունները.....	49
5. ԱՀԿ ՖՄԴ արձանագրություններով ամփոփված 30 գնահատումների արդյունքը	57
Գնահատման արդյունքների արձանագրման երկու մեթոդների համեմատությունը ..	59
Եզրակացություններ.....	69

Քաղված դասեր.....	73
Առաջարկություններ	74
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	78
Հավելված 1: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների մասին մանրամասն վիճակագրություն	78
Հավելված 2: Լրացուցիչ վերլուծություն ֆունկցիա խանգարումների զուգորդումների հաճախականության և բնույթի վերաբերյալ.....	0

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1: Գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ տարիքի, տոկոս	23
Գծապատկեր 2: Գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի, տոկոսն ընդհանուրի մեջ	23
Գծապատկեր 3: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ սեռի, տոկոսն ընդհանուրի մեջ	24
Գծապատկեր 4: Երեխաների բաշխվածությունն ըստ սեռի և տարիքային խմբերի, տոկոսը տվյալ տարիքային խմբում	24
Գծապատկեր 5 Տարիքային խմբերի բաշխվածությունն ըստ սեռի	24
Գծապատկեր 6: Գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ մարզերի, տոկոս	25
Գծապատկեր 7: Գնահատում անցած Երեխաների բաշխվածությունն ըստ սեռի և մարզի, տոկոս	25
Գծապատկեր 8: Գնահատում անցած Երեխաների բաշխումն ըստ մարզի և տարիքային խմբերի. տոկոս	26
Գծապատկեր 9: Գնահատման տեսակներն ըստ տարիքային խմբերի, տոկոս	27
Գծապատկեր 10: Գնահատման եզրակացությունն ըստ գնահատման տեսակի, տոկոս... ..	27
Գծապատկեր 11: Կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի արձանագրման հաճախականությունն ըստ գնահատման տեսակի և և մարզերի, տոկոս գնահատումների մեջ	28
Գծապատկեր 12: Երեխաների բաշխվածությունն ըստ ԿԱՊԿ ոլորտների քանակի, տոկոս	29
Գծապատկեր 13: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը պայմանավորող ֆունկցիաները գնահատում անցած երեխաների շրջանում, տոկոս.....	29
Գծապատկեր 14: Արձանագրված ԿԱՊԿ տեսակների հաճախականությունն ըստ սեռի .	29
Գծապատկեր 15: Արձանագրված ԿԱՊԿ տեսակն ըստ տարիքային խմբերի.....	30
Գծապատկեր 16: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ արձանագրված ֆունկցիաների խանգարումների զուգորդումների, ըստ ֆունկցիայի խանգարումների, զուգորդման տեսակների և երեխաների թվի	32

Գծապատկեր 17: Մեկ ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի	34
Գծապատկեր 18: Միաժամանակ 2 ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիաների խանգարման աստիճանների.....	34
Գծապատկեր 19: Արձանագրված միաժամանակ 2 ֆունկցիաների խանգարման աստիճանների համադրումը, N=931	35
Գծապատկեր 20: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի, N=1122	36
Գծապատկեր 21: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի և տարիքային խմբերի	37
Գծապատկեր 22: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի և մարզի N=1112	37
Գծապատկեր 23: Առաջնայինը ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարման դեպքում արձանագրված խնդիրներն ըստ ենթակատեգորիաների, N=1889	39
Գծապատկեր 24: Միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ սեռի և խանգարման աստիճանի, N=237	40
Գծապատկեր 25: Միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի և տարիքային խմբերի	40
Գծապատկեր 26: Միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի և մարզի.....	41
Գծապատկեր 27: Լսողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի, սեռի, տարիքային խմբերի և մարզերի, N=18 43	
Գծապատկեր 28: Միայն տեսողության ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների մոտ ֆունկցիայի խանգարման աստիճանները, N=88.....	44
Գծապատկեր 29: Միայն տեսողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի, սեռի, տարիքային խմբերի և մարզերի, N=88	44
Գծապատկեր 30: Միայն շարժողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի, N=65	46
Գծապատկեր 31: 2018 թվականին ԿԱՊԿ գնահատման արդյունքների ամփոփ պատկերը, N=3513.....	49
Գծապատկեր 32: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ երաշխավորված մասնագետների աջակցության ծառայությունների	53
Գծապատկեր 33: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ տարիքային խմբերի և երաշխավորված մասնագետների աջակցության	55
Գծապատկեր 34: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման տեսակի և առաջարկված մասնագետների աջակցության.....	56
Գծապատկեր 35: Հոգեկան ֆունկցիաներում, գործունեության ու մասնակցության և ընդհանուր ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանների համեմատությունը ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների համար	64

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1: Հայաստանի Հանրապետությունում ներառական դպրոցների ու ԿԱՊԿ ունեցող աշակերտների թվաքանակը 2019 թվականի մայիսի դրությամբ.....	16
---	----

Աղյուսակ 2: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաշխումն ըստ արձանագրված ֆունկցիայի խանգարման տեսակների քանակի, տոկոսը տվյալ խմբի մեջ	31
Աղյուսակ 3: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության	36
Աղյուսակ 4: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի (b117) խանգարումների ենթակատեգորիաներում արձանագրված խնդիրների հաճախականությունը, N=2283	38
Աղյուսակ 5: Չայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության	39
Աղյուսակ 6: Չայնի/խոսքի ֆունկցիայի (b300) խանգարումների ենթակատեգորիաներում արձանագրված խնդիրների հաճախականությունը	41
Աղյուսակ 7: Լսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության	42
Աղյուսակ 8: Տեսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաներն ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության	43
Աղյուսակ 9: Շարժողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաներն ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության	46
Աղյուսակ 10: Միայն շարժական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի և սեռի, տարիքային խմբերի և մարզերի, N=65	47
Աղյուսակ 11: Շարժողական ֆունկցիայի (b7) խանգարումների ենթակատեգորիաներում արձանագրված խնդիրների հաճախականությունը	48
Աղյուսակ 12: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների բաշխումն ըստ կրթության կազմակերպման համար առաջարկված մոտեցումների	51
Աղյուսակ 13: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին առաջարկված ծառայությունների համընկումները	52
Աղյուսակ 14: Երաշխավորված մասնագետների աջակցության ծառայությունները ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին	53
Աղյուսակ 15: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ սեռի և երաշխավորված մասնագետների աջակցության	54
Աղյուսակ 16: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ տարիքային խմբերի և երաշխավորված մասնագետների աջակցության	54
Աղյուսակ 17: Գործող արձանագրությամբ ԿԱՊԿ գնահատման արդյունքները 28 երեխաների համար	59
Աղյուսակ 18: Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ենթակատեգորիաներում արձանագրված սահմանափակումների աստիճանի, N=14	60
Աղյուսակ 19: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների մոտ b100՝ հոգեկան (ինտելեկտուալ/մտավոր) ֆունկցիաներում արձանագրված ֆունկցիայի խանգարման աստիճանի ամփոփ միավորը	61
Աղյուսակ 20: ԿԱՊԿ ունեցող 28 երեխաների բաշխումն ըստ ԿԱՊԿ արձանագրության և b100 ծածկագրերում ունեցած ամփոփ միավորի	61
Աղյուսակ 21: ա/ ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ «Սովորելը և գիտելիքը կիրառելը» ոլորտում ունեցած դժվարությունների, N=28	62

Աղյուսակ 22: ԿԱՊԿ ունեցող 28 երեխաների բաշխումն ըստ ԿԱՊԿ արձանագրության և d100 ծածկագրերում ունեցած ամփոփ միավորի	63
Աղյուսակ 23: Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e100 «Արտադրանք և տեխնոլոգիաներ» ենթաաղյուսակի.....	65
Աղյուսակ 24: Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e300 «Աջակցությունը և հարաբերությունները» ենթաաղյուսակի.....	66
Աղյուսակ 25: Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e400 «Վերաբերմունք» ենթաաղյուսակի.....	67
Աղյուսակ 26: Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e500 «Աջակցությունը և հարաբերությունները» ենթաաղյուսակի.....	68

Հապավումների ցանկ

ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՌԻՊ	Անհատական ուսուցման պլան
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԿԱՊԿ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք
ԿԳՆ/ԿԳՄՍ	Կրթության և գիտության նախարարություն/կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀՄԿ	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
ՏՄԱԿ	Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն
ՖՄԴ	Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության դասակարգիչ

Հիմնական հասկացությունների սահմանումներ

Ներառական կրթություն	Ներառական կրթությունը յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համար, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 3 հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների անհրաժեշտություն ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա	անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում
Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում	ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին
Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ	երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն
Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն	Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար:
Ֆինանսավորման բարձրացված չափաքանակ	Կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ.

Անհատական ուսուցման պլան	1) ձայնի և խոսքի. 2) լսողական. 3) տեսողական. 4) ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող. 5) շարժողական: հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ աջակցող ծառայությունները)
Ֆունկցիայի խանգարում	Օրգանիզմի ֆունկցիաներն են օրգան համակարգերի ֆիզիոլոգիական ֆունկցիաները (ներառյալ հոգեբանական ֆունկցիաները): Մարմնի կառուցվածքը մարմնի անատոմիական մասեր են, ինչպիսիք օրգանները, վերջույթները և դրանց բաղադրիչներն են:
Ֆունկցիոնալության սահմանափակում	Խախտումներ, խանգարումները օրգանիզմի ֆունկցիաների կամ մարմնի կառուցվածքի այնպիսի խնդիրներն են, ինչպիսին էական շեղումը կամ կորուստը: Ըստ ԱՀԿ Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգչի ֆունկցիոնալությունը հավաքական տերմին է օրգանիզմի ֆունկցիաների, կենսագործունեության ու մասնակցության համար: Նույն կերպ հաշմանդամությունը հավաքական տերմին է խանգարումների/խախտումների, կենսագործունեության և մասնակցության սահմանափակումների համար:

Սեղմագիր

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ) գնահատման արդյունքների ուսումնասիրության նախաձեռնությունն առաջ է եկել 2018 թվականի դեկտեմբերին, երբ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Հաշմանդամության սահմանման գործիքների ու մեթոդաբանության ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների մասին միջոցառումային տեղեկատվության փոխանակման և տվյալների կառավարման համակարգի ձևավորում» ծրագրի շրջանակում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի գործընկերների հետ քննարկվում էին **ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրման գործող և առաջարկվող մոտեցումների դրական ու բացասական կողմերը**։ ԿԱՊԿ գնահատման արդյունքների առաջարկվող մոտեցումը ենթադրում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիաների, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգչի (ԱՀԿ ՖՄԴ)¹ ծածկագրերի կիրառում, գնահատման արդյունքների վերջնական արձանագրության մեջ։ ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրության ներկայիս ձևաչափը պահանջում է գնահատման արդյունքների ներկայացում ֆունկցիաների խանգարումների տեսքով, մինչդեռ բուն գնահատման գործընթացը դիտարկում և գնահատում է ԿԱՊԿ գնահատում անցնող երեխաների ֆունկցիոնալությունը՝ այսինքն, գնահատվում են երեխաների կարողություններն ու կատարողականը, գործունեությունն ու մասնակցությունն ու դրանց խոչընդոտող կամ նպաստող միջավայրային գործոնները։

Բացի այդ, ԿԱՊԿ գնահատում անցնող և ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին որևէ ամփոփ տեղեկատվություն երբևէ չէր հրապարակվել։ Անգամ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից (ԿՏԱԿ)՝ 2016-2017 թվականներին՝ «[Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում](#)» ձևավորված համապատասխան մոդուլում առկա էր միայն 1879 երեխաների մասին տեղեկատվություն <https://cde.emis.am/reports>։ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին ոչ մի տվյալ չի ներկայացնում։ Հետևաբար, այս նախաձեռնությունը նպատակ ուներ լրացնելու նաև ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին տեղեկատվական բացը²։

Ծրագրի աշխատանքային խումբը պայմանավորվածություն ձեռք բերեց ուսումնասիրել 2018 թվականի ընթացքում ԿԱՊԿ գնահատում անցած բոլոր երեխաների գնահատման արդյունքները և դուրս բերել հիմնական միտումները, ապա համադրել այդ արդյունքները նույն տարում ԱՀԿ ՖՄԴ հիման վրա մշակված արձանագրությունների կիրառմամբ 30 երեխաների գնահատման արդյունքների հետ, ցույց տալու երկրորդ մոտեցմամբ առավել օգտակար տեղեկատվության ստացման հնարավորությունը։

¹ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 19 դեկտեմբերի 2014 թվականի N 1139-Ն հրամանը «Հայաստանի հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «ֆունկցիոնալության, հաշմանդամության եվ առողջության դասակարգիչ» հաստատելու մասին <http://www.irtek.am/views/act.aspx?aid=79110>

² Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կետրոնները եռամսյակային հաշվետվություններ ներկայացնում են ՀՀ ԿԳՄՄ՝ կատարված գնահատումների, մատուցված ծառայությունների մասին, սակայն այդ տեղեկատվությունը ևս ամփոփ հասանելի չէ Նախարարության կայքում։

Գնահատման գործընթացը երկու պարագայում նույնն է, փոխվում է միայն գնահատման արդյունքների արձանագրության ձևաչափը, որն ի տարբերություն գործող ձևաչափի, որը միայն հնարավորություն է տալիս արձանագրելու ֆունկցիայի խանգարումներ, այն դեպքում, երբ գնահատման առարկան ֆունկցիոնալությունն է, իսկ երկրորդ մոտեցումը հնարավորություն է տալիս արձանագրել ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի կիրառմամբ երեխաների ֆունկցիոնալության սահմանափակման և միջավայրային գործոնների ազդեցության աստիճանները:

Ուսումնասիրության համար օգտագործվել են 2018 թվականի ընթացքում ԿԱՊԿ գնահատում անցած 3513 երեխաների տվյալները՝ ապանձնավորված արձանագրությունների տվյալները և 30 երեխաների մասին տվյալներ, ում ԿԱՊԿ գնահատումն արձանագրվել է ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի կիրառմամբ:

Ուսումնասիրությունը նպատակ ուներ պատասխանելու հետևյալ հարցերին՝

- Ինչպիսի՞ ժողովրդագրական տվյալներ ունեն ԿԱՊԿ գնահատում անցնող երեխաները,
- Ինչպիսի՞ խնդիրներ են հիմնականում արձանագրվում ԿԱՊԿ գնահատման արդյունքում,
- Ի՞նչ ծառայություններ են երաշխավորվում ԿԱՊԿ ունեցող երեխաներին և
- Ի՞նչ առավելություններ է տալիս ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրումը ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերով:

Վերլուծության համար ընտրանք չի ձևավորվել: Վերլուծությունը հիմնված է 2018 թվականի ընթացքում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացված երեխաների ֆունկցիոնալ գնահատման արդյունքների վրա: Հետևաբար, ըստ մարզերի բաշխվածությունը, ինչպես նաև երեխաների սեռատարիքային կազմը արտացոլում է փաստացի, տարվա ընթացքում գնահատում անցած երեխաների բնութագրիչները: Լրացուցիչ վերլուծվել են 2018 թվականի ընթացքում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացրած 30 երեխաների ֆունկցիոնալ գնահատման արդյունքները, որոնք արձանագրվել են ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի կիրառմամբ:

2018 թվականին գնահատում անցած 3513 երեխաների գերակշռող մասը՝ 86,6 տոկոսն անցել էր գնահատում առաջին անգամ: Վերագնահատում անցել էր երեխաների 13,4 տոկոսը: Գնահատում անցնողների կեսից ավելին՝ 51,5 տոկոսը 6-10 տարեկան էին, իսկ 43,4 տոկոսը՝ 11-ից 15 տարեկան: Գնահատում անցած երեխաների թվում ավագ դպրոցում սովորողները կազմել են 4,3 տոկոս, իսկ մինչև 6 տարեկանները եղել են 28 երեխա: Ըստ տարիքի գերակշռել են 10-ից 11 տարեկանները: Տղաները գերակշռել են բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ մինչև 6 տարեկանների տարիքային խմբի, որտեղ հավասարապես գնահատվել են և աղջիկներ և տղաներ: Շատ չնչին տարբերություն նկատվել է բարձր տարիքային խմբի համար, որտեղ աղջիկների շրջանում այդ տարիքային խմբի մասնաբաժինը մի փոքր ավելի էր՝ 5,4 տոկոս, քան տղաների դեպքում՝ 3,7 տոկոս: Ըստ մարզերի բաշխվածությունը ցույց է տալիս, որ 2018 թվականին հիմնական գնահատումներն իրականացվել են Երևանում, Արմավիրում, Լոռիում և Շիրակում: Վերագնահատումների կեսից ավելին բաժին է ընկել Շիրակին և Երևանին: Տարիքային

խմբերի բաշխվածության պատկերն ըստ մարզերի նույնպես հետաքրքիր միտումներ է ցույց տվել. Արագածոտն, Կոտայք և Սյունիք մարզերում գերազանցապես գնահատվել են 6-10 տարեկանները; Տավուշում՝ գերակշռել են 11-15 տարեկանները, Երևանում և Լոռիում գրեթե հավասարապես են բաշխվել 6-10 և 11-15 տարեկանները, իսկ բարձր տարիքի երեխաները հիմնականում գնահատվել են Վայոց Ձորում, Տավուշում, Լոռիում և Արարատում: Հետաքրքրական է, որ վերագնահատումներ իրականացվել են նաև մինչև 11 տարեկանների շրջանում, իսկ առաջին անգամ գնահատում անցածների շարքում եղել են միջին և ավագ դպրոցի երեխաներ:

2018 թվականի ընթացքում գնահատում անցած 3513 երեխաներից ԿԱՊԿ արձանագրվել է 2754 երեխաների մոտ՝ կամ գնահատում անցածների 78,4 տոկոսի մոտ: Վերագնահատման արդյունքում, այսինքն հիմնականում այն դեպքերում երբ մասնագետները աշխատել են երեխաների հետ, **ամեն չորրորդ երեխայի մոտ հաղթահարվում է ֆունկցիոնալ դժվարությունը և երեխաները կարողանում են սովորել առանց լրացուցիչ մասնագիտական աջակցության:** Հետաքրքրական է, որ և առաջին անգամ և վերագնահատման դեպքում ԿԱՊԿ չճանաչելու դեպքերը ավելի հաճախ են լինում Շիրակի մարզում՝ ամեն երրորդ գնահատումը առաջին գնահատման ժամանակ և գրեթե 45 տոկոս՝ վերագնահատման ժամանակ: Լոռու մարզում ևս ամեն երրորդ առաջնակի գնահատման ժամանակ ԿԱՊԿ չի արձանագրվում, սակայն վերագնահատման ժամանակ առաջընթաց ունեցող երեխաների մասնաբաժինը կամ ԿԱՊԿ չճանաչելու դեպքերը կազմում են 17 տոկոս: Տավուշի մարզում գրանցվել է դրական առաջընթացի առավել բարձր տոկոս՝ Շիրակի մարզից հետո, այստեղ վերագնահատում անցնող երեխաների 42,3 տոկոսի համար ԿԱՊԿ չի ճանաչվել: Սյունիքի մարզում ԿԱՊԿ հաղթահարման տեսանկյունից դրական արդյունք գրանցվել է ամեն չորրորդ երեխայի համար: Երևանում գրեթե բոլոր գնահատում անցնող երեխաների մոտ արձանագրվում է ԿԱՊԿ՝ և առաջին անգամ և վերագնահատման ժամանակ: Արարատի մարզում վերագնահատում անցած բոլոր երեխաների մոտ արձանագրվում է ԿԱՊԿ:

Գնահատում անցնող երեխաների համար որոշվում է, թե հետևյալ հինգ ֆունկցիաներից որում առկա խանգարումով է պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը.

1. ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ
2. տեսողության ֆունկցիաներ
3. լսողության ֆունկցիաներ
4. շարժողական ֆունկցիաներ
5. ձայնի և խոսքի ֆունկցիաներ

Գնահատում անցած երեխաների կեսից մի փոքր ավելին ուներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք միայն մեկ ֆունկցիայի խանգարման արդյունքում: Երկու ֆունկցիաներում միաժամանակ խանգարումներ և ԿԱՊԿ ուներ երեխաների 39 տոկոսը: Երեխաների 1,5 տոկոսն ուներ միաժամանակ 4 ոլորտում ֆունկցիայի խանգարում և աջակցության կարիք: Գրեթե բոլոր երեխաները, ովքեր ունեն մեկից ավելի ֆունկցիայի խանգարում, ունեն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խնդիրներ:

Երեխաների 83 տոկոսի մոտ արձանագրվել է ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների խանգարում, հաջորդ առավել հաճախ հանդիպող սահմանափակումը

ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարումներն են՝ 48 տոկոս: Ամեն 10-րդ երեխա ուներ շարժողական ֆունկցիայի հետ կապված խնդիր: Տեսողության և լսողության խնդիրներն առավել քիչ տոկոս են կազմել՝ 8 և 4 տոկոս համապատասխանաբար: Ըստ սեռի, ֆունկցիաների խանգարման պատկերը գրեթե նույնն է, սակայն աղջիկների մոտ մի փոքր առավել հաճախ են հանդիպում շարժողական, տեսողական և լսողական ֆունկցիաների խնդիրները: Ըստ տարիքային խմբերի ֆունկցիայի խանգարումների տարբերությունն ավելի ակնհայտ է. ձայնի/խոսքի խնդիրները գերակշռում են մինչև 6 տարեկանների մոտ, ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ՝ 6-10 և 11-ից 15 տարեկանների մոտ, իսկ շարժողական ֆունկցիայի խնդիրներն առավել հաճախ են արձանագրվել 16-ից բարձրների մոտ՝ մյուս տարիքային խմբերի հետ համեմատ:

Առավել հաճախ են ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաների խանգարումների գույրողումները՝ 762 երեխաների մոտ: Բավական հաճախ են նաև միաժամանակ ինտելեկտուալ/մտավոր, ձայնի/խոսքի և շարժողական ֆունկցիայի խանգարումների դեպքերը՝ 162 երեխայի մոտ: 101 երեխաների մոտ արձանագրվել է միաժամանակ ինտելեկտուալ/մտավոր, շարժողական և տեսողական ֆունկցիաների խանգարումներ:

ԿԱՊԿ գնահատման արձանագրության ձևը հնարավորություն չի տալիս տեղեկատվություն ստանալու, թե արդյոք գնահատում անցնող երեխաներն ունեն հաշմանդամություն թե ոչ: Հետևաբար, վերլուծության ժամանակ արձանագրված ֆունկցիաների խանգարումների և հաշմանդամության կարգավիճակի միջև համեմատություններ չեն կատարվել: Ուղակի, ելնելով այն ենթադրությունից, որ ցանկացած ֆունկցիայի ծանր և խորը խանգարում ունեցող երեխա կարող է ունենալ հաշմանդամություն, դուրս է բերվել գնահատում անցած երեխաների թվաքանակից հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը: Գնահատման արդյունքում ԿԱՊԿ ունեցող 2754 երեխաներից ֆունկցիայի ծանր և խորը խանգարումներ ունեին 481-ը կամ ԿԱՊԿ ունեցողների 20 տոկոսը: Այսպիսով, 2018 թվականին ԿԱՊԿ գնահատում անցած և ԿԱՊԿ ունեցող ամեն հինգերորդ երեխան հնարավոր է, որ ունի նաև հաշմանդամություն:

ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրության գործող ձևում ինտելեկտուալ/մտավոր, շարժողական և ձայնի/խոսքի ֆունկցիաների համար առանձնացված են ենթակատեգորիաներ, որոնք հնարավորություն են տալիս առավել բացված դիտարկելու, թե հատկապես ինչպիսի դժվարություն ունեն երեխաները: Սակայն արձանագրության ձևը հնարավորություն չի տալիս նշելու ֆունկցիայի խանգարման ենթակատեգորիայի ծանրության աստիճանը: Բնօրինակ արձանագրությունների մեջ մասնագետները բառերով նշում են, թե հիմնականում ինչպիսի խնդիր է արձանագրվում, սակայն այդ տեղեկատվությունը չի մուտքագրվել, քանի որ այն հնարավոր չէր լինի ամփոփել: Եթե յուրաքանչյուր ենթակատեգորիայի համար նշվեր համապատասխան ծածկագիրը և որակիչը, ինչպես դա հնարավոր է, երբ կիրառվում են ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերը, ապա հնարավոր կլիներ ձևավորել ավելի համապարփակ պատկեր, թե հատկապես ինչ աստիճանի դժվարություններ են ունենում ԿԱՊԿ ունեցող երեխաները:

Ֆունկցիայի խանգարումը կարող է հանգեցնել երեխայի մոտ գործունեության և մասնակցության սահմանափակման, սակայն միևնույն աստիճանի նույն ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաները կարող են տարբեր կարողություն ու

կատարողականություն ունենալ և տարբեր աստիճանի միջամտության կարիք, հետևաբար, **ԿԱՊԿ ունեցող երեխաներին ծառայությունների մատուցման և կրթության մեջ նրանց ներառմանը խթանելու հարցում ծառայությունների սահմանման հիմքում ֆունկցիայի խանգարման աստիճանը դնելը շարունակում է պահպանել բժշկական մոդելի կիրառումը:** Բացի այդ, զուգորդված ֆունկցիաների խանգարումներ ունելու դեպքում վերլուծությունը ցույց տվեց, թե ինչպիսի տարբերություններ ունեն երեխաները և որքան կարևոր է նրանց մատուցվող ծառայությունները և միջավայրի հարմարեցման համար հատկացվող ֆինանսական աջակցությունը տրամադրել տարբերակված՝ ելնելով երեխայի կարիքից և նրան կրթելու, ուսման մեջ նրա ակտիվությունն ու մասնակցությունն ապահովելու նպատակներից: ԿԱՊԿ գնահատման արդյունքների ամփոփ արձանագրությունն այդ տարբերակումը ցույց չի տալիս:

ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների 70, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ 90 տոկոսի համար երաշխավորվել է հատուկ մանկավարժի ծառայություններ: Հոգեբանի ծառայությունները հանդիսանում են երկրորդ առավել հաճախ առաջարկվող ծառայությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների համար՝ երեխաների 64 տոկոսի համար առաջարկվում է հոգեբանական աջակցություն: Լոգոպեդի ծառայությունները երրորդ առավել հաճախ երաշխավորվող աջակցությունն են, որ սահմանվում է ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների համար: Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ մասնագետների ծառայություններ երաշխավորվում են նաև այն երեխաների համար ովքեր չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Այս խմբի երեխաների 14 տոկոսի համար երաշխավորվել է հոգեբանի ծառայություններ, իսկ 24 երեխաների՝ լոգոպեդի ծառայություն:

Բացի այդ, թեև արձանագրությամբ առաջարկվում է գնահատում անցած երեխաներին տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և հարմարեցնել հանրակրթական առարկայական ծրագիրն ըստ ԱՌԻՊ-ի՝ 2263 երեխաների կամ 64 տոկոսի համար, այնտեղ չի նշվում, թե հատկապես ինչ նպատակների պետք է հասնել ՄԱՕԱՊ-ով կամ ինչ նպատակով և ինչպես պետք է հարմարեցվի ուսուցման պլանը:

Երեխաներին մատուցվող ծառայությունները պետք է բխեն ֆունկցիոնալության սահմանափակման այն ոլորտից, որը յուրահատուկ է տվյալ երեխային, ինչպես նաև հաշվի առնեն ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը, իսկ կրթության համակարգում պետք է նպաստեն նրա լիարժեք մասնակցությանը սովորելու պրոցեսին: Գնահատման արդյունքների արձանագրման ժամանակ ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի կիրառման շնորհիվ մասնագետները կարողանում են ստանալ այդ ամփոփ պատկերը: 30 երեխաների համար իրականացված ֆունկցիոնալ գնահատման արդյունքների վերլուծությունը ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերով ցույց տվեց, որ ի տարբերություն ԿԱՊԿ արդյունքների ամփոփման գործող ձևաչափի, այս մոտեցման դեպքում մասնագետները ստանում են առավել ընդլայնված պատկեր երեխայի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, առավել արագ են տեսնում դժվարությունների ոլորտն ու ծանրության աստիճանը, կողմնորոշվում ծառայությունների ծավալի վերաբերյալ և հասկանում երեխայի գործունեությանն ու մասնակցությանը նպաստող կամ խոչընդոտող միջավայրային գործոնների ազդեցությունը: Ավելին, միջավայրային գործոնների ազդեցության գնահատման արդյունքների արձանագրումը/դիտարկումն ըստ ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի

հնարավորություն է տալիս տեսնելու, թե հատկապես ինչպիսի ծառայություններն են առավել հրատապ կամ խիստ անհրաժեշտ տվյալ երեխայի համար՝ ապրանքներ ու տեխնոլոգիաներ, թե վերաբերմունքի փոփոխություն, մասնակցությանը նպաստող հարաբերությունների բարելավմանն ուղղված աշխատանք, թե ծրագրային հարմարեցումներ:

Այս վիճակագրական վերլուծական աշխատանքն իրականացնող թիմի հիմնական առաջարկությունն է քայլեր ձեռնարկել, որպեսզի ԿԱՊԿ գնահատման ժամանակ մասնագետների կողմից հավաքագրված ամբողջ տեղեկատվությունը հնարավոր լինի ամփոփել առավել համապարփակ և արագ ընկալելի ու կիրառելի տարբերակով, հիմքում ունենալով ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերն ու որակիչները, որպես մեկ միասնական լեզու բոլոր մասնագետների համար և դպրոցին տրամադրել այնպիսի տեղեկատվություն երեխայի մասին, որը հնարավոր է օգտագործել ապահովելու ուսուցման պրոցեսին երեխայի մասնակցության համար նպաստավոր միջավայր:

Ներածություն

Հայաստանում ներառական կրթության ներդրման, իրականացման և արդյունքների գնահատման վերաբերյալ բազմաթիվ հետազոտական աշխատանքներ են իրականացվել տարբեր միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից³: Այդ հետազոտական և վերլուծական աշխատանքների մեծ մասը հիմք են հանդիսացել համակարգային փոփոխությունների համար: 2014 թվականին փոփոխություններ կատարելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում (ՀՕ-200-Ն), ՀՀ կառավարությունը մեկնարկեց մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրակրթական համակարգում համընդհանուր ներառական կրթության անցման օրակարգը: Համաձայն ՀՀ կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի⁴, մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը աստիճանաբար հատուկ հանրակրթական դպրոցները վերակազմավորվում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: Այդ կենտրոնների առաքելությունն է գնահատել երեխաների կրթության

³ Որոշ, առավել հաճախ հղում արվող աշխատանքներից են՝ [ՅՈՒՆԻՍԵՖ «Խոսքը ներառման մասին է» 2012թ.](#), [«ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում»](#) Բաց հասարակության հիմնադրամներ և Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն 2013թ., [“Approximation of Inclusive Education in Armenia to International Standards and Practices”](#), Բաց հասարակության հիմնադրամներ 2014; [“Equity in secondary schooling outcomes in Armenia: Evidence from a national survey”](#), 2018; Հուլիսի Կամուրջ ՀԿ [«Հայաստանի կրթական համակարգում հաշմանդամություն ունեցող երեխաների անցման խնդիրները»](#), 2015թ; [«Տավուշի մարզի դպրոցների ներառականության գնահատում»](#), 2017թ [«Հայաստանում նախադպրոցական կրթության մատչելիության հետազոտություն»](#) Սեյվ դը Զիլդրեն, 2017; [“Out of School Children in Seven Communities of Shirak Province, Armenia: Summary Report of the Mapping Study”](#), Armenian Caritas, 2017

⁴ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի արձանագրային որոշում՝ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին»

առանձնահատուկ պայմանների կարիքը և աջակցել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին կազմակերպելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունն իրենց հասակակիցների հետ՝ առանց ընտանիքից բաժանվելու անհրաժեշտության:

2018 թվականի դրությամբ, համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդրված էր Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզերում, որտեղ գործում են 11 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ⁵, իսկ նախկին հատուկ դպրոցների աշակերտները տեղափոխվել էին մարզի հանրակրթական դպրոցներ: Այդ երեխաների կրթությունը կազմակերպելու համար միաժամանակ ներդրվել է ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի: Հաշվետվությունը գրելու պահին ներառական կրթություն էր իրականացվում 1 042 դպրոցում, իսկ ԿԱՊԿ ունեցող աշակերտների թիվը մոտ 6 153 էր (աղյուսակ 1):

Աղյուսակ 1: Հայաստանի Հանրապետությունում ներառական դպրոցների ու ԿԱՊԿ ունեցող աշակերտների թվաքանակը 2019 թվականի մայիսի դրությամբ

	Ընդամենը դպրոցների քանակը	Ներառական կրթությամբ դպրոցների քանակը	Տոկոսն ընդհանուրի մեջ	Աշակերտների թիվը	ԿԱՊԿ ունեցող	Տոկոսն ընդհանուրի մեջ	ԿԱՊԿ աշակերտների թիվը 1 դպրոցի հաշվով
Արագածոտն	121	121	100%	1,707	110	6.4%	1
Արարատ	112	24	21%	33,306	473	1.4%	20
Արմավիր	120	120	100%	34,900	694	2.0%	6
Գեղարքունիք	126	6	5%	28,518	189	0.7%	32
Երևան	253	220	87%	121,809	1,100	0.9%	5
Լոռի	163	165	101%	30,370	923	3.0%	6
Կոտայք	101	11	11%	35,449	283	0.8%	26
Շիրակ	166	164	99%	30,619	1216	4.0%	7
Սյունիք	117	117	100%	16,448	442	2.7%	4
Վայոց Ձոր	48	14	29%	6,390	162	2.5%	12
Տավուշ	82	80	98%	16,134	561	3.5%	7
Ընդամենը	1,409	1042	74%	355,650	6,153	1.7%	6

Աղբյուրը՝ ՀՀ-ում դպրոցների և սովորող աշակերտների թվաքանակի մասով՝ <https://emis.am/map/>; ԿԱՊԿ ունեցող երեխաների ու ներառական դպրոցների մասով՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, տոկոսների ու գործակցի հաշվարկը՝ Ի. ԷՍ. ԱՅ. խորհրդատվական ընկերություն

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար երեխայի և նրա ընտանիքի մասին հավաքագրվում է հսկայական ծավալի տեղեկատվություն՝

⁵ Տավուշի մարզում՝ Բերդի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Իջևանի ՏՄԱԿ-ները, Սյունիքում՝ Միսիանաի, Գորիսի և Կապանի ՏՄԱԿ-ները, Լոռիում՝ Ստեփանավանի/Տաշիրի, Ալավերդու/Թումանյանի, Վանաձորի, և Սպիտակի ՏՄԱԿ-ները:

դիտարկումների, հարցազրույցների, և մասնագիտական քննարկումների արդյունքում:⁶ Ձեռք բերված տեղեկատվությունը ամփոփվում է արձանագրության մեջ և հիմք է հանդիսանում որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով (կամ դրանցով) պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Նախատեսվում է, որ գնահատման արդյունքում պետք է սահմանվեն.

1. երեխայի կրթության առանձնահատուկ պայմանները, այն է, ինչպիսի ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումների կարիք ունի երեխան կրթություն ստանալու համար,
2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրագույն չափաքանակ տրամադրելու հիմքերը, այն է, թե որքան լրացուցիչ ֆինանսավորում է անհրաժեշտ երեխայի կրթությունը կազմակերպելու համար,
3. մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը, այն է, որ մասնագետների, ինչպիսի հաճախականությամբ ծառայությունների կարիք ունի երեխան:

Սակայն մինչ այժմ երբևէ փորձ չի կատարվել վերլուծելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում անցած երեխաների բնութագրիչները՝ ի՞նչ տարիքի են հիմնականում, տղաներն են առավել հաճախ ունենում ԿԱՊԿ թե՞ աղջիկները, ո՞ր մարզերում են գերակշռում ԿԱՊԿ ունեցող երեխաները, ո՞ր դպրոցներ են հաճախում, ինչպիսի՞ միջավայրային հարմարեցումների և աջակցող սարքերի կարիք ունեն կրթություն ստանալու համար, ի՞նչ ծառայություններ են ստանում և ի՞նչ արդյունքներ են արձանագրում, արդյո՞ք ստանում են իրենց երաշխավորված ծառայությունները սահմանված չափով, թե՞ կան ծառայություններ որոնք առկա չեն տվյալ մարզում կամ Հայաստանում ընդհանրապես և այլ հարցեր, որոնք պետք է լինեն իրազեկված որոշումների կայացման հիմքում՝ ապահովելու երեխաներին մատուցվող ծառայությունների որակը, կրթության մեջ նրանց իսկական ներառումը և բարեփոխումների հաջողությունը:

ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին ամփոփ վիճակագրություն ունենալու փորձ կատարվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից (ԿՏԱԿ)՝ 2016-2017 թվականներին՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» Հուլիսի Կամուրջ հասարակական կազմակերպության աջակցությամբ ձևավորելով առանձին մոդուլ՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և արձանագրման համակարգ»: Տեղեկատվական համակարգ տեղեկատվություն մուտքագրում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի հրամանով հաստատված «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ»-ի 22 կետի՝ «Երեխաների մասին թե՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, թե՛ ծառայությունների տրամադրման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը Տարածքային կենտրոնի համապատասխան աշխատակիցը մուտքագրում է

⁶ ՀՀ ԿԳՆ նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրամանով հաստատված «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը»

Հանրապետական կենտրոնի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների բազա:»:

Տեղեկատվական համակարգում նախատեսված է հնարավորություն տեղեկատվություն ստանալու ըստ մարզերի, երեխաների տարիքի և սեռի, ԿԱՊԿ կարիքի տեսակի. խորության, երեխայի հաշմանդամության կարգավիճակի: Մակայն, համակարգում առկա է տեղեկատվություն միայն 1854 երեխաների մասին <https://cde.emis.am/reports>: ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին ոչ մի պաշտոնական տեղեկատվություն հրապարակայնորեն առկա չէ. ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող տեղեկատվությունը հանրակրթական ուսումնական հաստատությունների վերաբերյալ չի ներկայացնում ոչ մի տվյալ ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին:

Տեղեկատվության այդ բացը, որոշ չափով լրացնելու նպատակով «Ի. ԷՍ. ԱՅ. » Խորհրդատվական խումբը՝ Հանրապետական մանկավարժաժողովրդական կենտրոնի հետ համատեղ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանի գրասենյակի ֆինանսավորմամբ իրականացվող «Հաշմանդամության սահմանման գործիքների ու մեթոդաբանության ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների մասին միջոլորտային տեղեկատվության փոխանակման և տվյալների կառավարման համակարգի ձևավորում» ծրագրի շրջանակներում, նախաձեռնեց վերլուծել 2018 թվականի ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում անցած երեխաների գնահատման արդյունքները, որոնք ամփոփված են ԿԱՊԿ տարածքային մակարդակի գնահատման արձանագրություններում:

Վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների ֆունկցիոնալ խնդիրների մասին՝ ըստ ժողովրդագրական առանձնահատկությունների, աշխարհագրության և երաշխավորված ծառայությունների, նկատելու այն սահմանափակումները, որ առաջանում են ԿԱՊԿ կարիքի գնահատման արդյունքների արձանագրության ձևաչափով պայմանավորված և ձևավորելու առաջարկություններ ԿԱՊԿ գնահատման արդյունքների գրանցման և ամփոփման նոր ձևաչափի համար:

Վերլուծությունն իրականացնող թիմն ակնկալում է, որ այս վերլուծության արդյունքներն օգտակար կլինեն երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և համապատասխան ծառայությունների ապահովման համար քաղաքականություն մշակողների և իրականացնողների համար և կխթանեն նման տեղեկատվություն ստանալու և կիրառելու մշակույթի ձևավորմանը:

Մեթոդաբանությունը

Այս վերլուծական աշխատանքի մեթոդաբանությունը ձևավորվել է Հանրապետական մանկավարժապետական կենտրոնի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանի գրասենյակի թիմի հետ համատեղ քննարկումների արդյունքում:

Վերլուծության նպատակն ու առարկան

Սույն վերլուծությունը նպատակ ունի ամփոփելու մեկ տարվա ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում անցած երեխաների մասին վիճակագրությունը, առաջին անգամ վերհանելով ԿԱՊԿ ունեցող երեխաների հիմնական բնութագրիչներն ու առանձնահատկություններն ըստ սեռի, տարիքի և աշխարհագրության, ունենալու միասնական պատկեր, թե հիմնականում ինչպիսի ֆունկցիայի խանգարումներ են գերակշռում ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ, ինչ ծառայություններ են երաշխավորվում այդ երեխաներին:

ԿԱՊԿ գնահատման գործընթացի ընթացքում հավաքագրվող տեղեկատվության և կարիքի արձանագրման համար օգտագործվող տեղեկատվության անհամապատասխանությունը բազմիցս քննարկվել է մասնագետների և փորձագետների շրջանում. ՏՄԱԿ-ների կողմից ԿԱՊԿ գնահատման համար կիրառվող գործիքակազմը նպատակ ունի վերհանելու երեխաների ֆունկցիոնալության՝ կարողությունների ու կատարողականի, գործունեության (երեխաների պարագայում՝ սովորելու) և մասնակցության դժվարություններն ու սահմանափակումները, իսկ ԿԱՊԿ արձանագրության մեջ նշվում են միայն 5 հիմնական ֆունկցիաների՝ տեսողական, լսողական, շարժողական, ձայնի/խոսքի և մտավոր/ինտելեկտուալ, խանգարումների աստիճանը: Դա բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջից, ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար բարձրացված չափաքանակով ֆինանսավորման հատկացման շեմերի որոշման համար: Հանդիսանալով օբյեկտիվ գործոն կանխելու մեկ աշակերտի հաշվով ավելի բարձր ֆինանսավորում ստանալու հանրակրթական դպրոցների և գնահատող կենտրոնների կողմից հնարավոր չարաշահումները⁷, այդ մոտեցումը միևնույն ժամանակ հակասում է ԿԱՊԿ գնահատման գործընթացում որդեգրած սոցիալական մոդելին⁸, երբ շեշտը պետք է դրվի ոչ թե երեխայի ախտորոշման՝ ֆունկցիայի խանգարումների, այլ նրա կարողությունների ու կատարողականի՝ ֆունկցիոնալության գնահատման վրա: Բացի այդ, միայն ֆունկցիայի խանգարումը դիտարկելը դուրս է թողնում առանց ֆունկցիայի խանգարում ունենալու ուսման դժվարություններ ունեցող երեխաներին, ինչպես նաև քրոնիկ հիվանդություն ունեցող երեխաներին, ում առողջական խնդիրն այդ նշված հինգ ֆունկցիաների վրա չի ազդել, սակայն դժվարություններ է ստեղծում ուսման պրոցեսում երեխայի լիարժեք

⁷ <https://transparency.am/files/publications/1494939660-0-159751.pdf>

⁸ 2014 թվականի հունվարի 9-ի ՀՀ կառավարության նիստի N 1 Արձանագրությունից քաղվածք «Անձի բազմակողմանի գնահատման՝ առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման» հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին <http://www.irtek.am/views/act.aspx?aid=75623>

մասնակցության համար: Որպես հարցի լուծում, ԿԱՊԿ գնահատման արձանագրության մեջ գնահատող մասնագետները՝ նշված 5 ֆունկցիաների խանգարումների նկարագրության ներքո շարադրում են երեխաների ֆունկցիոնալության սահմանափակումները, պայմանավորված առողջական խնդրով կամ միջավայրային գործոններով: Բացի այդ գնահատման արդյունքում կազմվում է երեխայի ֆունկցիոնալության նկարագիրը: Այս հակասության բացասական արդյունքը նաև այն է, որ գնահատման արդյունքների գրանցման գործընթացում դուրս մղվեց երեխաների ԿԱՊԿ գնահատման արդյունքների փոխանակման միջազգային առաջադեմ մոտեցումը՝ Առողջապահության Միջազգային Կազմակերպության Ֆունկցիաների, հաշմանդամության և առողջության դասակարգչի (ԱՀԿ ՖՄԴ) ծածկագրերի կիրառումը: Մինչդեռ այն 2014 թվականին ընդունվել է որպես երկրում պետական ստանդարտ՝ առողջապահության, սոցիալական և կրթության բնագավառներում կարիքների գնահատման և տեղեկատվության փոխանակման միասնական լեզու կիրառելու համար⁹: 2014 թվականից ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրն ու ՅՈՒՆԻՍԵՖ—ի Հայաստանի գրասենյակն աջակցում են ՀՀ կառավարությանը ներդնելու հաշմանդամության սահմանման և հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում երեխաների կարիքների բազմակողմանի գնահատման իրավունքի վրա հիմնված նոր մոդելը, որը բխում է ԱՀԿ ՖՄԴ գաղափարախոսությունից: 2018 թվականին այդ նախաձեռնության շրջանակում ձևավորված միջգերատեսչական աշխատանքային խումբը, սերտ համագործակցելով ԵՄ [SOCIEUX+](#) ծրագրի ֆինանսական աջակցությամբ հրավիրված միջազգային փորձագետների հետ, մշակեցին 0-18 տարեկան երեխաների ֆունկցիոնալության սահմանափակման ֆոկուս արձանագրություններ, ըստ տարիքային խմբերի և հաշմանդամության տեսակների: 2018 թվականին առաջարկվող հարցաշարերը փորձարկվել և լրամշակվել են 30 երեխաների կարիքների գնահատման ժամանակ:

Վերլուծության շրջանակում փորձ է կատարվել համադրելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդային մակարդակի գնահատման արձանագրության հիման վրա հավաքագրվող տեղեկատվությունը վերը նշված ֆոկուս արձանագրությունների միջոցով ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի կիրառմամբ տեղեկատվության արձանագրման հետ, տալով առաջարկություններ երկու մոտեցումների դրական և բացասական կողմերի մասին:

Վերլուծության շրջանակն ու չափանիշները

Վերլուծությունը հիմնված է 2018 թվականի ընթացքում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացված երեխաների ֆունկցիոնալ գնահատման արդյունքների վրա: Վերլուծության համար առանձին ընտրանք չի ձևավորվել, դիտարկվել են մեկ տարվա ընթացքում իրականացված բոլոր գնահատումները՝ ընդհանուր պատկեր ստանալու համար: Հետևաբար, ըստ մարզերի

⁹ Հայաստանի հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 19 դեկտեմբերի 2014 թվականի N 1139-Ն հրամանը «Հայաստանի հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «ֆունկցիոնալության, հաշմանդամության եվ առողջության դասակարգիչ» հաստատելու մասին <http://www.irtek.am/views/act.aspx?aid=79110>

բաշխվածությունը, ինչպես նաև երեխաների սեռատարիքային կազմը արտացոլում է փաստացի տարվա ընթացքում գնահատում անցած երեխաների բնութագրիչները:

Լրացուցիչ վերլուծվել են ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի կիրառմամբ մշակված ֆոկլուս արձանագրություններով 2018 թվականի ընթացքում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացրած 30 երեխաների ֆունկցիոնալ գնահատման արդյունքները:

Վերլուծության առաջին մասում ամփոփ ներկայացված են ԿԱՊԿ գնահատում անցնող երեխաների ժողովրդագրական պատկերը, ըստ գնահատման տեսակի և գնահատման արդյունքի: Երկրորդ մասում վերլուծվել են երեխաների մոտ արձանագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը պայմանավորող ֆունկցիաների խանգարումները և այդ խանգարումների զուգորդումները: Երրորդ մասում դիտարկված են ֆունկցիաների խանգարումներն ըստ ծանրության աստիճանի և ենթակատեգորիաների, իսկ չորրորդ բաժինը ներկայացնում է այն ծառայությունները, որոնք առաջարկվել են ԿԱՊԿ ունեցող երեխաներին: Հինգերորդ բաժնում վերլուծվել և համադրվել են գնահատման արդյունքների գրանցման երկու մոտեցումների դեպքում ստացված տեղեկատվությունը:

Տվյալների հավաքագրման մեթոդները, հետազոտական էթիկայի սկզբունքները և հիմնական սահմանափակումները

Հատուկ այս վերլուծության համար տվյալներ չեն հավաքագրվել: Վերլուծության համար օգտագործվել են Հանրապետական և տարածքային 11 մանկավարժահոգեբանական կենտրոնների կողմից 2018 թվականի ընթացքում իրականացված ԿԱՊԿ գնահատումների արդյունքում ստացված տվյալները:

Վերլուծությունն իրականացնելու նպատակով մշակվել է Excel ձևաչափով տեղեկատվական ֆայլ, որտեղ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից մուտքագրվել է 2018 թվականի ընթացքում ԿԱՊԿ գնահատում անցած 3513 երեխաների վերաբերյալ կազմված արձանագրությունների տեղեկատվությունը և ապանձնավորված ֆայլը տրամադրվել է հետագա վերլուծության համար:

Նմանապես առանձին Excel ձևաչափով տեղեկատվական ֆայլ է մշակվել ԱՀԿ ՖՄԴ հիման վրա մշակված ֆոկլուս արձանագրությունների միջոցով արձանագրված ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների մասին տեղեկատվությունը մուտքագրելու համար:

Ապահովելով երեխաների մասին անհատական տեղեկատվության պահպանման գաղտնիությունը, երկու ֆայլերը վերլուծության համար տրամադրվել են առանց որևէ անձնական տվյալների, որոնցով հնարավոր է նույնականացնել երեխաներին: Տեղեկատվական ֆայլերում մուտքագրվել են միայն երեխաների սեռը, տարիքը և մարզը, ինչպես նաև գնահատման արդյունքներն ըստ արձանագրությունների:

Վերլուծության հիմնական սահմանափակումն այն է. որ Տավուշի մարզից Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը ստացել և մուտքագրել է միայն Նոյեմբերյանի և Բերդի ՏՄԱԿ-ների կողմից իրականացված գնահատումների տվյալները: Դիլիջանի և Իջևանի ՏՄԱԿ-ները հրաժարվել են ներկայացնել իրենց կողմից

իրականացված գնահատումների արձանագրությունների պատճենները, պարզաբանելով, որ երրորդ կողմին տեղեկատվություն տրամադրելու իրավունք չունեն: Այս հանգամանքը մտահոգիչ է նաև այն առումով, որ խախտվում է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կանոնադրությամբ վերապահված գործառույթի իրականացումը՝ «3) տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքների համակարգումը. 4) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական աշխատանքների իրականացումը. 5) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների բազայի ստեղծումը, տվյալների վերլուծությունն ու քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ առաջարկությունների տրամադրումը»¹⁰: Հետևաբար, 4000 երեխաների տվյալների փոխարեն վերլուծվել է 3513 երեխաների մասին տեղեկատվությունը: Բացի այդ, ըստ սեռի բաշխվածությունն առկա չէր Բերդի կողմից ՀՄԿ-ին տրամադրած տեղեկատվության մեջ և այդ տարածաշրջանը չի ներառվել վերլուծության այդ հատվածում:

¹⁰ ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1058-Ն որոշման Հավելվածներ N 1 և N 2:


ԿԱՊԿ գնահատման արդյունքները թվերով

2018 թվականի ընթացքում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և 11 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից իրականացվել է մոտ 4000 ԿԱՊԿ գնահատում: Վերլուծության համար Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը կարողացել է մուտքագրել և տրամադրել միայն 3513 երեխաների մասին տեղեկատվությունը:


1. Գնահատում անցած երեխաների ժողովրդագրական պատկերը

Գնահատում անցած 3513 երեխաներից կեսից ավելին՝ 51,5 տոկոսը 6-10 տարեկան էին, իսկ 43,4 տոկոսը 11-ից 15 տարեկան: Գնահատում անցած երեխաների թվում ավագ դպրոցում սովորողները կազմել են 4,3 տոկոս, իսկ մինչև 6 տարեկանները եղել են 28 երեխա: Ըստ տարիքի գերակշռել են 10-ից 11 տարեկանները: Ընդհանուր առմամբ գնահատումների երկու երրորդը բաժին է ընկնում տարրական դպրոցին:

Գծապատկեր 1: Գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ տարիքի, տոկոս




Գծապատկեր 2: Գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի, տոկոսն ընդհանուրի մեջ




Ըստ սեռի գնահատում անցած երեխաների բաշխվածությունը դիտարկվել է առանց Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի, քանի որ ստացված տեղեկատվությունում

երեխաների սեռի մասին նշումները բացակայում էին: Այսպիսով, 3477 երեխաներից 68,7 տոկոսը կամ 2387-ը տղաներ էին: Ընդ որում, տղաները գերակշռում էին բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ մինչև 6 տարեկանների տարիքային խմբի, որտեղ հավասարապես գնահատվել են նաև աղջիկները (գծապատկեր 4): Ընդ որում, հարկ է նշել, որ տարիքային խմբերի տարբերությունն ըստ սեռերի գրեթե չի նկատվել (գծապատկեր 5). թե՛ տղաների և թե՛ աղջիկների շրջանում գերակշռում են 6-10 տարեկանները (53 և 50 տոկոս համապատասխանաբար), ապա 11-ից 15 տարեկանները՝ 43 և 44 տոկոս համապատասխանաբար: Շատ չնչին տարբերությունն նկատվել է բարձր տարիքային խմբի համար, որը աղջիկների շրջանում մի փոքր ավելի էր՝ 5,4 տոկոս, քան տղաների դեպքում՝ 3,7 տոկոս (գծապատկեր 5):


Գծապատկեր 3: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ սեռի, տոկոսն ընդհանուրի մեջ



Գծապատկեր 4: Երեխաների բաշխվածությունն ըստ սեռի և տարիքային խմբերի, տոկոսը տվյալ տարիքային խմբում




Գծապատկեր 5 Տարիքային խմբերի բաշխվածությունն ըստ սեռի




Ըստ մարզերի բաշխվածությունը ցույց է տալիս, որ 2018 թվականին հիմնական գնահատումներն իրականացվել են Երևանում, Արմավիրում, Լոռիում և Շիրակում: Ընդ որում, Արմավիրում, Լոռիում՝ պայմանավորված հատուկ դպրոցների վերակազմավորման գործընթացով, իսկ Երևանում և Շիրակում՝ ներառական կրթություն կազմակերպող դպրոցների առավել լայն ցանցով, քանի որ վերագնահատումների կեսից ավելին բաժին է ընկել Շիրակին և Երևանին: Արագածոտնում գնահատվել է երեք երեխա, բոլորն էլ 6-10 տարեկանների խմբում, երկու աղջիկ և մեկ տղա:

Գծապատկեր 6: Գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ մարզերի, տոկոս




Տղաները գերակշռել են բոլոր մարզերում, բացառությամբ Արագածոտնի մարզի:

Գծապատկեր 7: Գնահատում անցած երեխաների բաշխվածությունն ըստ սեռի և մարզի, տոկոս



Տարիքային խմբերի բաշխվածության պատկերն ըստ մարզերի նույնպես հետաքրքիր միտումներ է ցույց տալիս. Արագածոտն, Կոտայք և Սյունիք մարզերում գերազանցապես գնահատվել են 6-10 տարեկանները; Տավուշում՝ գերակշռել են 11-15 տարեկանները, Երևանում և Լոռիում գրեթե հավասարապես են բաշխվել 6-10 և 11-15 տարեկանները, իսկ բարձր տարիքի երեխաները հիմնականում գնահատվել են Վայոց Ձորում, Տավուշում, Լոռիում և Արարատում:


Գծապատկեր 8: Գնահատում անցած երեխաների բաշխումն ըստ մարզի և տարիքային խմբերի. տոկոս



Երեխաների գերակշռող մասը՝ 86,6 տոկոսն անցել էր գնահատում առաջին անգամ: Վերագնահատում անցել էր երեխաների 13,4 տոկոսը. վերագնահատում անցած երեխաների 60 տոկոսը՝ 11-15 տարեկաններ էին և 67 տոկոսը տղաներ: Վերագնահատումները հիմնականում իրականացվել են Շիրակի մարզում՝ 33 տոկոսը, Երևանում՝ 21 տոկոսը, և Սյունիքում՝ 18 տոկոսը և բաժին են ընկել հիմնականում 11-15 տարեկանների խմբին՝ 60,4 տոկոս: Սակայն, հետաքրքրական է, որ վերագնահատումներ

իրականացվել են նաև մինչև 11 տարեկանների շրջանում, ինչպես նաև առաջին անգամ գնահատում անցել են միջին և ավագ դպրոցի երեխաները ևս:


Գծապատկեր 9: Գնահատման տեսակներն ըստ տարիքային խմբերի, տոկոս



2. Արձանագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները

2018 թվականի ընթացքում գնահատում անցած 3513 երեխաներից ԿԱՊԿ արձանագրվել է 2754 երեխաների մոտ՝ կամ գնահատում անցածների 78,4 տոկոսի մոտ: Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից իրականացվում է երկրորդ մակարդակի գնահատում: Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ինչպես առաջին անգամ, այնպես էլ վերագնահատումների դեպքում երկրորդ մակարդակի գնահատում անցած երեխաների գերակշռող տոկոսի համար ճանաչվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Վերագնահատման արդյունքում, այսինքն հիմնականում այն դեպքերում երբ մասնագետները աշխատել են երեխաների հետ, ամեն չորրորդ երեխայի մոտ հաղթահարվում է ֆունկցիոնալ դժվարությունը և երեխաները կարողանում են սովորել առանց լրացուցիչ մասնագիտական աջակցության:


Գծապատկեր 10: Գնահատման եզրակացությունն ըստ գնահատման տեսակի, տոկոս



Հետաքրքրական է, որ և առաջին անգամ և վերագնահատման դեպքում ԿԱՊԿ չճանաչելու դեպքերը ավելի հաճախ են լինում Շիրակի մարզում՝ ամեն երրորդ

գնահատումը առաջին գնահատման ժամանակ և գրեթե 45 տոկոս՝ վերագնահատման ժամանակ: Լոռու մարզում ևս ամեն երրորդ առաջնակի գնահատման ժամանակ ԿԱՊԿ չի արձանագրվում, սակայն վերագնահատման ժամանակ առաջընթաց ունեցող երեխաների մասնաբաժինը կամ ԿԱՊԿ չճանաչելու դեպքերը կազմում են 17 տոկոս: Տավուշի մարզում գրանցվել է դրական առաջընթացի առավել բարձր տոկոս՝ Շիրակի մարզից հետո, այստեղ վերագնահատում անցնող երեխաների 42,3 տոկոսի համար ԿԱՊԿ չի ճանաչվել: Սյունիքի մարզում ԿԱՊԿ հաղթահարման տեսանկյունից դրական արդյունք գրանցվել է ամեն չորրորդ երեխայի համար: Երևանում գրեթե բոլոր գնահատում անցնող երեխաների մոտ արձանագրվում է ԿԱՊԿ՝ և առաջին անգամ և վերագնահատման ժամանակ, Արարատի մարզում վերագնահատում անցած բոլոր երեխաների մոտ արձանագրվում է ԿԱՊԿ::

Գծապատկեր 11: Կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի արձանագրման հաճախականությունն ըստ գնահատման տեսակի և և մարզերի, տոկոս գնահատումների մեջ




Գնահատում անցնող երեխաների համար որոշվում է, թե հատկապես որ ֆունկցիայի խանգարման արդյունքում նրանք ունեն աջակցության կարիք, այսինքն կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը հետևյալ հինգ ֆունկցիաներից որում առկա խնդրով է պայմանավորված.

1. ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ
2. տեսողության ֆունկցիաներ
3. լսողության ֆունկցիաներ
4. շարժողական ֆունկցիաներ
5. ձայնի և խոսքի ֆունկցիաներ


Գնահատում անցած երեխաների կեսից մի փոքր ավելին ուներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք միայն մեկ ֆունկցիայի խանգարման արդյունքում: Երկու ոլորտում խանգարումներ և ԿԱՊԿ ունի երեխաների 39 տոկոսը: Երեխաների 1,5 տոկոսն ունի միաժամանակ 4 ոլորտում ֆունկցիայի խանգարում և աջակցության կարիք:

Գծապատկեր 12: Երեխաների բաշխվածությունն ըստ ԿԱՊԿ ոլորտների քանակի, տոկոս



Երեխաների 83 տոկոսի մոտ արձանագրվել է ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների խանգարում, հաջորդ առավել հաճախ հանդիպող սահմանափակումը ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարումներն են՝ 48 տոկոս: Ամեն 10-րդ երեխա ունի շարժողական ֆունկցիայի հետ կապված խնդիր: Տեսողության և լսողության խնդիրներն առավել քիչ տոկոս են կազմում՝ 8 և 4 տոկոս համապատասխանաբար:


Գծապատկեր 13: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը պայմանավորող ֆունկցիաները գնահատում անցած երեխաների շրջանում, տոկոս



ԿԱՊԿ արձանագրվել է 1910 տղաների (գնահատում անցած տղաների 80 տոկոսի) և 825 աղջիկների (գնահատում անցածների 76 տոկոսի) մոտ: Ըստ սեռի, ֆունկցիաների խանգարման պատկերը գրեթե նույնն է, սակայն աղջիկների մոտ մի փոքր առավել հաճախ են հանդիպում շարժողական, տեսողական և լսողական ֆունկցիաների խնդիրները:


Գծապատկեր 14: Արձանագրված ԿԱՊԿ տեսակների հաճախականությունն ըստ սեռի

Արձանագրված ԿԱՊԿ տեսակների հաճախականությունն ըստ սեռի



Ըստ տարիքային խմբերի ֆունկցիայի խանգարումների տարբերությունն ավելի ակնհայտ է. ձայնի/խոսքի խնդիրները գերակշռում են մինչև 6 տարեկանների մոտ, ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ՝ 6-10, 11-15 և 16-ից բարձր տարիք ունեցող երեխաների մոտ, իսկ շարժողական ֆունկցիայի խնդիրներն առավել հաճախ են արձանագրվել 16-ից բարձրերի մոտ՝ մյուս տարիքային խմբերի հետ համեմատ: Միևնույն ժամանակ, բոլոր տարիքային խմբերի մոտ ֆունկցիայի խանգարումների բաշխվածությունը նման է միջին պատկերին՝ բոլոր տարիքների համար հիմնական խնդիրները ինտելեկտուալ/մտավոր և խոսքի/ձայնի ֆունկցիաների հետ կապված խնդիրներն են:

Գծապատկեր 15: Արձանագրված ԿԱՊԿ տեսակն ըստ տարիքային խմբերի



2.1 Արձանագրված ֆունկցիայի խանգարումների զուգորդումները

Ինչպես նշվեց, ԿԱՊԿ ունեցող երեխաների 55,6 տոկոսը կամ 1531 երեխա ունի ֆունկցիոնալ խանգարում միայն մեկ ոլորտում, նրանց մեջ գերակշռում են

ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցողները՝ 1122 երեխա: Միայն ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարում ունի 238 երեխա կամ միայն մեկ ոլորտում խնդիր ունեցողների 15,5 տոկոսը: Միայն տեսողական, լսողական կամ շարժողական ֆունկցիաների խանգարումներ արձանագրվել են համապատասխանաբար երեխաների 6, 4 և 1 տոկոսի մոտ: Սակայն միևնույն ժամանակ երեխաների 44 տոկոսի մոտ արձանագրվել են զուգորդված կամ բազմակի ֆունկցիաների խանգարումներ: Գրեթե բոլոր երեխաները, ովքեր ունեն մեկից ավելի ֆունկցիայի խանգարում, ունեն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խնդիրներ: Ձայնի/խոսքի և շարժողական ֆունկցիաների խանգարումներ արձանագրվել են գրեթե բոլոր երեխաների մոտ ովքեր ունեն միաժամանակ 4 ֆունկցիայի խանգարում:

Աղյուսակ 2: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաշխումն ըստ արձանագրված ֆունկցիայի խանգարման տեսակների քանակի, տոկոսը տվյալ խմբի մեջ

	1 ֆունկցիայի խանգարում (N=1531)	2 ֆունկցիայի խանգարում (N=931)	3 ֆունկցիայի խանգարում (N=251)	4 ֆունկցիայի խանգարում (N=41)
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	73%	94%	98%	100%
Տեսողության ֆունկցիաներ	6%	7%	16%	76%
Լսողության ֆունկցիաներ	1%	3%	20%	29%
Շարժողական ֆունկցիաներ	4%	10%	70%	95%
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	16%	87%	96%	100%


Երեք ֆունկցիաներում միաժամանակ խանգարումներ արձանագրվել են 251 երեխաների մոտ, կամ գնահատում անցած երեխաների 7 տոկոսի մոտ: Նրանք կազմում են ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ 10 տոկոսը: Այս երեխաների մեծ մասը՝ 64 տոկոսը տղաներ են, հավասարապես 6-10 և 11—15 տարիքային խմբերից, հիմնականում Երևանից՝ 49,4 տոկոս, ամեն հինգերորդը Արմավիրի մարզից է և ամեն 10-րդը՝ Լոռու մարզից: Նրանց գերակշիռ մասը՝ 83 տոկոսը գնահատում անցնում էր առաջին անգամ:

Չորս ֆունկցիաներում միաժամանակ խանգարումներ արձանագրվել է 41 երեխաների մոտ, նրանք հիմնականում Երևանից են՝ 25 երեխա կամ 61 տոկոսը, 6-10 և 11-15 տարիքային խմբերից՝ 32 և 61 տոկոս համապատասխանաբար, մեծ մասը տղաներ են՝ 61 տոկոս և գնահատում անցնում էին առաջին անգամ՝ 33 երեխա կամ 80 տոկոսը:

Գծապատկեր 16-ը ցույց է տալիս ֆունկցիաների զուգորդման դեպքերի հաճախականությունը: Առավել հաճախ են ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաների խանգարումների զուգորդումները՝ 762 երեխաների մոտ: Բավական հաճախ են նաև միաժամանակ ինտելեկտուալ/մտավոր, ձայնի/խոսքի և շարժողական ֆունկցիայի խանգարումների դեպքերը՝ 162 երեխայի մոտ: 10 երեխաների մոտ արձանագրվել է միաժամանակ ինտելեկտուալ/մտավոր, շարժողական և տեսողական

ֆունկցիաների խանգարումներ: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների բաշխումն ըստ արձանագրված ֆունկցիայի խանգարման և ֆունկցիաների խանգարումների զուգորդումների մանրամասն ներկայացված է Հավելված 2-ում: Գծապատկեր 16-ում նույն տեղեկատվությունը ներկայացնում է ավելի պատկերավոր ձևով:

Գծապատկեր 16: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ արձանագրված ֆունկցիաների խանգարումների զուգորդումների, ըստ ֆունկցիայի խանգարումների, զուգորդման տեսակների և երեխաների թվի



ԿԱՊԿ գնահատման արձանագրության գործող ձևը հնարավորություն չի տալիս տեղեկատվություն ստանալու թե արդյոք գնահատում անցնող երեխաներն ունեն հաշմանդամություն թե ոչ: Հետևաբար, վերլուծության ժամանակ արձանագրված ֆունկցիաների խանգարումների և հաշմանդամության կարգավիճակի միջև համեմատություններ չեն կատարվել:

3. Արձանագրված ֆունկցիայի խանգարումներն ըստ ծանրության աստիճանի և ենթակատեգորիաների

Արձանագրված յուրաքանչյուր ֆունկցիայի խանգարման համար գնահատող մասնագետները նշում են նաև խանգարման ծանրության աստիճանը, որը սահմանվում է ըստ հետևյալ մակարդակների՝

- **թեթև**, երբ ֆունկցիայի խանգարում արձանագրվել է, սակայն այն չի անդրադառնում երեխայի կրթական գործունեության վրա, բայց պահանջում է որոշակի հսկողություն և տարբերակված մոտեցում դասի բովանդակության մատուցման ժամանակ, ապահովելու երեխայի ակտիվ մասնակցությունը և

առաջադիմությունը: Թեթև խանգարման պարագայում երեխայի կրթության կազմակերպման համար բարձրացված չափաքանակով ֆինանսավորում չի նախատեսվում¹¹:

- **միջին**, երբ արձանագրված ֆունկցիայի խանգարման պարագայում երեխային պետք է ցուցաբերվի որոշակի մասնագիտական աջակցություն, հարմարեցված նյութեր և տեխնոլոգիաներ և կարիքին համապատասխանեցվի ուսուցումը: Միջին խանգարումների պարագայում նախատեսվում է ֆինանսավորման բարձրացված չափաքանակ՝ սահմանված գումարի 0,97 գործակցի չափով:
- **ծանր**, երբ երեխայի մոտ արձանագրված ֆունկցիայի խանգարումները բավական սահմանափակում են երեխայի ինքնուրույն կենսագործունեությունը և պահանջում են բավական ինտենսիվ մասնագիտական մանկավարժական միջամտություն և միջավայրային հարմարեցումներ նրա կրթության կազմակերպման համար. կարող են պահանջվել հարմարեցված իրեր, մատչելի գրականություն, ուսուցման նյութեր և այլ պայմաններ: Միջին խանգարումների պարագայում նախատեսվում է ֆինանսավորման բարձրացված չափաքանակ՝ սահմանված գումարի 100 տոկոսի չափով:
- **խորը** ֆունկցիայի խանգարումը նշանակում է, որ տվյալ ֆունկցիան ամբողջությամբ բացակայում է, օրինակ երեխան չունի տեսողություն, չունի խոսք, ձայն կամ բացարձակապես չի կարողանում լսել, քայլել և այլն: Այս պարագայում երեխային մշտապես պետք է աջակցություն նրա կրթությունը կազմակերպելու համար: Այդ աջակցությունը կարող է լինել մասնագիտական մանկավարժական միջամտության տեսքով, ինչպես նաև միջավայրի հարմարեցման կամ սարքերի, սարքավորումների, աջակցող տեխնոլոգիաների տրամադրման միջոցով: Խորը ֆունկցիայի սահմանափակման պարագայում երեխայի կրթության կազմակերպման համար հատկացվող բարձրացված չափաքանակը հաշվարկվում է 1. 034 գործակցով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար արձանագրությամբ երաշխավորված ծառայությունները ամփոփված են հաջորդ բաժնում:


Ստորև ներկայացվում է ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ արձանագրված ֆունկցիայի խանգարումներն ըստ ծանրության աստիճանի և առանձնահատկություններն ըստ սեռի, տարիքային խմբերի և աշխարհագրության:

Միայն մեկ ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների շրջանում գրեթե ամեն երկրորդի մոտ արձանագրվում է ֆունկցիաների խանգարման թեթև կամ միջին աստիճան: Ֆունկցիայի ծանր աստիճանի խանգարում արձանագրվել է հիմնականում տեսողական և

¹¹Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 141 – Ն որոշման համաձայն [file:///C:/Users/hasmi/Downloads/141k.voroshum - fin_karg.pdf](file:///C:/Users/hasmi/Downloads/141k.voroshum_fin_karg.pdf)

շարժողական ֆունկցիաների խանգարում ունեցող երեխաների մոտ: Ֆունկցիայի խորը խանգարում արձանագրվել է միայն տեսողական խնդիր ունեցող 3 երեխաների մոտ:

Գծապատկեր 17: Մեկ ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի




Ըստ սեռի որևէ նկատելի տարբերություն չի արձանագրվել, միայն կարելի է նշել, որ աղջիկների մոտ մի փոքր ավելի հաճախ են արձանագրվել շարժողական ֆունկցիայի միջին և ծանր դեպքերը, իսկ տղաների մոտ՝ տեսողության ֆունկցիայի խանգարումները (Հավելված 1, Աղյուսակ 1.2):

Ըստ տարիքային խմբերի տարբերություններն առավել նկատելի են. մեկ ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների շրջանում ծանր և խորը խնդիրներ արձանագրվել են միայն 6-10 և 11-15 տարեկանների խմբերում (Հավելված 1, Աղյուսակ 1.3): Այդ երեխաները հիմնականում Երևանից են, Լոռու և Արմավիրի մարզերից (Հավելված 1, Աղյուսակ 1.4):


Եթե արձանագրվում է մեկից ավելի ֆունկցիայի խանգարումներ, ապա հաճախակի են դառնում նաև միջին, ծանր և խորը խանգարումները: Միաժամանակ 2 ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների (N=931) 83 տոկոսի մոտ արձանագրվել են միջին և բարձր աստիճանի խանգարումներ առաջին ֆունկցիայի դեպքում և 40 տոկոսի մոտ՝ երկրորդ ֆունկցիայի դեպքում: Ֆունկցիաների զուգորդված խանգարումների դեպքում առավել հաճախ արձանագրվել է միջին աստիճանի խանգարում տեսողության և լսողության ֆունկցիաների ժամանակ՝ 60-ից ավելի տոկոս դեպքերում, հավասարապես նաև ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաների կեսից ավելի դեպքում, իսկ ծանր աստիճանի խանգարում արձանագրվել է հիմնականում ինտելեկտուալ/մտավոր և շարժողական ֆունկցիաների դեպքում: Երկրորդ ֆունկցիաներում հիմնականում արձանագրվում է թեթև աստիճանի խանգարում: Երկրորդ ֆունկցիաներում միջին և ծանր աստիճանի խանգարումները արձանագրվել են ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաների համար:

Գծապատկեր 18: Միաժամանակ 2 ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիաների խանգարման աստիճանների



Միաժամանակ 2 ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաներից (N=931) միայն 158-ի մոտ է երկու ֆունկցիաներում արձանագրվել թեթև աստիճանի խանգարում: Այս խմբում երեխաների մեծ մասի մոտ՝ 355 երեխա, արձանագրվել է միջին աստիճանի խանգարում առաջին ֆունկցիայի համար և թեթև՝ երկրորդ ֆունկցիայի համար: Սակայն, եթե երեխայի համար արձանագրվում է միջին կամ ծանր խանգարում առաջին ֆունկցիայում, ապա մեծ է հավանականությունը, որ երկրորդ ֆունկցիայում ևս կարձանագրվի միջին և ծանր խանգարում: 7 երեխաների մոտ, ովքեր ունեին խորը խանգարում առաջին ֆունկցիայում, արձանագրվել է նաև խորը խանգարում երկրորդ ֆունկցիայում:

Գծապատկեր 19: Արձանագրված միաժամանակ 2 ֆունկցիաների խանգարման աստիճանների համադրումը, N=931



Միաժամանակ 3 ֆունկցիաներում խանգարում ունենալու դեպքում երեխաների (N=251) 40 տոկոսի մոտ արձանագրվել է ծանր խանգարում առաջին ֆունկցիայում, միջին խանգարում երկրորդ ֆունկցիայի համար՝ 36 տոկոսի մոտ և թեթև խանգարում երրորդ ֆունկցիայի դեպքում՝ 59 տոկոսի մոտ:

Միաժամանակ 4 ֆունկցիաներում խանգարում ունեցող 41 երեխաներից մեծ մասն ունեին միջին և ծանր խանգարում առաջին ֆունկցիայում, կեսից ավելին ուներ միջին խանգարում երկրորդ ֆունկցիայում, երրորդ ֆունկցիայի պարագայում խանգարումները հավասարապես կամ թեթև էին կամ միջին, իսկ չորրորդ ֆունկցիայի խանգարումները հիմնականում թեթև էին՝ 70 տոկոսի դեպքում:


Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները կազմել են ԿԱՊԿ ունեցող երեխաների 83 տոկոսը, նրանցից 1,889-ի մոտ այդ ֆունկցիայի խանգարումը հանդիսացել է հիմնականը, որով սահմանվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, իսկ նրանցից 1,122 երեխաներ ունեին միայն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում:

Աղյուսակ 3: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության

	N	%
Առաջնային	1,889	82.7%
այդ թվում միայն ինտելեկտուալ/մտավոր խնդիր ունեցողները	1,122	49.1%
Երկրորդային	293	12.8%
Երրորդային	94	4.1%
Չորրորդային	7	0.3%
Ընդամենը	2,283	100.0%

Միայն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաների շրջանում՝ N=1122, արձանագրվել է թեթև աստիճանի խանգարում 56 տոկոսի մոտ և միջին աստիճանի խանգարում 43 տոկոսի մոտ: Ծանր խանգարում ունի երեխաների 1 տոկոսը:


Գծապատկեր 20: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի, N=1122



Ըստ սեռի որևէ տարբերություն միջին պատկերի համեմատ չի նկատվել: Միայն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի և ֆունկցիայի խանգարման աստիճանի ցույց է տալիս, որ 6-10


տարեկանների շրջանում արձանագրվել է հիմնականում թեթև աստիճանի խանգարում, իսկ արձանագրված ծանր խանգարումները հանդիպում են հիմնականում բարձր տարիքային խմբում:

Գծապատկեր 21: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի և տարիքային խմբերի



Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխվածությունն ըստ մարզերի և ֆունկցիայի խանգարման աստիճանի ցույց է տալիս, որ Գեղարքունիքում, Երևանում, Լոռիում, Կոտայքում և Արագածոտնում առավել հաճախ արձանագրվել է միջին աստիճանի խանգարում: 1 տոկոս ծանր խանգարում ունեցող երեխաները Երևանից են, Լոռու և Արմավիրի մարզերից:

Գծապատկեր 22: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի և մարզի N=1112



Արձանագրված ֆունկցիաների խանգարումները նկարագրվում են նաև ըստ տվյալ ֆունկցիայի ենթակատեգորիաների: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի

խանգարումները նկարագրված են հետևյալ ենթակատեգորիաներով, որոնց համար հաշվարկվել է գրանցված դեպքերի հաճախականությունը:

Աղյուսակ 4: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի (b117) խանգարումների ենթակատեգորիաներում արձանագրված խնդիրների հաճախականությունը, N=2283

	Արձանագրված ֆունկցիաների խանգարման ենթակատեգորիաները	ՖՄԴ ծածկագիրը*	Հաճախականությունը
1.	Բարձրագույն ճանաչողական ֆունկցիաներ/ինտելեկտուալ (կարդալը, գրելը, առօրյա կյանքի կազմակերպելը, որոշումներ կայացնելը)	b164	91.4%
2.	Հիմնական ճանաչողական ֆունկցիաներ (հասկացություններ, սովորելը, խաղը)	b163	95.2%
3.	Հաշվարկներ կատարելու ֆունկցիաներ (հաշվելը)	b172	96.1%
4.	Մտածողության ֆունկցիաներ (մտածելը)	b160	89.5%
5.	Ուշադրության ֆունկցիաներ (ուշադրության կենտրոնացումը)	b140	94.5%
6.	Լեզվի մտավոր ֆունկցիաներ (հաղորդակցվելիս բանավոր հաղորդագրություններ ընկալելը, հաղորդակցվելիս ոչ վերբալ հաղորդագրություններ ընկալելը, գրավոր խոսքի ընկալում, խոսելը, հաղորդակցությունը)	b167	95.9%
7.	Հիշողության ֆունկցիաներ (հիշողությունը)	b144	93.3%
8.	Հոգեշարժողական ֆունկցիաներ (սեփական վարքի կառավարում)	b147	72.6%
9.	Ընկալման ֆունկցիաներ (դիտելը, լսելը, այլ զգայարանների նպատակային օգտագործումը)	b156	25.1%

*) ՖՄԴ ծածկագիրը դրվել է հեղինակների կողմից, այն ներառված չէ ԿԱՊԿ գնահատման արձանագրության մեջ:


Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող գրեթե բոլոր երեխաների համար արձանագրվել է հաշվարկներ կատարելու ֆունկցիայի խանգարում, հաղորդակցվելիս բանավոր հաղորդագրություններ ընկալելու, գրավոր խոսքի ընկալելու ֆունկցիայի խանգարումներ, հիմնական ճանաչողական ֆունկցիաների խանգարումներ, ուշադրության կենտրոնացման և հիշողության ֆունկցիաների խնդիրներ: Ամեն 10-րդ երեխայի մոտ արձանագրվել է կարդալու, գրելու, առօրյա կյանքը կազմակերպելու և որոշումներ կայացնելու, մտածելու ֆունկցիայի խանգարումներ:

Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների 70 տոկոսը ուներ նաև սեփական վարքը կառավարելու ֆունկցիայի խանգարումներ, սակայն դիտելով, լսելով և այլ զգայական ֆունկցիաներով ընկալելու խնդիրներ արձանագրվել են ամեն 4-րդ երեխայի մոտ:

Արձանագրված խնդիրների պատկերը գրեթե նույնն է, եթե ինտելեկտուալ/մտավոր խնդիրների ենթակատեգորիաների բաշխվածությունը դիտարկվում է առաջնայինը

ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների խանգարումներով ԿԱՊԿ կարիքը արձանագրված դեպքերի շրջանում: Այս խմբում բացի ընկալման և հիշողության ֆունկցիաների խանգարումներից, մի փոքր ավելի հաճախ են արձանագրվել բոլոր մյուս ենթակատեգորիաներում խանգարումները:

Գծապատկեր 23: Առաջնայինը ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարման դեպքում արձանագրված խնդիրներն ըստ ենթակատեգորիաների, N=1889



Գործող արձանագրության ձևը հնարավորություն չի տալիս նշելու ֆունկցիայի խանգարման ենթակատեգորիայի ծանրության աստիճանը: Բնօրինակ արձանագրությունների մեջ մասնագետները բառերով նշում են, թե հիմնականում ինչպիսի խնդիր է արձանագրվում, սակայն այդ տեղեկատվությունը չի մուտքագրվել, քանի որ այն հնարավոր չէր լինի ամփոփել: Եթե յուրաքանչյուր ենթակատեգորիայի համար նշվեր համապատասխան ծածկագիրը և որակիչը, ապա հնարավոր կլիներ ձևավորել ավելի համապարփակ պատկեր, թե հատկապես ինչ աստիճանի դժվարություններ են ունենում ԿԱՊԿ ունեցող երեխաները:

Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները կազմել են ԿԱՊԿ ունեցող երեխաների 48,4 տոկոսը, նրանցից 458-ի մոտ այդ ֆունկցիայի խանգարումը հանդիսացել է առաջնայինը, որով սահմանվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, իսկ 252 երեխաներ ունեին միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում:


Աղյուսակ 5: Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության

	N	%
Առաջնային	458	34.6%
այդ թվում միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարման խնդիր ունեցողները	238	18.0%
Երկրորդային	805	60.8%
Երրորդային	59	4.5%
Չորրորդային	3	0.2%
Ընդամենը	1,325	100.0%

Միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաների շրջանում՝ N=238, արձանագրվել է թեթև աստիճանի խանգարում 66.4 տոկոսի մոտ և միջին աստիճանի խանգարում 33.6 տոկոսի մոտ: Միայն այս ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների շրջանում ծանր և խորը խանգարումներ չեն արձանագրվել:


Ըստ սեռի՝ որևէ տարբերություն միջին պատկերի համեմատ գրեթե չի նկատվել. միջին աստիճանի խանգարումները մի փոքր ավել են արձանագրվել տղաների շրջանում:

Գծապատկեր 24: Միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ սեռի և խանգարման աստիճանի, N=237



Միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի և ֆունկցիայի խանգարման աստիճանի ցույց է տալիս, որ ֆունկցիայի ծանր խանգարումներն առավել հաճախ հանդիպել են 11-15 տարիքային խմբում՝ 44,9 տոկոս, իսկ 6-10 տարեկանների շրջանում արձանագրված դեպքերի երկու երրորդը թեթև աստիճանի են:


Գծապատկեր 25: Միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի և տարիքային խմբերի



Ըստ մարզի գնահատման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների շրջանում արձանագրված

առավելագույն միջին աստիճանի խանգարումները համեմատաբար հաճախ են Վայոց Ձորի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, իսկ Արարատում արձանագրված բոլոր դեպքերը միջին աստիճանի էին:

Գծապատկեր 26: Միայն ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ խանգարման աստիճանի և մարզի



Մեկից ավել ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների մոտ 90 տոկոսն ունի ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում: Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը հիմնականում զուգորդվում է ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումների հետ՝ N=762: Ոչ հաճախ, հանդիպում են դեպքեր, երբ ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը զուգորդվում է լսողական (N=17), շարժողական (N=14) և տեսողական (N=13) ֆունկցիաների խանգարումների հետ:

Ըստ ԿԱՊԿ արձանագրության, ձայնի/խոսքի ֆունկցիայի ենթակատեգորիաներն են

- Խոսքի հնչյունների արտաբերման ֆունկցիաները
- Խոսքի սահունությունը
- Խոսքի ռիթմը և խոսքի մեղեդայնությունը
- Արագախոսությունը, և
- Դանդաղախոսությունը:

Այդ ենթակատեգորիաները ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի տեսքով ներկայացնելու համար կիրառվել են հետևյալ ծածկագրերը.

- b3100 Ձայնի արտաբերում, b3101 Ձայնի որակ
- b320 Արտաբերման արտասանական ֆունկցիաներ
- b330 Խոսքի սահունության ու ռիթմի ֆունկցիաներ

ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների մոտ արձանագրված խանգարումները ունեն հետևյալ բաշխվածությունը.

Աղյուսակ 6: Ձայնի/խոսքի ֆունկցիայի (b300) խանգարումների ենթակատեգորիաներում արձանագրված ինդիքների հաճախականությունը

	Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող բոլոր երեխաների շրջանում N=1325	Առաջնային ձայնի/ֆունկցիայի խնդիր ունեցող երեխաների շրջանում N=458
Ձայնի ֆունկցիա: b3100 Ձայնի արտաբերում, b3101 Ձայնի որակ	77.4%	77.5%
b320 Արտաբերման արտասանական ֆունկցիաները	97.6%	96.7%
b330 Խոսքի սահունության ու ռիթմի ֆունկցիաները	91.5%	91.3%

Ձայնի արտաբերման, արտասանական ֆունկցիաների խանգարումները գերակշռում են, որից հետո առավել հաճախ արձանագրվում է երեխաների մոտ խոսքի սահունության և ռիթմի ֆունկցիայի խանգարումները: Ինչպես նշվեց, ենթաբաղադրիչների համար այս արձանագրության միջոցով հնարավոր չէ ստանալ ֆունկցիայի խանգարման ծանրության աստիճանը:

Լսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները կազմել են ԿԱՊԿ ունեցող երեխաների ընդամենը 3,8 տոկոսը կամ 106 երեխա, նրանցից 90-ի մոտ այդ ֆունկցիայի խանգարումը հանդիսացել է հիմնականը, որով սահմանվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, իսկ 18 երեխաներ ունեին միայն լսողական ֆունկցիայի խանգարում:

Աղյուսակ 7: Լսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության


	N	%
Առաջնային	90	84.9%
<i>այդ թվում միայն լսողության խնդիր ունեցողները</i>	18	17.0%
Երկրորդային	10	9.4%
Երրորդային	5	4.7%
Չորրորդային	1	0.9%
Ընդամենը	106	100.0%

Միայն լսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաների շրջանում՝ N=18, արձանագրվել է հիմնականում միջին աստիճանի խանգարում՝ 12 երեխաների մոտ և թեթև աստիճանի խանգարում՝ 6 երեխայի մոտ: Ծանր խանգարում ունեցող երեխաներ այս խմբում չեն եղել: Այս 18 երեխաներից 13-ը տղաներ են և 5-ը աղջիկներ, հիմնականում 11-15 տարեկաններ, Արմավիրի և Լոռու մարզերից:

Ըստ սեռի որևէ տարբերություն միջին պատկերի համեմատ չի նկատվել՝ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների մեծ մասի մոտ արձանագրվել են միջին աստիճանի լսողական ֆունկցիայի խանգարումներ: Ըստ տարիքային խմբերի բաշխվածությունը ցույց է տալիս, որ փոքր տարիքային խմբում՝ 8-ից 7-ի մոտ արձանագրվել է միջին աստիճանի

խանգարում, մինչդեռ բարձր տարիքային խմբերում արձանագրվել է միայն թեթև խանգարում; Արմավիրում, այս խմբի բոլոր, իսկ Լոռիում երկու երրորդ երեխաների մոտ արձանագրվել է միջին աստիճանի խանգարում:

Գծապատկեր 27: Լսողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի, սեռի, տարիքային խմբերի և մարզերի, N=18



Տեսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները կազմել են ԿԱՊԿ ունեցող երեխաների 8,2 տոկոսը կամ 226 երեխա, նրանցից 121-ի կամ 54 տոկոսի մոտ այդ ֆունկցիայի խանգարումը հանդիսացել է հիմնականը, որով սահմանվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, իսկ 88 երեխաներ ունեին միայն տեսողական ֆունկցիայի խանգարում:


Աղյուսակ 8: Տեսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաներն ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության

	N	%
Առաջնային	121	53.5%

	N	%
<i>այդ թվում միայն տեսողության խնդիր ունեցողները</i>	88	38.9%
Երկրորդային	58	25.7%
Երրորդային	34	15.0%
Չորրորդային	13	5.8%
Ընդամենը	226	100.0%

Միայն տեսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաների N=88 կեսից ավելիի մոտ արձանագրվել է թեթև աստիճանի խանգարում, ամեն 3-րդի մոտ տեսողության ֆունկցիայի խանգարումը միջին աստիճանի էր: 10 երեխաների մոտ արձանագրվել է ծանր խանգարում, իսկ 3 երեխաների մոտ՝ խորը:


Գծապատկեր 28: Միայն տեսողության ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների մոտ ֆունկցիայի խանգարման աստիճանները, N=88



Միայն տեսողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների շրջանում տղաները մի փոքր գերակշռել են. տեսողական ֆունկցիայի խանգարում ունեցողների կեսից ավելին տղաներ են, նրանց մոտ ֆունկցիայի խանգարման աստիճանն առավել հաճախ է միջին, ծանր և խորը աստիճանի՝ աղջիկների համեմատ:

Տարիքային խմբերից առանձնանում է 11-ից 15 տարեկանների խումբը՝ ամեն 4-րդ երեխան այս խմբում ունի միջին, իսկ ամեն 5-րդը՝ ծանր աստիճանի ֆունկցիայի խանգարում: 16 և բարձր տարիքի 9 երեխաների մոտ, ովքեր ունեն տեսողության ֆունկցիայի խանգարում, 6-ի մոտ արձանագրվել է միջին աստիճանի խանգարում: Միայն տեսողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաները հիմնականում Շիրակի մարզից էին, Երևանից և Լոռու մարզից, ընդ որում, ֆունկցիայի խանգարման ծանրության աստիճանի առավել ծանր դեպքեր հաճախ արձանագրվել են Երևանում:

Գծապատկեր 29: Միայն տեսողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի, սեռի, տարիքային խմբերի և մարզերի, N=88



Տեսողական ֆունկցիաների համար ենթակատեգորիաներ չեն առանձնացված ԿԱՊԿ արձանագրության մեջ:


Շարժողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաները կազմել են ԿԱՊԿ ունեցող երեխաների ընդամենը 13,4 տոկոսը կամ 370 երեխա, նրանցից 196-ի՝ 53 տոկոսի մոտ այդ ֆունկցիայի խանգարումը հանդիսացել է հիմնականը, որով սահմանվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, իսկ 65 երեխաներ ունեին միայն տեսողական ֆունկցիայի խանգարում:

Աղյուսակ 9: Շարժողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաներն ըստ ֆունկցիայի խանգարման առաջնահերթության

	N	%
Առաջնային	196	53.0%
<i>այդ թվում միայն շարժողական խնդիր ունեցողները</i>	65	17.6%
Երկրորդային	57	15.4%
Երրորդային	100	27.0%
Չորրորդային	17	4.6%
Ընդամենը	370	100.0%

Միայն շարժողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաների շրջանում՝ N=65, թեթև խանգարում ունեցողները կազմել են 43 տոկոս կամ 28 երեխա. 30 երեխաների մոտ կամ 46 տոկոսի մոտ արձանագրվել է միջին աստիճանի խանգարում, և 7 երեխաների մոտ շարժողական ֆունկցիայի խանգարումը ծանր աստիճանի էր:

Գծապատկեր 30: Միայն շարժողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի, N=65



Միայն շարժողական ֆունկցիայի խանգարում ունեցողների մեծ մասը տղաներ էին՝ N=35 և նրանցից շատերի մոտ արձանագրվել է թեթև աստիճանի ֆունկցիայի խանգարում: Շարժողական ֆունկցիայի խանգարումները առավել ծանր էին աղջիկների շրջանում: Ըստ տարիքային խմբերի գերակշռում են 11-15 տարեկանները և 17 երեխաների մոտ արձանագրվել է ֆունկցիայի միջին և 4 երեխաների մոտ՝ ծանր խանգարում: Ըստ մարզերի շարժողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաները հիմնականում Երևանից ու Լոռու մարզից էին, և միջին խանգարում ունեցողները հիմնականում Երևանից էին:

Աղյուսակ 10: Միայն շարժական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի և սեռի, տարիքային խմբերի և մարզերի, N=65

Ըստ սեռի				
	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
Տղա	19	14	2	35
Աղջիկ	8	16	5	29
	27	30	7	64 ¹²
Ըստ տարիքային խմբերի				
	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
6-ից 10 տարեկան	9	10	1	20
11-ից 15 տարեկան	13	17	4	34
16-ից բարձր տարիքի	6	3	2	11
Ընդամենը	28	30	7	65
Ըստ մարզերի				
	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
Արարատ	0	1	0	1
Արմավիր	3	3	0	6
Երևան	9	12	2	23
Լոռի	13	9	3	25
Շիրակ	1	0	0	1
Սյունիք	1	2	1	4
Տավուշ	1	3	1	5
Ընդամենը	28	30	7	65

Շարժողական ֆունկցիաների խանգարումների գնահատման ժամանակ ԿԱՊԿ արձանագրության մեջ առանձնացված են հետևյալ ենթակատեգորիաները. խոշոր շարժունակության ֆունկցիաների խանգարումներ և մանր շարժունակության ֆունկցիայի խանգարումներ: ԱՀԿ ՖՄԴ-ում այդպիսի դասակարգում չկա, այստեղ մարմնի ֆունկցիաների 6 ծածկագրերում դիտարկվում են հոդերի ու ոսկորների ֆունկցիաները (b710-b729), մկանային ֆունկցիաները (b730-b749) և հենաշարժական համակարգի ֆունկցիաները (b750-b789): ԿԱՊԿ գնահատման արձանագրության մեջ խոշոր շարժունակության ֆունկցիաների ենթակատեգորիայի ներքո փորձ է կատարվում գնահատական տալ երեխայի քայլելու, նստելու, նստած տեղից ինքնուրույն վերկենալու, մարմինը տեղից-տեղ տեղափոխելու, ձեռքերը և ոտքերը շարժելու համար անհրաժեշտ հոդերի, մկանների ու հենաշարժական համակարգի ընդհանուր ֆունկցիաների խանգարումների աստիճանը, իսկ մանր շարժունակության ենթակատեգորիայի ներքո գնահատվում է երեխայի մատների գործունեության հետ կապված ֆունկցիաները՝ գրիչ կամ վրձին բռնելու, գրելու, նկարելու, սոսնձելու կամ ուսման հետ կապված բազմաթիվ այլ մանր շարժումներ կատարելու համար անհրաժեշտ հոդերի, մկանների ու հենաշարժական համակարգի ֆունկցիաները: Այսպիսի ձևակերպումը կրկին ցույց է տալիս, որ ԿԱՊԿ գնահատման արձանագրությունը հնարավորություն չի տալիս լիարժեք նկարագրելու երեխայի կարողություններն ու կատարողականի հետ կապված խնդիրները և անհրաժեշտ

¹² Այստեղ մեկ երեխայի համար նշված չէր սեռը, հետևաբար ըստ սեռի բաշխվածությունն դիտարկվել է 64 երեխաների համար

է լրամշակել, որպէսզի հնարավոր լինի արտացոլել թե՛ հատկապէս որ գործողությունը կատարելիս երեխան ունի ֆունկցիոնալ սահմանափակում և ինչպիսի աստիճանի:

Շարժողական ֆունկցիայի ենթակատեգորիաների բաշխվածությունը միայն շարժողական ֆունկցիայի խնդիր ունենալու համար ԿԱՊԿ ունեցող երեխաների շրջանում դիտարկելիս, լրացված տվյալները ցույց են տալիս, որ 90 երեխաներից 58-ի մոտ արձանագրվել է խոշոր շարժունակության ֆունկցիայի խանգարումներ, իսկ 53 երեխայի մոտ արձանագրվել է մանր շարժունակության ֆունկցիայի խանգարում: Առկա տեղեկատվության հիման վրա առավել մանրամասն ուսումնասիրություն ներկայացնել հնարավոր չէ:

Աղյուսակ 11: Շարժողական ֆունկցիայի (b7) խանգարումների ենթակատեգորիաներում արձանագրված խնդիրների հաճախականությունը

	Արձանագրված ֆունկցիաների խանգարման ենթակատեգորիաները	Հաճախականությունը			
		Ընդամենը շարժողական ֆունկցիայի խանգարումներ ունեցողների շրջանում N=370		Միայն շարժողական ֆունկցիայի խանգարումներ ունեցողների շրջանում N=65	
		N	%	N	%
1.	Խոշոր շարժունակության ֆունկցիաներ	347	93.8	58	89.2
2.	Մանր շարժունակության ֆունկցիաներ	323	87.3	53	81.5


Երրորդ բաժնի ամբողջ վերլուծությունը հնարավորություն տվեց դուրս բերել ԿԱՊԿ գնահատում անցած և կրթության կազմակերպման համար լրացուցիչ աջակցության կարիքն արձանագրած երեխաների մոտ ֆունկցիաների խանգարումների աստիճանը: **Սակայն այս վերլուծությունը հնարավորություն չի տալիս հասկանալու, թե որոնք են այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց բախվում են ԿԱՊԿ ունեցող երեխաներն իրենց դպրոցական առօրյայում:** Պատճառը, գնահատման արդյունքների արձանագրման ձևաչափն է. յուրաքանչյուր ֆունկցիայի խանգարումների նկարագրության մասը՝ ձեռագրով տեքստային շարադրանքը, հնարավոր չի եղել մուտքագրել ու ամփոփել: Մինչդեռ երեխաների ֆունկցիոնալության նկարագրությունը որոշ չափով նկարագրվում է հենց այդ մասում և ամփոփելու հնարավորության պարագայում, շատ ընդարձակ տեղեկատվություն կտրամադրեր երեխաների ունեցած խնդիրների մասին, նրա ուսմանը խոչընդոտող միջավայրային գործոնների մասին: Բացի այդ արձանագրության ձևը հնարավորություն չի տալիս նշելու և վերլուծելու, թե վերհանված խնդիրներին ինչպիսի ծառայություններ են առաջարկվում և ինչ թիրախներ/նպատակներ՝ ԿԱՊԿ ունեցող երեխայի մոտ ուսուցման և սոցիալիզացիայի հաջողությունների արձանագրման համար: **Արձանագրության այս ձևաչափը շատ սահմանափակ է և չի կարող ծառայել որպես ամփոփ տեղեկատվություն ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների մասին տեղեկացված քաղաքականություն մշակելու համար:**

Ըստ ստացված տեղեկատվության հնարավոր եղավ դուրս բերել, որ ԿԱՊԿ գնահատում անցած ԿԱՊԿ ունեցող երեխաների մեկ երրորդի՝ 1036-ի կամ 37.6%-ի մոտ

արձանագրվում են ֆունկցիաների թեթև աստիճանի խանգարումներ: Միջին, ծանր և խորը աստիճանի ֆունկցիայի խանգարումներն արձանագրվել են ԿԱՊԿ ունեցող երեխաների 62,4 տոկոսի մոտ կամ ԿԱՊԿ ունեցող N=2754 երեխաներից 1718-ի մոտ: Սա նշանակում է, որ բարձրացված չափաքանակով ֆինանսավորում կհատկացվի ԿԱՊԿ գնահատում անցած 3513 երեխաներից 1718-ի կամ 48.9 տոկոսի համար:

Վերլուծությունը նաև ցույց տվեց, թե ինչպիսի տարբերություններ ունեն երեխաները զուգորդված ֆունկցիաների խանգարումներ ունենալու պարագայում և որքան կարևոր է նրանց մատուցվող ծառայությունները և միջավայրի հարմարեցման համար հատկացվող ֆինանսական աջակցությունը տրամադրել տարբերակված՝ ելնելով երեխայի կարիքից և նրան կրթելու, ուսման մեջ նրա ակտիվությունն ու մասնակցությունն ապահովելու նպատակներից:

Գծապատկեր 31: 2018 թվականին ԿԱՊԿ գնահատման արդյունքների ամփոփ պատկերը, N=3513



4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին առաջարկված ծառայությունները

Գնահատում անցած երեխաների համար, ում մոտ արձանագրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ պայմանավորված որևէ ֆունկցիայի խանգարումով, գնահատող հանձնաժողովը երաշխավորում է ծառայություններ, ըստ մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման կարգի, որը հաստատված է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրամանով¹³: Հրամանը հաստատում է անհատական ուսումնական պլանով (ԱՌԻՊ) նախատեսվող աջակցող ծառայությունների տեսակները, տրամադրման ժամանակահատվածը, տևողությունը և ծավալները՝ ծառայությունը մատուցող մասնագետների աշխատանքի

¹³ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրաման:

տնտղությունը և միջավայրային հարմարեցումները, որոնք անհարժեշտ են ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության արդյունավետ կազմակերպման համար:

ԿԱՊԿ գնահատման արձանագրության մեջ կա հետևյալ նշումը՝ «մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման վերաբերյալ առաջարկությունները նկարագրվում են համաձայն մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման տեսակի, ժամանակահատվածի, տնտղության ու ծավալների աղյուսակի»։ Ենթադրաբար, դա վերը նշված հրամանով սահմանված սանդղակն է: Սակայն, հարկ է նշել, որ ԿԱՊԿ արձանագրության մեջ նշված ֆունկցիայի խանգարումների աստիճանը, դժվար է կապել «մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման տեսակի, ժամանակահատվածի, տնտղության ու ծավալների» հետ: Քանի որ, նույն ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաները կարող են տարբեր ծավալի ու տնտղության աջակցության կարիք ունենալ, կախված իրենց կարողություններից ու կատարողականից¹⁴: Օրինակ, գնահատված համակցության մեջ միայն տեսողական ֆունկցիայի թեթև խանգարում ունեցող երեխաները եղել են 45-ը: Արդյո՞ք բոլոր 45-ին պետք են այդ սանդղակում նշված ծառայությունները, նույն ինտենսիվությամբ: Արդյո՞ք, միայն լսողական, շարժողական կամ ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի նույնպես թեթև խանգարումներ ունեցող երեխաներին ևս պետք է տրամադրվեն նույն ծառայությունները: Ըստ նշված աղյուսակի, այդ երեխաներին նախատեսվում է տրամադրել առաջին աստիճանի՝ թեթև/հսկում ծառայություններ, ինչը նշանակում է «տարբերակված մոտեցում դասի բովանդակությանը և մատուցմանը: Հուշումներ՝ խթանելու երեխայի ակտիվ մասնակցությունը, ինքնուրույն ուսումնառությունը և ներգրավվածությունը: Տարբերակված լեզվական, գրագիտության և մաթեմատիկական միջոցների կամ ռեսուրսների տրամադրում, որոնք պետք է աջակցեն պլանավորված ուսումնական ծրագրերին, մեթոդներին: Ապահովել նյութերի բազմազանություն՝ խթանելու երեխայի ակտիվ մասնակցությունը, ինքնուրույն ուսումնառությունը և ներգրավվածությունը: Բարձրացնել զգայարանների միջոցով տարաբնույթ ազդակների ընկալման հնարավորությունը՝ օգտագործելով բազմազան մեթոդներ և նյութեր: Անհրաժեշտ խոսքային աջակցության տրամադրում՝ ինֆորմացիան յուրացնելու համար: Խոսքը հասկանալի դարձնելու համար անհրաժեշտ հավելյալ ժամանակի տրամադրում»։ Եվ այդ ծառայությունները մատուցելու համար համապատասխան հատուկ մանկավարժները երեխաների հետ պետք է աշխատեն շաբաթական 45 րոպե: Հնարավոր է, այսպիսի մոտեցումը հեշտացնում է ռեսուրսների հատկացումն ու ֆինանսավորման բարձրացված չափաքանակի որոշումը: Սակայն, մասնագիտական տեսանկյունից այն հակասում է ներառական կրթության գաղափարախոսությանը, որի հիմնաքարն է յուրաքանչյուր սովորողի անհատական կարողությունները հաշվի առնելը և նրա կրթությունը, գործունեությունն ու մասնակցությունը խթանելու համար անհատական մոտեցման կիրառումը՝ խելամիտ միջավայրային հարմարեցումների ապահովման միջոցով: ԿԱՊԿ գնահատման

¹⁴ Մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման կարգում (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրաման) հիմնված կետում նշվում է, որ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակահատվածը, տնտղությունը, ծավալը և տրամադրման գրաֆիկը մշակվում է հաստատության աջակցության խումբը, հաստատվում է տնօրենի կողմից»:

գործիքակազմը, որը կիրառվում է մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից հնարավորություն է տալիս հավաքագրելու յուրաքանչյուր երեխայի մասին հսկայական ծավալի տեղեկատվություն, գնահատելու նրա ուժեղ և թույլ կողմերը և դուրս բերելու այն բոլոր հարմարեցումները, որոնք անհրաժեշտ են երեխայի կրթության կազմակերպման համար: Սակայն այդ ամբողջ տեղեկատվությունն ամփոփվում է ԿԱՊԿ արձանագրության մեջ ֆունկցիայի խանգարումների նկարագրության տակ, շատ սահմանափակ տեքստային նախադասություններով, ձեռագիր և հնարավոր չի վերլուծել, թե երեխաները հիմնականում ինչպիսի դժվարություններ են ունենում և ինչպիսի սահմանափակումների կամ խոչընդոտների են հանդիպում ուսումնառության պրոցեսում, ինչ հարմարեցումների կարիք ունեն: Բացի այդ, հասկանալի չէ նաև, թե այդ համառոտ նկարագրությունների հիման վրա ինչպիսի աշխատանք պետք է տարվի երեխայի մասնակցության ապահովման համար և ինչ նպատակների պետք է հասնեն մասնագետները, որպեսզի վերագնահատման արդյունքում հստակ լինի նաև, թե արդյո՞ք տարված աշխատանքն ու ծառայությունները բավարար էին երեխայի համար սահմանված թիրախներին ու նպատակներին հասնելու համար: Նման վիճակագրության վերլուծությունը հնարավորություն կտար որոշում կայացնողներին բարելավելու երեխաներին մատուցվող մանկավարժահոգեբանական ծառայությունների և ներառական կրթության որակը:

ԿԱՊԿ արձանագրության մեջ երեխաների կրթության արդյունավետ կազմակերպման համար առաջարկվում է երեք մոտեցում.

- տրամադրել կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված մանկավարժահոգեբանական աջակցության անհատական պլանով՝ ՄԱԾԱՊ.
- կրթությունը կազմակերպել հանրակրթական առարկայական ծրագրերի և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների հիման վրա կազմված անհատական ուսուցման պլանով՝ ԱՌԻՊ.
- կրթությունը կազմակերպել հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի համապատասխան – որևէ լրացուցիչ միջամտության պլան չի կազմվում:

2018 թվականին ԿԱՊԿ գնահատում անցած 3513 երեխաներից 2744-ին կամ 78 տոկոսին առաջարկվել է տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կազմել ՄԱԾԱՊ: Նրանցից 6-ի համար ԿԱՊԿ չէր արձանագրվել: Երեխաների 65 տոկոսի համար առաջարկվել է կազմել ԱՌԻՊ և հարմարեցնել հանրակրթական առարկայական ծրագրերը, նրանցից 9 երեխաների համար ԿԱՊԿ չէր արձանագրվել: 1263 երեխաների համար առաջարկվել է կրթությունը կազմակերպել հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներով, ընդ որում նրանցից 520-ի համար ԿԱՊԿ արձանագրվել էր:

Աղյուսակ 12: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների բաշխումն ըստ կրթության կազմակերպման համար առաջարկված մոտեցումների¹⁵

¹⁵ Տոկոսների գումարը 100 չի կազմում, քանի որ մեկ երեխային կարող է առաջարկվել մեկից ավել ծառայություն:

	Ընդամենը N=3513		ԿԱՊ ունեցող N=2754		ԿԱՊԿ չունեցող N=759	
	N	%	N	%	N	%
Կազմել ՄԱԾԱՊ	2744	78.1%	2738	99.4%	6	0.8%
Կազմել ԱՌԻՊ	2275	64.8%	2266	60.4%	9	1.2%
Առանց աջակցության պլանի	1263	36.0%	520	18.9%	743	97.9%

ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին հիմնականում առաջարկվում էր տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և հարմարեցնել հանրակրթական առարկայական ծրագիրն ըստ ԱՌԻՊ-ի՝ 2263 երեխաների կամ 64 տոկոսին: 508 երեխաների կամ 14,5 տոկոսին առաջարկվել է ծառայություններ մատուցել ՄԱԾԱՊ-ով, սակայն անհրաժեշտություն չի եղել նրանց համար հարմարեցնելու առարկայական ծրագրերը: Նրանց մեծ մասը 6-10 տարեկան էին՝ 57 տոկոս, անցնում էին գնահատում առաջին անգամ՝ 88 տոկոս, և միայն մեկի համար չէր արձանագրվել ԿԱՊԿ:

39 երեխաների առաջարկվել է ԱՌԻՊ կազմել, սակայն միևնույն ժամանակ նշվել է, որ կարիք չկա հարմարեցնելու առարկայական ծրագրերը: Սա հավանաբար սխալ արձանագրության արդյունք է: Այս երեխաներից 30-ն առաջին անգամ էր գնահատվում և նրանք բոլորն էլ ունեին ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներ՝ միայն N=15 կամ զուգորդված N=14, մեկից ավելի ֆունկցիայի խանգարումներ: Ընդ որում ֆունկցիայի թեթև աստիճանի խանգարում ունեին միայն 11-ը:

Աղյուսակ 13: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին առաջարկված ծառայությունների համընկումները

	ՄԱԾԱՊ		ԱՌԻՊ		Առանց աջակցության պլանի	
	N	%	N	%	N	%
ՄԱԾԱՊ	2744	78.1%	2263	64.4%	508	14.5%
ԱՌԻՊ	2263	64.4%	2275	64.8%	39	1.1%
Առանց աջակցության պլանի	508	14.5%	39	1.1%	1263	36.0%
Միայն մեկ ծառայություն		Զուգորդում		Միայն արձանագրում		

Համաձայն ՀՀ ԿԳՆ 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 370-Ն հրամանով հաստատված «Անհատական ուսումնական պլանով նախատեսվող աջակցող ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները» աղյուսակի, ԱՌԻՊ-ով կարող են նախատեսվել հետևյալ մասնագետների ներգրավվածությունը՝

- հատուկ մանկավարժներ՝ լոգոպեդներ, տիֆլոմանկավարժներ, սուրդոմանկավարժներ և օլիգոֆրենամանկավարժներ,
- հոգեբաններ

- սոցիալական մանկավարժներ:


Այս հրամանում չեն թվարկված ֆիզիոթերապիստն ու էրգոթերապիստը, մինչդեռ ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին ծառայություն մատուցելու համար երաշխավորվել են նաև այդ մասնագետների ծառայությունները՝ ԿԱՊԿ ունեցող ամեն 10-րդ երեխային երաշխավորվել է ֆիզիոթերապիստի ծառայություններ, իսկ էրգոթերապիստի ծառայություններ երաշխավորվել է ԿԱՊԿ ունեցող երեխաների 3 տոկոսի համար:

ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների 70, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ 90 տոկոսի համար երաշխավորվում է հատուկ մանկավարժի ծառայություններ: Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ **մասնագետների ծառայություններ երաշխավորվում են նաև այն երեխաների համար ովքեր չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք**: ԿԱՊԿ չունեցող երեխաների 14 տոկոսի համար երաշխավորվել է հոգեբանի ծառայություններ: Հոգեբանի ծառայությունները հանդիսանում են երկրորդ առավել հաճախ առաջարկվող ծառայությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների համար՝ երեխաների 64 տոկոսի համար առաջարկվում է հոգեբանական աջակցություն: Լոգոպեդի ծառայությունները երրորդ առավել հաճախ երաշխավորվող աջակցությունն են, որ սահմանվում է ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների համար: Ընդ որում, այս մասնագիտական ծառայությունը երաշխավորվել է նաև 24 երեխաների, ովքեր չունեն ԿԱՊԿ: Հարկ է նշել նաև, որ բացի լոգոպեդից այլ նեղ մասնագիտացված հատուկ մանկավարժական ծառայություններ երաշխավորվել են միայն ԿԱՊԿ ունեցող երեխաների համար:

Աղյուսակ 14: Երաշխավորված մասնագետների աջակցության ծառայությունները ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին

	Ընդամենը N=3513		ԿԱՊԿ ունեցող N=2754		ԿԱՊԿ չունեցող N=759	
	N	%	N	%	N	%
Հատուկ մանկավարժ	2449	70%	2421	88%	28	4%
Հոգեբան	1865	53%	1757	64%	108	14%
Լոգոպեդ	1478	42%	1454	53%	24	3%
Ֆիզիոթերապիստ	264	8%	264	10%	0	0%
Սոցիալական մանկավարժ	166	5%	166	6%	0	0%
Տիֆլո մանկավարժ	107	3%	107	4%	0	0%
Սուրդո մանկավարժ	94	3%	94	3%	0	0%
Էրգոթերապիստ	93	3%	93	3%	0	0%

Գծապատկեր 32: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ երաշխավորված մասնագետների աջակցության ծառայությունների



Հետաքրքիր միտում նկատվում է, երբ երաշխավորված մասնագետների աջակցության ծառայությունները դիտարկվում են ըստ երեխաների սեռի, տարիքի և ըստ մարզերի:

Աղջիկներին մի փոքր ավելի հաճախ են երաշխավորվում նեղ մասնագետների աջակցության ծառայությունները. տղաներին մի փոքր առավել հաճախ հատուկ մանկավարժ և հոգեբան:

Աղյուսակ 15: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ սեռի և երաշխավորված մասնագետների աջակցության

	Տղաներ N=1910		Աղջիկներ N=871	
	N	%	N	%
Հատուկ մանկավարժ	1693	88.6%	711	86.2%
Հոգեբան	1247	65.3%	507	61.5%
Լոգոպեդ	1027	53.8%	424	51.4%
Ֆիզիոթերապիստ	161	8.2%	103	11.8%
Սոցիալական մանկավարժ	105	5.3%	61	7.0%
Տիֆլո մանկավարժ	73	3.7%	34	3.9%
Սուրդո մանկավարժ	58	2.9%	36	4.1%
Էրգոթերապիստ	64	3.2%	28	3.2%

Մինչև 6 տարեկան երեխաներին առավել հաճախ երաշխավորվել են լոգոպեդի ծառայությունները՝ այդ տարիքային խմբի 25 երեխաներից լոգոպեդի ծառայություն երաշխավորվել է 24-ի համար: Բարձր տարիքային խմբերում առավել հաճախ են երաշխավորվում ֆիզիոթերապիստի, էրգոթերապիստի և սուրդո մանկավարժի ծառայությունները:


Աղյուսակ 16: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ տարիքային խմբերի և երաշխավորված մասնագետների աջակցության

	Մինչև 6 տարեկան N=25		6-ից 10 տարեկան N=1436		11-ից 15 տարեկան N=1188		16 և բարձր տարիքի N=105	
	N	%	N	%	N	%	N	%
Հատուկ մանկավարժ	13	52%	1223	85%	1091	92%	94	90%
Հոգեբան	10	40%	898	63%	789	66%	60	57%

	Մինչև 6 տարեկան N=25		6-ից 10 տարեկան N=1436		11-ից 15 տարեկան N=1188		16 և բարձր տարիքի N=105	
	N	%	N	%	N	%	N	%
Լոգոպեդ	24	96%	827	58%	565	48%	38	36%
Ֆիզիոթերապիստ	2	8%	111	8%	134	11%	17	16%
Սոցիալական մանկավարժ	0	0%	76	5%	83	7%	7	7%
Տիֆլո մանկավարժ	0	0%	41	3%	59	5%	7	7%
Սուրբո մանկավարժ	2	8%	34	2%	49	4%	9	9%
Էրգոթերապիստ	0	0%	38	3%	44	4%	11	10%

Աղյուսակ 16-ի գրաֆիկական պատկերն առավել արտահայտիչ է ներկայացնում ըստ տարիքային խմբերի առաջարկված մասնագետների աջակցությունները:

Գծապատկեր 33: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ տարիքային խմբերի և երաշխավորված մասնագետների աջակցության




Ըստ մարզերի մասնագետների աջակցության ծառայությունների բաշխումը ներկայացված է Հավելված 1-ի Աղյուսակ 1.5-ում: Հատուկ մանկավարժի աջակցություն առավել հաճախ երաշխավորվել է Արմավիրի (95%), Վայոց Ձորի (91%), Սյունիքի (90%) և Տավուշի (90%) մարզերում: Հոգեբանի ծառայություններ առավել հաճախ նշանակվել են Արարատում (74%), Վայոց Ձորում (72%) և Երևանում (70%): Լոգոպեդի ծառայություններն առավել հաճախ առաջարկվել են Գեղարքունիքում (74%) և Կոտայքում (70%): Սոցիալական մանկավարժի ծառայություններ միջինից բարձր տոկոսով երաշխավորվել են Կոտայքում և Լոռիում՝ 13 և 11 տոկոս համապատասխանաբար: Ֆիզիոթերապիստի ծառայություններ գրեթե կրկնակի ավելին, քան միջին ցուցանիշը նշանակվել են Արարատում՝ 32 տոկոս, Իսկ Կոտայքում նկատելի ավել են նշանակվել Էրգոթերապիստի ծառայությունները՝ 13 տոկոս:

ԿԱՊԿ ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրելու համար երաշխավորված ծառայությունները դիտարկվել են նաև ըստ ֆունկցիայի խանգարման տեսակի և աստիճանի:

Առաջնայինը ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների համար գրեթե միշտ նշանակվել են հատուկ մանկավարժի ծառայություններ՝ 99,4 տոկոս: Բացի այդ, 73 տոկոս դեպքերում այդ խմբի երեխաներին նշանակվել են նաև հոգեբանի աջակցության ծառայություններ: Տեսողության ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների երկու երրորդին երաշխավորվել է տիֆլոմանկավարժի և հատուկ մանկավարժի ծառայություններ: Լսողական ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաների 91 տոկոսին առաջարկվել է սուրդո մանկավարժի աջակցություն, մինչդեռ գնահատման արդյունքներով լսողության խնդիր ունեցող երեխաներն ունենին թերթ կամ միջին աստիճանի խանգարումներ: Այս խմբի երեխաների 76 տոկոսին նշանակվել է նաև լոգոպեդի աջակցություն և հատուկ մանկավարժի օգնություն՝ 79 տոկոսին:

Շարժողական ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների 83 տոկոսին առաջարկվել է ֆիզիոթերապիստի ծառայություններ: Սակայն այս խմբի առավել մեծ թվով երեխաների նշանակվել են հատուկ մանկավարժի ծառայություններ՝ 84 տոկոսին; Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների 97 տոկոսին նշանակվել է լոգոպեդի աջակցություն, միննույն ժամանակ նրանց 50 տոկոսին նշանակվել է նաև հատուկ մանկավարժի աջակցություն:

Գծապատկեր 34: ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման տեսակի և առաջարկված մասնագետների աջակցության



Որքան ծանր է ֆունկցիայի խանգարման աստիճանն, այնքան մեծ է հավանականությունը, որ երեխային ծառայություններ կմատուցեն գրեթե բոլոր հնարավոր մասնագետների թիմով: 17 երեխաների երաշխավորվել էին բոլոր մասնագետների ծառայությունները:

Այսպիսով, ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրման գործող ձևաչափը հնարավորություն է տալիս տեսնելու, թե երեխան որ ֆունկցիայի խանգարում ունի և ինչ աստիճանի, արդյոք անհրաժեշտ է երեխայի համար հարմարեցնել առարկայական ծրագիրը թե ոչ, և ինչ մասնագետների խումբ պետք է ծառայություն մատուցի երեխային:

Սակայն այդ ձևաչափը չի արտացոլում ԿԱՊԿ գնահատման ժամանակ հավաքագրված ամբողջ հարուստ տեղեկատվությունը երեխայի ուժեղ ու թույլ կողմերի մասին, այն միջավայրային գործոնների մասին, որոնք դրական կամ բացասական են ազդում երեխայի կենսագործունեության վրա, և հատկապես ինչպիսի աշխատանք պետք է տանեն երաշխավորված մասնագետները երեխայի հետ՝ որ առարկաների ծրագրերը պետք է հարմարեցվեն, ինչ արդյունքի հասնելու համար և ինչ ժամանակահատվածի համար: Այդ ամբողջ տեղեկատվությունը հավաքագրվում է և գրանցվում է ամեն մի մասնագետի նշումներում, սակայն ոչ մի տեղ չի ամփոփվում և չի կիրառվում միասնական քաղաքականության մշակման համար:

5. ԱՀԿ ՖՄԴ արձանագրություններով ամփոփված 30 գնահատումների արդյունքը

Ըստ հաշմանդամության գնահատման նոր մեթոդաբանության, առաջարկվում է ներմուծել առանձնացված արձանագրություններ ըստ տարիքային խմբերի և հաշմանդամության տեսակի և գնահատել հիմնականում երեխաների գործունեությունն ու մասնակցությունն ըստ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանության և ծածկագրերի¹⁶:

Առաջարկվող առձանագրությունները կիրառվել են 30 երեխաների գնահատման ժամանակ և ստորև վերլուծությունը ամփոփում է այդ արձանագրությունների տեղեկատվությունը:

Փորձնական գնահատումներն իրականացվել են 2018 թվականի մայիս-հունիս, հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ Երևանում, Շիրակում, Արմավիրում, Լոռիում, Արարատում և Վայոց ձորում: Գնահատում անցած երեխաներից 22-ը տղաներ էին, 16 -ը՝ մինչև 10 տարեկան էին, 10-ը՝ 11-ից 15 տարեկաններ: 26-ն առաջին անգամ էր անցնում գնահատում և 4-ը վերագնահատվում էր: **28-ի համար արձանագրվել է ԿԱՊԿ:**

Գնահատման արդյունքների ամփոփման այս մոտեցումը հնարավորություն է տալիս ստանալու երեխայի համար կարևոր ֆունկցիաների սահմանափակման աստիճանը, գնահատված գործունեության և մասնակցության ոլորտում ունեցած ֆունկցիոնալ խնդիրները և միջավայրային գործոնների ազդեցության աստիճանը կամ տվյալ ծառայության կարիքի աստիճանը: Արձանագրությունների այս մոտեցումը հնարավորություն է տալիս նաև դուրս բերելու տվյալ ենթաոլորտի, ինչպես նաև երեխայի ընդհանուր ֆունկցիոնալության ամփոփ միավորը, ինչը պատկերավոր ցույց է տալիս երեխայի ուժեղ ու թույլ կողմերը և այն ոլորտները, որտեղ պետք է ուղղել մասնագետների աշխատանքը: Բացի այդ, ծածկագրերով տեղեկատվության ներկայացումը առավել դյուրին է դարձնում տեղեկատվության փոխանակումը տարբեր մասնագետների միջև:

¹⁶ Գնահատման համար առանձնացված արձանագրություններում մեծ թիվ են կազմում ԱՀԿ ՖՄԴ-ի d-գործունեություն և մասնակցություն ոլորտից ընտրված ծածկագրերը, իսկ մարմնի կառուցվածք և օրգանիզմի ֆունկցիաներից՝ s/b բաժնից ընտրվել են միայն տվյալ հաշմանդամության տեսակի համար վճռորոշ ֆունկցիաների ծածկագրերը:

Եթե գնահատում անցնող երեխաների ֆունկցիայի խանգարման աստիճանները դիտարկում ենք ըստ ՖՄԴ ծածկագրերի և որակիչների, ապա հիմք են ընդունվում ԱՀԿ ՖՄԴ որակիչների համար գիտականորեն սահմանված միջակայքերը: Եթե երեխայի մոտ չի արձանագրվում որևէ ֆունկցիայի խախտում/խանգարում, ապա միավորը տատանվում է 0-4 տոկոսի սահմաններում, եթե երեխայի մոտ արձանագրվում է որևէ ֆունկցիայի խորը խախտում կամ խանգարում, ապա վերին սահմանն է 96-100 տոկոսը: Մյուս միջակայքերն ավելի մեծ են, քանի որ հիմք է վերցվել այն տրամաբանությունը, որ միջին աստիճանի խախտումը կամ խանգարումը պետք է համահունչ լինի բացարձակ խախտման/խանգարման կետին: Իսկ «խախտում, խանգարում չկա» կամ «բացարձակ խախտում, խանգարում» ծածկագրերի չափման մեջ սխալվելու թույլատրելի սահմանը մինչև 5% է: Մինևույն ժամանակ ԱՀԿ ՖՄԴ առաջարկում է երկրներին բնակչության նորմի կամ փորձարկված գործիքների միջոցով առավել հստակեցնել միջակայքերի շեմերը:

ԱՀԿ ՖՄԴ որակիչների ծածկագրման տրամաբանությունը

xxx.0	Խախտում, խանգարում չկա	(առկա չէ, բացակայում է,	0-4 %
xxx.1	Թեթև աստիճանի խախտում, խանգարում	(աննշան, ցածր,...)	5-24 %
xxx.2	Միջին աստիճանի խախտում, խանգարում	(չափավոր, տանելի,...)	25-49 %
xxx.3	Ծանր աստիճանի խախտում, խանգարում	(խիստ, արտահայտված,...)	50-95 %
xxx.4	Խորը խախտում, խանգարում	(ամբողջական,...)	96-100 %
xxx.8	ճշտված չէ		
xxx.9	կիրառելի չէ		

ԿԱՊԿ գնահատման ժամանակ Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետները կիրառում են գնահատման միջազգային և տեղական փորձարկում անցած գործիքներ ու չափորոշիչներ (լոգոպեդական կամ հոգեբանական թեստեր, IQ թեստ և այլն), որոնք հնարավորություն են տալիս առավել հստակ որոշելու երեխայի մոտ կոնկրետ ֆունկցիայի կամ կատարողականի/կարողության սահմանափակման աստիճանները: Հետևաբար, ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի և որակիչների կիրառմամբ գնահատում իրականացնելիս մասնագետներն առաջնորդվում են այդ գործիքների սանդղակներով: 8 և 9 որակիչները գնահատման ժամանակ չեն կիրառվում: Երեխայի համար ֆունկցիոնալության սահմանափակման **ամփոփ միավորը** սահմանելիս առաջնորդվում են հետևյալ միջակայքերով՝

Ֆունկցիոնալության սահմանափակման ամփոփ միավորի որոշման համար Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից կիրառվող միջակայքերը

Խախտում, խանգարում չկա	(առկա չէ, բացակայում է,	0-4 %
Թեթև աստիճանի խախտում, խանգարում	(աննշան, ցածր,...)	5-24 %
Միջին աստիճանի խախտում, խանգարում	(չափավոր, տանելի,...)	25-49 %
Ծանր աստիճանի խախտում, խանգարում	(խիստ, արտահայտված,...)	50-75 %
Խորը խախտում, խանգարում	(ամբողջական,...)	76-100 %

Ակնկալվում է, որ որոշակի թիվ գնահատումներից հետո, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը կկարողանա հստակեցնել Հայաստանի համար միջակայքերի առավել ընդունելի սահմանները:

Գնահատման արդյունքների արձանագրման երկու մեթոդների համեմատությունը

Գնահատման արդյունքների արձանագրման երկու մեթոդների համեմատությունն իրականացվել է ըստ գործող կարգով ԿԱՊԿ սահմանման համար հիմք հանդիսացող ֆունկցիայի խանգարումների, այսինք, երեխաների գնահատման արդյունքները դիտարկվել են ըստ գործող արձանագրությամբ սահմանված ֆունկցիաների խանգարումների, ապա միայն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների համար ներկայացվել է, թե ինչպիսին կլինեն գնահատման ամփոփ պատկերը, եթե կիրառվեր արձանագրության առաջարկվող տարբերակը: Վերլուծության համար ընտրվել է այս խումբը, քանի որ ԿԱՊԿ ունեցող 28 երեխաներից 14-ը՝ կեսը, ունեն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում: Միևնույն ժամանակ ամփոփ պատկերի համեմատություն արվել է բոլոր երեխաների համար:

ԿԱՊԿ ունեցող 28 երեխաների բաշխումն ըստ գործող արձանագրության հետևյալն է.

Աղյուսակ 17: Գործող արձանագրությամբ ԿԱՊԿ գնահատման արդյունքները 28 երեխաների համար

	Թեթև	Միջին	Ծանր	Խորը	Ընդամենը
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	3	5	4	2	14
Տեսողության ֆունկցիաներ	2	1	0	0	3
Լսողության ֆունկցիաներ	0	2	0	0	2
Շարժողական ֆունկցիաներ	1	1	1	3	6
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	2	0	1	0	3
Ընդամենը	8	9	6	5	28

Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների համար N=14 գնահատվել են նույն ենթակատեգորիաները/ծածկագրերը, սակայն այս անգամ առաջարկվող արձանագրության ձևը հնարավորություն է տվել տեսնելու ոչ միայն ենթակատեգորիայում խնդիր ունեցողների թվաքանակը, այլև տվյալ ենթակատեգորիայում երեխայի ունեցած խնդրի աստիճանը: Օրինակ, այս խմբի 14 երեխաների համար գործող արձանագրությամբ կարելի էր տեսնել, որ բոլոր 14 երեխաներն էլ ունեն խնդիր ինտելեկտուալ ֆունկցիաներում՝ b117 ծածկագրի ներքո: Առաջարկվող արձանագրությունը թույլ է տալիս տարբերակել և արձանագրել, որ 4 երեխաների մոտ խնդիրը թեթև է, 4 երեխաների մոտ՝ միջին, հաջորդ 4-ի մոտ՝ ծանր, իսկ 2 երեխաներ ունեն խորը ինտելեկտուալ ճանաչողական ֆունկցիայի խանգարում: Հետևաբար, նրանց

կրթության կազմակերպման համար անհրաժեշտ է տարբեր ինտենսիվությամբ մասնագիտական աջակցություն:

Աղյուսակ 18: Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ենթակատեգորիաներում արձանագրված սահմանափակումների աստիճանի, N=14

	Արձանագրված ֆունկցիաների խանգարման ենթակատեգորիաները	ՖՄԴ ծածկագիրը	Որակիչները				
			0	1	2	3	4
1.	Ինտելեկտուալ ֆունկցիաները Ընդհանուր հոգեկան ֆունկցիաներ, որոնք անհրաժեշտ են տարբեր մտավոր, այդ թվում՝ բոլոր ճանաչողական ֆունկցիաները և ամբողջ կյանքի ընթացքում դրանց զարգացումը հասկանալու և կառուցողական ձևով ամբողջացնելու համար	b117		4	4	4	2
2.	Բարձրագույն ճանաչողական ֆունկցիաներ/ինտելեկտուալ (կարդալը, գրելը, առօրյա կյանքի կազմակերպելը, որոշումներ կայացնելը)	b164	2	4	3	5	
3.	Հիմնական ճանաչողական ֆունկցիաներ (հասկացություններ, սովորելը, խաղը)	b163	2	4	2	4	2
4.	Հաշվարկներ կատարելու ֆունկցիաներ (հաշվելը)	b172		3	5	2	4
5.	Մտածողության ֆունկցիաներ (մտածելը)	b160	3	2	5	2	2
6.	Ուշադրության ֆունկցիաներ (ուշադրության կենտրոնացումը)	b140		4	5	3	2
7.	Լեզվի մտավոր ֆունկցիաներ (հաղորդակցվելիս բանավոր հաղորդագրություններ ընկալելը, հաղորդակցվելիս ոչ վերբալ հաղորդագրություններ ընկալելը, գրավոր խոսքի ընկալում, խոսելը, հաղորդակցությունը)	b167		4	4	2	4
8.	Հիշողության ֆունկցիաներ (հիշողությունը)	b144		4	6	4	
9.	Հոգեշարժողական ֆունկցիաներ (սեփական վարքի կառավարում)	b147	2	5	2	4	1
10.	Ընկալման ֆունկցիաներ (դիտելը, լսելը, այլ զգայարանների նպատակային օգտագործումը)	b156	3	4	3	3	1

Բացի տարբերակված պատկերից, ստացված արդյունքները ամփոփելով, կարելի է ստանալ այս ոլորտի համար ֆունկցիոնալ սահմանափակման ընդհանուր միավորը՝ յուրաքանչյուր երեխայի համար: ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերով b100 դասի ներքո դիտարկվում են մարդու բոլոր հոգեկան ֆունկցիաները, որոնք կապված են ուղեղի ֆունկցիաների հետ՝ ընդհանուր հոգեկան ֆունկցիաները, ինչպիսիք գիտակցությունը, էներգիան և եռանդը, և սպեցիֆիկ հոգեկան ֆունկցիաները, ինչպիսիք են հիշողությունը, լեզվի և հաշվարկներ

կատարելու հոգեկան ֆունկցիաները: Քանի որ վերը նշված բոլոր 10 ծածկագրերը գնահատվել են 30 երեխաների մոտ, ապա ենթադրյալի ամփոփ միավորը ևս հաշվարկվել է բոլոր 30 երեխաների համար, ապա առանձին ԿԱՊԿ ունեցող 28 երեխաների համար և առանձին՝ միայն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարման հիման վրա ԿԱՊԿ կարգավիճակ ստացած 14 երեխաների համար:

Աղյուսակ 19: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների մոտ b100՝ հոգեկան (ինտելեկտուալ/մտավոր) ֆունկցիաներում արձանագրված ֆունկցիայի խանգարման աստիճանի ամփոփ միավորը

ԱՀԿ ՖՄԴ ֆունկցիայի խանգարման աստիճանը	Գնահատված բոլոր երեխաներ	ԿԱՊ: ունեցող երեխաներ	Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաներ
0-4% չունի խնդիր	8	6	0
5-24% թեթև	6	6	3
25-49% միջին	6	6	5
50-75% ծանր	3	3	2
75-100% խորը	7	7	4
Ընդամենը երեխաներ	30	28	14

ԿԱՊԿ գնահատում անցած 8 երեխաների մոտ այս ենթադրյալում խնդիրներ չեն արձանագրվել՝ 0-4%, նրանցից 2-ը ԿԱՊԿ ունեցող չեն ճանաչվել, իսկ ԿԱՊԿ ունեցող 6 երեխաներ ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաներում խնդիրներ չեն ունեցել:

b100-ում ամփոփ միավորը դիտարկվել է նաև ըստ ԿԱՊԿ արձանագրված տեսակի: Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաներում խանգարումներով ԿԱՊԿ արձանագրված երեխաների մոտ այս խմբի ֆունկցիաների խանգարման ամփոփ միավորը բարձր է: Ուղեղի հետ կապված հոգեկան ֆունկցիաների խանգարման ամփոփ միավորը բարձր է նաև շարժողական ֆունկցիաների խանգարումներ ունեցող երեխաների մոտ:

Աղյուսակ 20: ԿԱՊԿ ունեցող 28 երեխաների բաշխումն ըստ ԿԱՊԿ արձանագրության և b100 ծածկագրերում ունեցած ամփոփ միավորի

ԿԱՊԿ արձանագրությունը	b100 ֆունկցիաներում խանգարման ամփոփ միավորը					Ընդամենը երեխաներ
	0-4% չունի խնդիր	5-24% թեթև	25-49% միջին	50-75% ծանր	75-100% խորը	
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ		3	5	2	4	14
Տեսողության ֆունկցիաներ	1	2				3
Լսողության ֆունկցիաներ	1	1				2
Շարժողական ֆունկցիաներ	2			1	3	6
Զայնի և խոսքի ֆունկցիաներ	2		1			3
Ընդամենը երեխաներ	6	6	6	3	7	28

ԱՀԿ ՖՄԴ հիման վրա մշակված արձանագրություններով գնահատման արդյունքների գրանցումը տալիս է մեկ այլ առավելություն. գնահատված երեխաների համար հնարավոր է տեսնել, թե գործունեության ու մասնակցության ոլորտներում որտեղ ունեն ֆունկցիոնալ սահմանափակումներ և ինչպիսի միջավայրային գործոններ են պետք նրանց լիարժեք մասնակցության ապահովման համար:

d100 - *Սովորելը և գիտելիքը կիրառելը* ոլորտի համար արձանագրության մեջ ներառված են 8 ծածկագրեր. զգայարանների նպատակային օգտագործումից ներառված են d110 և d115 ծածկագրերը, գիտելիքը կիրառելու կարողությունները գնահատելու համար դիտարկվում են d161, d163, d166, d170, d172 և d175 ծածկագրերը: Գնահատման արդյունքներով, ԿԱՊԿ ունեցող երեխաների մեծ մասը դժվարություններ ունենում են հաշվելիս, խնդիրներ լուծելիս, կարդալու և գրելու ժամանակ, ինչպես նաև դժվարանում են ուշադրությունը պահպանել: Այդ ոլորտներում ծանր և խորը խնդիրներ ունեցողները հիմնականում ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաներն են:

Աղյուսակ 21: ա/ ԿԱՊԿ ունեցող երեխաների բաշխումն ըստ «Սովորելը և գիտելիքը կիրառելը» ոլորտում ունեցած դժվարությունների, N=28

	Արձանագրված ֆունկցիաների խանգարման ենթակատեգորիաները	ՖՄԴ ծածկագիրը	Որակիչները					Ընդամենը երեխաներ
			0	1	2	3	4	
1.	Դիտելը (նայելը)	d110	15	10	2	1		28
2.	Լսելը	d115	21	4	2	1		28
3.	Ուշադրությունը պահպանելը	d161	8	5	7	5	3	28
4.	Մտածելը	d163	11	3	5	6	3	28
5.	Կարդալը	d166	8	7	4	5	4	28
6.	Գրելը	d170	8	6	5	6	3	28
7.	Հաշվելը	d172	7	7	5	4	5	28
8.	Խնդիրներ լուծելը	d175	7	7	5	4	5	28

բ/ Միայն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների N=14 բաշխումն ըստ «Սովորելը և գիտելիքը կիրառելը» ոլորտում ունեցած դժվարությունների

	Արձանագրված ֆունկցիաների խանգարման ենթակատեգորիաները	ՖՄԴ ծածկագիրը	Որակիչները				
			0	1	2	3	4
1.	Դիտելը (նայելը)	d110	8	5	1		
2.	Լսելը	d115	9	3	2		
3.	Ուշադրությունը պահպանելը	d161		4	5	3	2
4.	Մտածելը	d163	2	3	3	4	2
5.	Կարդալը	d166		6	2	3	3
6.	Գրելը	d170		5	3	4	2
7.	Հաշվելը	d172		5	3	3	3
8.	Խնդիրներ լուծելը	d175		5	3	3	3

Եթե փորձենք համեմատել b և d ոլորտների գնահատման արդյունքները, այսինքն եթե փորձենք դիտարկել, օրինակ, թե հաշվելու կամ ուշադրության, մտածելու ֆունկցիայի խանգարումները ինչպես են ազդել հաշվելու, ուշադրությունը պահպանելու կամ մտածելու կարողությունների վրա, ապա նկատում ենք, որ դեպքերի 80-90 տոկոսի համար ֆունկցիայի խանգարման և կարողությունների սահմանափակման աստիճանները համընկնում են: Միննույն ժամանակ լինում են դեպքեր, որ ֆունկցիայի խանգարումը չի հանգեցնում նույն աստիճանի կարողության սահմանափակման: Դա մեկ անգամ ևս վկայում է, որ արձանագրությունը չպետք է պարունակի **միայն** ֆունկցիայի խանգարման արդյունքները, այլ ծառայությունների սահմանման համար պետք է հաշվի առնվեն երեխայի կարողության ու կատարողականի հետ կապված խնդիրները:

d100-ի ընդհանուր միավորի հաշվարկը կատարվել է նույն տրամաբանությամբ, ինչ և b100-ի դեպքում: Այս անգամ «Սովորելը և գիտելիքը կիրառելը» ոլորտի համար հաշվարկված ամփոփ միավորի բաշխումն ըստ ԿԱՊԿ արձանագրության տեսակի ցույց է տալիս, որ կրկին, ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների մոտ ոլորտի ամփոփ միավորն ավելի բարձր է, սակայն խորը կամ լիովին սահմանափակումներ ունեն միայն 2 երեխա: Շարժողական ֆունկցիաների խանգարում ունեցող երեխաների դեպքում պատկերը համահունչ է:

Աղյուսակ 22: ԿԱՊԿ ունեցող 28 երեխաների բաշխումն ըստ ԿԱՊԿ արձանագրության և d100 ծածկագրերում ունեցած ամփոփ միավորի


ԿԱՊԿ արձանագրությունը	d100 ոլորտում ունեցած սահմանափակման ամփոփ միավորը					Ընդամենը երեխաներ
	0-4% չունի խնդիր	5-24% թեթև	25-49% միջին	50-75% ծանր	75-100% խորը	
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	0	2	6	4	2	14
Տեսողության ֆունկցիաներ	2	1	0	0	0	3
Լսողության ֆունկցիաներ	1	1	0	0	0	2
Շարժողական ֆունկցիաներ	2	0	1	1	2	6
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	2	0	1	0	0	3
Ընդամենը երեխաներ	7	4	8	5	4	28

Ըստ առաջարկվող նոր մոտեցման պետք է կիրառվեն ԿԱՊԿ գնահատման արդյունքների գրանցման տարբերակված արձանագրություններ: Դա նպատակ ունի դուրս բերելու այն կարևոր՝ վճռորոշ ծածկագրերը, որոնք հիմք են հանդիսանում տարբեր խնդիրներ ունեցող երեխաների համար հաշվարկելու ֆունկցիոնալ սահմանափակման աստիճանը:

Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների համար հաշվարկվել է ընդհանուր հոգեկան ֆունկցիաների ամփոփ միավորը՝ b100, գործունեություն և մասնակցության ոլորտի ամփոփ միավորը և ընդհանուր ֆունկցիոնալության սահմանափակման միավորը: Վերլուծությունը ցույց է տալիս ֆունկցիայի խանգարումների և գործունեության ու մասնակցության սահմանափակման

աստիճանների միջև նկատվող տարբերությունը, կան երեխաներ, ովքեր ունեն միջին, ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումներ, սակայն կարող են լինել ակտիվ, ունենալ մասնակցություն իրենց միջավայրում, հետևաբար կիրառվող արձանագրության ձևաչափի վերանայման առաջարկությունը էլ ավելի է հիմնավորվում. ԿԱՊԿ գնահատման արդյունքում հավաքագրված ամբողջ տեղեկատվությունը պետք է ամփոփվի այնպես, որ մասնագետներին ու երեխայի հետ աշխատող մանկավարժներին հնարավորություն տրվի պարզ տեսնելու, թե որ ոլորտներում/ծածկագրերում ունի երեխան խնդիր և ինչ աստիճանի, որն է նրա ուժեղ կամ թույլ կողմը և ինչպես կառուցել երեխայի միջամտության քայլերը, բարձրացնելու նրա մասնակցությունը ուսման պրոցեսում: Այսինքն, ընտրված արձանագրության ամեն մի ծածկագրի համար, որտեղ արձանագրվել է խնդիր, պետք է նաև առաջարկվի միջամտության քայլ: Միասնական ընդհանուր միավորը կօգնի սահմանելու միջամտության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բաշխումը:

Գծապատկեր 35: Հոգեկան ֆունկցիաներում, գործունեության ու մասնակցության և ընդհանուր ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանների համեմատությունը ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների համար



Առաջարկվող արձանագրությունները պարունակում են նաև ծածկագրեր, որոնք կօգնեն պլանավորելու երեխաներին մատուցվող ծառայությունները: Միջավայրային գործոնների ծածկագրերը հինգ ենթախմբերի են՝

- e100 - Արտադրանք և տեխնոլոգիաներ
- e200 - Շրջակա բնական միջավայր և այդ միջավայրի վրա մարդածին ազդեցություն
- e300 - Աջակցություն և հարաբերություններ
- e400 - Դիրքորոշումներ և վերաբերմունք
- e500 - Ծառայություններ, համակարգեր և ոլորտային քաղաքականություն:

Միջավայրային գործոնների ծածկագրերի վերլուծությունը ցույց է տալիս թե հատկապես ինչ միջամտության կարիք ունեն երեխաները և ինչպիսի ինտենսիվությամբ: Ընդ որում, ծառայությունների ու միջամտության ցանկը բավական տարբեր է և չի սահմանափակվում գործող արձանագրությամբ առաջարկվող միայն նեղ մասնագետների

ծառայություններով: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաները ունեն տարբեր միջամտության կարիք. աջակցող ապրանքների, տեխնոլոգիական միջոցների, դեղորայքի, հարազատների ու ընկերների աջակցության, վերաբերմունքի ու մասնագիտական ծառայությունների:

Իհարկե, նշված եռամսկարդակ ծածկագրերը տալիս են ընդհանուր ոլորտը, իսկ գնահատման ժամանակ մասնագետները կարողանում են դուրս բերել 4-րդ մակարդակի ծածկագրերով սահմանված ծառայությունները:

Ծառայությունների կարիքի մասին ամփոփ տեղեկատվությունը ևս կաջակցի ԿԱՊԿ ունեցող երեխաներին անհրաժեշտ ծառայությունների ու միջամտության պլանավորման համար:

Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող 14 երեխաների մասնակցության և գործունեության ապահովման համար ծառայությունների կարիքը ներկայացված է ըստ միջավայրային գործոնների հինգ ենթաոլորտների:

Ստորև աղյուսակները ցույց են տալիս ծառայությունների կարիքի տարբերությունները. e100 «Արտադրանք և տեխնոլոգիաներ» ենթաոլորտի համար դիտարկվել են 5 ուղղությամբ ծառայություններ՝ անձնական սպառման օգտագործման, առօրյա կյանքում անձնական օգտագործման, հաղորդակցության, կրթության, մշակույթի, հանգստի համար անհրաժեշտ արտադրանք ու տեխնոլոգիաներ: Գրեթե բոլոր երեխաները կարիք ունեն կրթության կազմակերպման համար՝ գիտելիքներ, փորձ կամ հմտություններ ձեռք բերելու համար օգտագործվող սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, մեթոդների և տեխնոլոգիաների, այդ թվում հարմարեցված կամ հատուկ նշանակության:

Աղյուսակ 23: Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e100 «Արտադրանք և տեխնոլոգիաներ» ենթաոլորտի

		Չունի կարիք	Ունի թեթև աջակցության կարիք ժամանակի 5-24%	Ունի միջին աջակցության կարիք ժամանակի 25-49%	Ունի ծանր. ինտենսիվ աջակցության կարիք ժամանակի 50-95%	Միշտ ունի աջակցության կարիք	Ընդամենը
e110	Անձնական սպառման արտադրանք կամ նյութեր	5	5	2	2		14
e115	Առօրյա կյանքում անձնական օգտագործման արտադրանք և տեխնոլոգիաներ	4	4	4	2		14
e125	Հաղորդակցության համար նախատեսված	8	4		2		14

		Չունի կարիք	Ունի թեթև աջակցության կարիք ժամանակի 5-24%	Ունի միջին աջակցության կարիք ժամանակի 25-49%	Ունի ծանր . ինտենսիվ աջակցության կարիք ժամանակի 50-95%	Միջոց ունի աջակցության կարիք	Ընդամենը
	արտադրանք և տեխնոլոգիաներ						
e130	Կրթության համար նախատեսված արտադրանք և տեխնոլոգիաներ	1	6	3	4		14
e140	Մշակույթի, հանգստի ու սպորտի համար նախատեսված արտադրանք և տեխնոլոգիաներ	8	3		3		14

Շրջակա բնական միջավայրը ևս կարող է դրական կամ բացասական ազդեցություն ունենալ երեխաների ակտիվ մասնակցության վրա: Գնահատված 14 երեխաներից միայն մեկի համար է նշվել, որ լույսի հարմարեցման հետ կապված ունի թեթև խնդիր:

Ընտանիքի անդամների, մերձավորների ու ընկերների, ինչպես նաև մասնագետների աջակցություն ունեն գրեթե բոլոր երեխաները: Առողջապահական ծառայությունների կարիքն ու ընտանիքի անդամների աջակցությունն առավել ինտենսիվ կարիք են: Համեմատաբար քիչ ինտենսիվությամբ կարիք նշվել է մերձավոր ազգականներից, ծանոթներից ու ընկերներից ու անձանոթներից:

Աղյուսակ 24: Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e300 «Աջակցությունը և հարաբերությունները» ենթաոլորտի

		Չունի կարիք	Ունի թեթև աջակցության կարիք ժամանակի 5-24%	Ունի միջին աջակցության կարիք ժամանակի 25-49%	Ունի ծանր . ինտենսիվ աջակցության կարիք ժամանակի 50-95%	Միջոց ունի աջակցության կարիք	Ընդամենը
e310	Ամիջական ընտանիքի անդամներ	1	4	4	5		14
e315	Մերձավոր ազգականներ	8	2	4			14
e320	Ընկերներ	2	5	6	1		14
e325	Ծանոթներ, հասակակիցներ, հարևաններ և	8	2	3	1		14

		Չուն ի կարի ք	Ունի թեթև աջակցությ ան կարիք ժամանակի 5-24%	Ունի միջին աջակցությ ան կարիք ժամանակի 25-49%	Ունի ծանր . ինտենսիվ աջակցությա ն կարիք ժամանակի 50-95%	Միշտ ունի աջակցությ ան կարիք	Ընդամեն ը
	համայնքի անդամներ						
e340	Անձնական խնամքի ծառայություններ մատուցող անձինք և անձնական օգնականներ	6	2	4	2		14
e345	Անձանոթներ	8	3	3			14
e355	Առողջապահությա ն ոլորտի մասնագետներ		3	6	5		14

Ընկերների, բարեկամների, հարազատների, մասնագետների վերաբերմունքը կարող է աջակցող և խոչընդոտող հանգամանք լինել երեխայի զարգացման, մասնակցության և գործունեության համար: Գնահատված 14 երեխաների համար առավել կարևոր է ընտանիքի անդամների վերաբերմունքը և դիրքորոշումը: Երեք երեխաների համար ինտենսիվ աշխատանք պետք է տարվի ընտանիքի անդամների հետ բարելավելու ընտանիքի անդամների դրական վերաբերմունքը: Երկու երեխաների համար գնահատումը վերհանել էր, որ անհրաժեշտ են ընկերների վերաբերմունքի փոփոխություն, երեխայի մասնակցության ապահովման համար:

Աղյուսակ 25: Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e400 «Վերաբերմունք» ենթաոլորտի

		Չուն ի կարի ք	Ունի թեթև աջակցությ ան կարիք ժամանակի 5-24%	Ունի միջին աջակցությ ան կարիք ժամանակ ի 25-49%	Ունի ծանր . ինտենսիվ աջակցությ ան կարիք ժամանակի 50-95%	Միշտ ունի աջակցությ ան կարիք	Ընդամեն ը
e410	Անմիջական ընտանիքի անդամների անձնական դիրքորոշումներ	4	4	3	3		14
e415	Մերձավոր ազգականների անձնական դիրքորոշումներ	9	2	1	2		14
e420	Ընկերների անձնական դիրքորոշումներ	7	3	2	2		14
e440	Անձնական խնամքի ծառայություն մատուցող անձանց և անձնական օգնականների անձնական դիրքորոշումներ	9	1	4			14

		Չուն ի կարի ք	Ունի թեթև աջակցությ ան կարիք ժամանակի 5-24%	Ունի միջին աջակցությ ան կարիք ժամանակ ի 25-49%	Ունի ծանր . ինտենսիվ աջակցությ ան կարիք ժամանակի 50-95%	Միշտ ունի աջակցությ ան կարիք	Ընդամեն ը
e450	Առողջապահության ոլորտի մասնագետների անձնական դիրքորոշումներ	7	5	2			14

Հինգերորդ ենթաոլորտը վերաբերում է «Ծառայություններ, վերահսկողության համակարգեր և ոլորտային քաղաքականություն» հարցերին: Դիտարկվել են միայն առողջապահական և կրթական համակարգերից երեխաներին անհրաժեշտ ծառայությունների նկարագրությունը: Երեխաների մոտ կեսի համար նշվել է, որ ունեն թեթև մասնագիտական աջակցության կարիք, մյուս կեսի համար անհրաժեշտ են միջին և ծանր ինտենսիվությամբ աջակցություն:

Աղյուսակ 26: Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար գնահատված ծառայությունների կարիքն ըստ e500 «Աջակցությունը և հարաբերությունները» ենթաոլորտի

		Չուն ի կարի ք	Ունի թեթև աջակցությ ան կարիք ժամանակի 5-24%	Ունի միջին աջակցությ ան կարիք ժամանակ ի 25-49%	Ունի ծանր . ինտենսիվ աջակցությ ան կարիք ժամանակի 50-95%	Միշտ ունի աջակցությ ան կարիք	Ընդամեն ը
e580	Առողջապահական ծառայություններ, համակարգեր և այդ ոլորտի քաղաքականություն	4	7	1	2		14
e585	Կրթության և վերապատրաստման ծառայություններ, համակարգեր և այդ ոլորտի քաղաքականություն	4	6	2	2		14

Այսպիսով, ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրման առաջարկվող մոտեցումը առավել հիմնավոր կերպով է օգնում ստանալու երեխայի ֆունկցիոնալ պատկերը և ծրագրել անհրաժեշտ ծառայությունները: Որոշակի լրամշակումներ անելով հնարավոր կլինի նաև հստակեցնել երեխայի հետ աշխատող մասնագետների կարիքը և նրանց կողմից երեխային մատուցվելիք ծառայությունների ինտենսիվությունը, ինչպես նաև վերագնահատման ժամանակ դուրս բերել ծառայությունների ազդեցությունը:

Եզրակացություններ

2018 թվականի ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում անցած 3513 երեխաների գնահատման արդյունքների վերլուծությունն առաջին փորձն էր ամփոփելու գնահատման արդյունքների հիման վրա մշակվող արձանագրությունները: Վերլուծության արդյունքները թույլ են տվել ստանալ մանրամասն վիճակագրական տեղեկատվություն մեկ տարում Հայաստանում ԿԱՊԿ գնահատում անցնող երեխաների մասին՝ նրանց սեռատարիքային կազմը, աշխարհագրությունը, ԿԱՊԿ գնահատման արդյունքում ԿԱՊԿ կարիքի արձանագրման տոկոսը, վերագնահատումների մասնաբաժինը և գերակշռող ֆունկցիոնալ խնդիրները, որոնց հիմքով սահմանվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, և ԿԱՊԿ ունեցող երեխաներին երաշխավորվող ծառայությունների տեսակը:

Վերլուծական աշխատանքի երկրորդ նպատակն էր ցույց տալ կիրառվող արձանագրության անհամապատասխանությունը ԿԱՊԿ կարիքների գնահատման ժամանակ վերհանված տեղեկատվության ամփոփ ներկայացման և գնահատում անցած երեխաներին ծառայությունների որոշարկման, ինչպես նաև անհատական ուսումնական պլանի թիրախների սահմանման համար անհրաժեշտ ուղղորդումների տրամադրման տեսանկյունից:

Գործող արձանագրության ձևափի հիման վրա ԿԱՊԿ գնահատման ժամանակ վերհանված տեղեկատվության ամփոփման մոտեցումը համեմատվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման գաղափարախոսության հիման վրա մշակված արձանագրությունների հիման վրա ստացվող տեղեկատվության հետ՝ ցույց տալու առաջարկվող մոտեցման առավելությունը ԿԱՊԿ ունեցող երեխաներին նպատակային ծառայությունների սահմանման և մասնագետների աշխատանքի ուղղորդման համար:

Պատասխանելով վերլուծական աշխատանքի առջև դրված հարցադրումներին, եզրակացությունները հետևյալն են.

Ինչպիսի՞ ժողովրդագրական տվյալներ ունեն ԿԱՊԿ գնահատում անցնող երեխաները:

- ✓ Համընդհանուր ներառմանն ուղղված բարեփոխումների ընթացքին զուգահեռ ԿԱՊԿ գնահատումներն իրականացվում են հիմնականում այն մարզերում, որտեղ հատուկ դպրոցները պետք է վերակազմավորվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և բոլոր երեխաները ներառվեն ընդհանուր հանրակրթական դպրոցներ: Հետևաբար այս փուլում հնարավոր չէ նշել, թե որ մարզերում են գերակշռում ԿԱՊԿ գնահատումները: 2018 թվականին գնահատումները հիմնականում իրականացվել են Երևանում, Արմավիրում, Լոռիում և Շիրակում: Առաջնակի գնահատումներին զուգահեռ իրականացվել են նաև վերագնահատումներ: 2018 թվականին իրականացրած վերագնահատումների կեսից ավելին բաժին է ընկել Շիրակին և Երևանին:
- ✓ ԿԱՊԿ գնահատման գործընթացներում հիմնականում ներառված են 10-ից 11 տարեկանները. 2018 թվականին գնահատում անցած 3513 երեխաներից կեսից ավելին՝ 51,5 տոկոսը 6-10 տարեկան էին, իսկ 43,4 տոկոսը՝ 11-ից 15 տարեկան:

- ✓ Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում, ինչպես նաև ավագ դասարաններում ԿԱՊԿ գնահատումներ դեռ շատ քիչ են իրականացվում. գնահատում անցած երեխաների թվում նախադպրոցական տարիքի երեխաները և ավագ դպրոցի աշակերտները կազմել են 5 տոկոսից քիչ:
- ✓ Գնահատում անցնող երեխաների մեծ մասը տղաներ են. տղաները գերակշռել են բոլոր տարիքային խմբերում և բոլոր մարզերում:
- ✓ Վերագնահատումները կազմում են իրականացված գնահատումների 15 տոկոսը. վերլուծությունը ցույց տվեց նաև, որ հնարավոր են վերագնահատման դեպքեր տարրական դպրոցում՝ մինչև 11 տարեկանների շրջանում, ինչպես նաև առաջնակի գնահատում կարող են անցնել բարձր դասարանի աշակերտները ևս:
- ✓ Տարիքային խմբերի բաշխվածության պատկերն ըստ մարզերի հետաքրքիր միտումներ է ցույց տվել. Արագածոտն, Կոտայք և Սյունիք մարզերում գերազանցապես գնահատվել են 6-10 տարեկանները; Տավուշում՝ գերակշռել են 11-15 տարեկանները, Երևանում և Լոռիում գրեթե հավասարապես են բաշխվել 6-10 և 11-15 տարեկանները, իսկ բարձր տարիքի երեխաները հիմնականում գնահատվել են Վայոց Ձորում, Տավուշում, Լոռիում և Արարատում:

Ինչպիսի՞ խնդիրներ են հիմնականում արձանագրվում ԿԱՊԿ գնահատման արդյունքում:

- ✓ ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների 78 տոկոսի մոտ արձանագրվում է ԿԱՊԿ կարիքը: Այսինքն, դպրոցների կողմից առաջին մակարդակի գնահատում անցած երեխաների շրջանում, ում համար դպրոցները որոշել են, որ կարիք ունեն լրացուցիչ մասնագետների աջակցության՝ նրանց կրթությունը կազմակերպելու համար և դիմել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ երկրորդ մակարդակի գնահատում անցնելու ու բարձրացված չափաքանակով նրանց ծառայություն մատուցելու համար, ամեն հինգերորդի մոտ ԿԱՊԿ կարիք չի արձանագրվում:
- ✓ Երեխաների 83 տոկոսի մոտ արձանագրվել է ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների խանգարում, հաջորդ առավել հաճախ հանդիպող սահմանափակումը ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարումներն են՝ 48 տոկոս: Ամեն 10-րդ երեխա ուներ շարժողական ֆունկցիայի հետ կապված խնդիր: Տեսողության և լսողության խնդիրներն առավել քիչ տոկոս են կազմել՝ 8 և 4 տոկոս համապատասխանաբար:
- ✓ Ըստ սեռի, ֆունկցիաների խանգարման պատկերը գրեթե նույնն է, սակայն աղջիկների մոտ մի փոքր առավել հաճախ են հանդիպում շարժողական, տեսողական և լսողական ֆունկցիաների խնդիրները:
- ✓ Ըստ տարիքային խմբերի ֆունկցիայի խանգարումների տարբերությունն ավելի ակնհայտ է. ձայնի/խոսքի խնդիրները գերակշռում են մինչև 6 տարեկանների մոտ, ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ՝ 6-10 և 11-ից 15 տարեկանների մոտ, իսկ շարժողական ֆունկցիայի խնդիրներն առավել հաճախ են արձանագրվել 16-ից բարձրների մոտ՝ մյուս տարիքային խմբերի հետ համեմատ:
- ✓ ԿԱՊԿ կարիքն արձանագրված երեխաների կեսից մի փոքր ավելիի մոտ արձանագրվել է միայն մեկ ֆունկցիայի խանգարում: Ծանր խնդիրներ ունեցող երեխաները, ում մոտ արձանագրվել են միաժամանակ մեկից ավելի

ֆունկցիաներում խանգարումներ, կազմել են ԿԱՊԿ ունեցող երեխաների 44,5 տոկոսը: Միաժամանակ 4 ոլորտում ֆունկցիայի խանգարում և աջակցության կարիք ունի երեխաների 1,5 տոկոսը: Գրեթե բոլոր երեխաները, ովքեր ունեն մեկից ավելի ֆունկցիայի խանգարում, ունեն ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խնդիրներ:

- ✓ Մեկից ավելի ֆունկցիայի խանգարում ունեւոլ դեպքում երեխաների խնդիրները տարբեր են, կախված գուգորդված ֆունկցիաների ծանրության աստիճանից և գուգորդման տեսակից:
- ✓ Թեև ԱՈԻՊ-ի ձևաչափն ունի երեխայի հաշմանդամություն ունենալու մասին հարց, երեխայի ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրության ձևաչափը թույլ չի տալիս գրանցելու, թե արդյոք երեխան ունի հաշմանդամություն թե ոչ: Հետևաբար, ԿԱՊԿ ունեցող երեխաների շրջանում հաշմանդամություն ունեցող երեխաների մասնաբաժինը որոշելու նպատակով դիտարկվել են այն երեխաներն ում ֆունկցիաների խանգարումը ծանր և խորը աստիճանի էր: Այդ մոտեցման հիման վրա եգրակացվել է, որ ԿԱՊԿ գնահատում անցած և ԿԱՊԿ ունեցող ամեն հինգերորդ երեխան հնարավոր է, որ ունի նաև հաշմանդամություն, քանի որ գնահատման արդյունքում ԿԱՊԿ ունեցող 2754 երեխաներից ֆունկցիայի ծանր և խորը խանգարումներ ունեին 20 տոկոսը:
- ✓ Վերագնահատման արդյունքում, այսինքն հիմնականում այն դեպքերում երբ մասնագետները աշխատել են երեխաների հետ, ամեն չորրորդ երեխայի մոտ հաղթահարվում է ֆունկցիոնալ դժվարությունը և երեխաները կարողանում են սովորել առանց լրացուցիչ մասնագիտական աջակցության: Հետաքրքրական է, որ և առաջին անգամ և վերագնահատման դեպքում ԿԱՊԿ չձանաչելու դեպքերը ավելի հաճախ են լինում Շիրակի մարզում՝ ամեն երրորդ գնահատումը առաջին գնահատման ժամանակ և գրեթե 45 տոկոս՝ վերագնահատման ժամանակ: Սյունիքի մարզում ԿԱՊԿ հաղթահարման տեսանկյունից դրական արդյունք գրանցվել է ամեն չորրորդ երեխայի համար: Երևանում գրեթե բոլոր գնահատում անցնող երեխաների մոտ արձանագրվում է ԿԱՊԿ՝ և առաջին անգամ և վերագնահատման ժամանակ: Արարատի մարզում վերագնահատում անցած բոլոր երեխաների մոտ արձանագրվում է ԿԱՊԿ:

Ի՞նչ ծառայություններ են երաշխավորվում ԿԱՊԿ ունեցող երեխաներին:

- ✓ ԿԱՊԿ արձանագրության գործող ձևաչափը դիտարկում է ԿԱՊԿ ունեցող երեխաների ֆունկցիայի խանգարման աստիճանը և ըստ այդմ առաջարկում ծառայություն: Սակայն, ԿԱՊԿ արձանագրության մեջ նշված ֆունկցիայի խանգարումների աստիճանը, դժվար է կապել *«մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման տեսակի, ժամանակահատվածի, տևողության ու ծավալների»* հետ, ինչպես դա նշված է արձանագրության ձևաչափում:
- ✓ Գնահատում անցած երեխաների 78 տոկոսին առաջարկվել է տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կազմել ՄԱԾԱՊ: 65 տոկոսի համար առաջարկվել է կազմել ԱՈԻՊ և հարմարեցնել հանրակրթական առարկայական ծրագրերը, իսկ 36 տոկոսի համար առաջարկվել է կրթությունը

կազմակերպել հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներով, ընդ որում նրանցից 19 տոկոսի համար արձանագրվել էր ԿԱՊԿ: Ընդ որում, 65 տոկոսի համար առաջարկվել է մշակել և՛ ՄԱԾԱՊ և՛ ԱՌԻՊ:

- ✓ Արձանագրության մեջ նկատվել են նաև սխալ նշումներ, քանի որ 39 երեխաների առաջարկվել է ԱՌԻՊ կազմել, սակայն միևնույն ժամանակ նշվել է, որ կարիք չկա հարմարեցնելու առարկայական ծրագրերը:
- ✓ ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների 70, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ 90 տոկոսի համար երաշխավորվում է հատուկ մանկավարժի ծառայություններ:
- ✓ Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ մասնագետների ծառայություններ երաշխավորվում են նաև այն երեխաների համար ովքեր չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:
- ✓ Հոգեբանի ծառայությունները հանդիսանում են երկրորդ առավել հաճախ առաջարկվող ծառայությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների համար՝ երեխաների 64 տոկոսի համար առաջարկվում է հոգեբանական աջակցություն:
- ✓ Լոգոպեդի ծառայությունները երրորդ առավել հաճախ երաշխավորվող աջակցությունն են, որ սահմանվում է ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների համար:
- ✓ ՀՀ ԿԳՆ 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 370-Ն հրամանով հաստատված «Անհատական ուսումնական պլանով նախատեսվող աջակցող ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները» աղյուսակում նախատեսված չեն, թվարկված ֆիզիոթերապիստն ու էրգոթերապիստը, մինչդեռ ԿԱՊԿ գնահատում անցած երեխաներին ծառայություն մատուցելու համար երաշխավորվել են նաև այդ մասնագետների ծառայությունները՝ ԿԱՊԿ ունեցող ամեն 10-րդ երեխային երաշխավորվել է ֆիզիոթերապիստի ծառայություններ, իսկ էրգոթերապիստի ծառայություններ երաշխավորվել է ԿԱՊԿ ունեցող երեխաների 3 տոկոսի համար:
- ✓ Միևնույն աստիճանի նույն ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաները կարող են տարբեր կարողություն ու կատարողականություն ունենալ և տարբեր աստիճանի միջամտության կարիք, հետևաբար, ԿԱՊԿ ունեցող երեխաներին ծառայությունների մատուցման և կրթության մեջ նրանց ներառմանը խթանելու հարցում ծառայությունների սահմանման հիմքում ֆունկցիայի խանգարման աստիճանը դնելը շարունակում է պահպանել բժշկական մոդելի կիրառումը:

Ի՞նչ առավելություններ է տալիս ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրումը ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերով:

- ✓ 30 երեխաների համար իրականացված ֆունկցիոնալ գնահատման արդյունքների վերլուծությունը ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերով ցույց տվեց, որ ի տարբերություն ԿԱՊԿ արդյունքների ամփոփման գործող ձևաչափի, այս մոտեցման դեպքում մասնագետները ստանում են առավել ընդլայնված պատկեր երեխայի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, առավել արագ են տեսնում դժվարությունների ոլորտն ու ծանրության աստիճանը, կողմնորոշվում ծառայությունների ծավալի վերաբերյալ և հասկանում երեխայի գործունեությանն ու մասնակցությանը նպաստող կամ խոչընդոտող միջավայրային գործոնների ազդեցությունը:

- ✓ Միջավայրային գործոնների ազդեցության դիտարկումն ըստ ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի հնարավորություն է տալիս տեսնելու թե հատկապես ինչպիսի ծառայություններն են առավել հրատապ կամ խիստ անհրաժեշտ տվյալ երեխայի համար՝ ապրանքներ ու տեխնոլոգիաներ, թե՞ վերաբերմունքի փոփոխություն, մասնակցությանը նպաստող հարաբերությունների բարելավմանն ուղղված աշխատանք, թե՞ ծրագրային հարմարեցումներ:
- ✓ ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերով գնահատելիս, ծառայությունների ու միջամտության ցանկը բավական լայն է և չի սահմանափակվում գործող արձանագրությամբ առաջարկվող միայն նեղ մասնագետների ծառայություններով:
- ✓ ԿԱՊԿ գնահատում անցած երեխաները, բացի մասնագետների միջամտությունից, ունեն տարբեր այլ ծառայությունների կարիք. աջակցող ապրանքների, տեխնոլոգիական միջոցների, դեղորայքի, հարազատների ու ընկերների աջակցության, վերաբերմունքի փոփոխության: Իսկ ԿԱՊԿ արձանագրության գործող ձևաչափը դա արտացոլելու հնարավորություն չի ընձեռում:
- ✓ ԱՀԿ ՖՄԴ հիման վրա մշակված արձանագրություններով գնահատման արդյունքների գրանցումը հնարավորություն է տալիս գնահատված երեխաների համար տեսնել, թե գործունեության ու մասնակցության ոլորտներում որտեղ ունեն ֆունկցիոնալ սահմանափակումներ և ինչպիսի միջավայրային գործոններ են պետք նրանց լիարժեք մասնակցության ապահովման համար:
- ✓ ԿԱՊԿ գնահատման արդյունքների արձանագրման այս մոտեցումը ցույց տվեց, որ լինում են դեպքեր, երբ ֆունկցիայի խանգարումը չի հանգեցնում նույն աստիճանի կարողության սահմանափակման: Դա մեկ անգամ ևս վկայում է, որ արձանագրությունը չպետք է պարունակի միայն ֆունկցիայի խանգարման արդյունքները, այլ ծառայությունների սահմանման համար պետք է հաշվի առնվեն երեխայի կարողության ու կատարողականի հետ կապված խնդիրները՝ նրա զարգացման ու կրթության կազմակերպման համար թիրախային աջակցության տրամադրման նպատակով:

Քաղված դասեր

Վերլուծական աշխատանքի իրականացման ժամանակ քաղված դասերը կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպչական և բովանդակային:

Կազմակերպչական խնդիրներից հիմնականը դա Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի համար տարածքային կենտրոններից ԿԱՊԿ անցած երեխաների մասին տեղեկատվության ստացումն էր. ակնկալվում էր, որ ԿԱՊԿ անցնող երեխաների մասին ամբողջ տեղեկատվությունը, առնվազն արձանագրության մակարդակում, պետք է մուտքագրված լինի «Կրթության արձանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և արձանագրման տեղեկատվական համակարգում», առնվազն պետք է ներբեռնված լինեին սկանավորված տարբերակները: Սակայն, պարզ դարձավ, որ ոչ բոլոր կենտրոններն են տվյալները մուտքագրում անմիջապես գնահատում իրականացնելուց հետո, ոչ բոլոր դեպքերում են ստորագրված արձանագրությունները

ներբեռնվում համակարգ և որոշ ՏՄԱԿ-ների համար գնահատման արդյունքների փոխանցումը Հանրապետական կենտրոնին դիտարկվում էր «տեղեկատվության փոխանցում երրորդ անձի» և հրաժարվում էին գնահատման արդյունքները փոխանցել: Այս խնդիրները լրացուցիչ դժվարություններ առաջացրեցին տվյալների ստացման հետ կապված և 4000 գնահատման արդյունքների փոխարեն վերլուծության մեջ ներառվել են 3513 երեխաների մասին տվյալները:

Բովանդակային խնդիրները բխում են բուն արձանագրության ձևաչափից.

ձևաչափի մեջ յուրաքանչյուր ֆունկցիայի խանգարման ենթակատեգորիայի համար գնահատող մասնագետները ձեռագրով մանրամասնում են, թե ինչ դժվարություններ ու ինչ խնդիրներն են նկատել երեխայի մոտ: Այդ նկարագրությունը փաստացի կարելի էր նշել կիրառելով ԱՀԿ ՖՄԴ d ծածկագրերը, սակայն ծածկագրերի կիրառումը արգելված է և մասնագետները դրանք չեն նշում: Արձանագրությունների տվյալների մուտքագրման ժամանակ ձեռագրով այդքան տեղեկատվությունը հնարավոր չէր վերծանել, հետևաբար որոշում կայացվեց միայն նշում անել, որ տվյալ ենթակատեգորիայում երեխան ունի խնդիր: Սակայն այդ մոտեցումը հնարավորություն չտվեց հասկանալու ու ամփոփելու, թե ինչպիսի խնդիրներ են պայմանավորել այս կամ այն ֆունկցիայի խանգարման արձանագրումը: Դա նաև նվազեցրեց վերլուծության հնարավորությունները:

Բացի այդ, արձանագրության ձևաչափը հնարավորություն չի տալիս առանձնացնելու, թե արդյոք երեխան ունի հաշմանդամություն թե ոչ: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների շրջանում հաշմանդամություն ունեցող երեխաների մասնաբաժինը դուրս է բերվել ենթադրությունների հիման վրա, հիմք ընդունելով, որ ծանր և խորը ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաները ունեն մեծ հավանականություն հաշմանդամություն ունենալու:

Արձանագրության ձևաչափը հնարավորություն չի տալիս նաև հասկանալու, թե ինչ նպատակների հասնելու համար պետք է երեխայի հետ աշխատեն երաշխավորված մասնագետները և ինչ ինտենսիվությամբ, ինչպես նաև չի երևում, թե ինչպիսի խելամիտ հարմարեցումների կարիք ունի ԿԱՊԿ ունեցող երեխան: Տեղեկատվության այս բացը ևս հնարավորություն չի տալիս ունենալու ծառայությունների կարիքի ծավալներն ու ուղղությունները:

Վերագնահատումների դեպքում, արձանագրության ձևաչափը թույլ չի տալիս նաև տեսնելու ու ամփոփելու թե ինչպիսի առաջընթաց է արձանագրվել ԿԱՊԿ ունեցող երեխայի մոտ մասնագետների կողմից տարված աշխատանքի արդյունքում, ո՞ր մոտեցումներն են եղել արդարացված/արդյունավետ և եթե առաջընթաց չի արձանագրվել, ապա ո՞ր խնդիրներն են խորացել, տեսնելու առավել ինտենսիվ միջամտության կարիքը:

Առաջարկություններ

- ✓ 2018 թվականի ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում անցած 3513 երեխաների գնահատման արդյունքների վերլուծության

հիման վրա ձևավորված **հիմնական առաջարկությունն է լրամշակել ԿԱՊԿ կարիքի գնահատման արդյունքների ամփոփման արձանագրության ձևաչափը** . այն թույլ չի տալիս ամփոփելու գնահատման ժամանակ վերհանված ամբողջ արժեքավոր տեղեկատվությունը, որը կօգնի նախ՝ սահմանելու հստակ թիրախներ երեխայի զարգացման և կրթական նպատակներին հասնելու համար և երկրորդ՝ որոշարկելու երեխաներին անհրաժեշտ ծառայությունների տեսակներն ու ծավալները: Բացի այդ, այն հնարավորություն չի տալիս ունենալու ԿԱՊԿ անցնող երեխաների մոտ արձանագրված ֆունկցիոնալության հիմնական խնդիրները՝ նպատակային քաղաքականության մշակման համար:

- ✓ ԿԱՊԿ գնահատում անցնող երեխաների ժողովրդագրական տվյալների ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է առաջարկել արձանագրության մեջ ավելացնել մեկ կետ, որով հնարավոր կլինի ամփոփելու թե ինչ պատճառով կամ հանգամանքներից էլնելով են ցածր տարիքի երեխաներն անցնում վերագնահատում, և ինչ հանգամանքների բերումով են առաջնակի գնահատում անցնում բարձր տարիքի, հատկապես ավագ դպրոցում սովորող երեխաները:
- ✓ Ընթացող բարեփոխումների ներքո, ցանկալի է նաև, որ արձանագրության մեջ հնարավոր լինի տարբերակել, արդյո՞ք երեխան ունի հաշմանդամություն և ինչպիսի, և արդյո՞ք երեխայի շահերից էլնելով առավել նպատակահարմար է երեխայի կրթությունը կազմակերպել ոչ թե դպրոցում, այլ տանը:
- ✓ Ցանկալի է, որ արձանագրությունը հնարավորություն ընձեռի ամփոփելու, թե ինչպիսի թիրախներ են սահմանվել երեխաների համար, ինչ նպատակներով՝ կրթական և սոցիալիզացիայի, և վերագնահատման ժամանակ արձանագրել, թե որքանով է հնարավոր եղել ապահովել այդ նպատակներին հասնելը :
- ✓ Նպատակահարմար է գնահատման արդյունքների արձանագրման ժամանակ կիրառել ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերն ու որակիչները, ինչը հնարավորություն կտա առավել ազատ փոխանակելու տեղեկատվություն երեխայի հետ աշխատող մասնագետների միջև, դիտարկելու երեխայի մոտ արձանագրված առաջընթացը կամ փոփոխությունները և տարեց տարի ամփոփելու ու ուսումնասիրելու հիմնական ֆունկցիոնալ խնդիրները, դրանց սեռատարիքային առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված ծառայությունների ու միջամտության կարիքները կամ արձանագրված արդյունքները:
- ✓ Քայլեր են պետք իրականացնել ակտիվացնելու ու զարգացնելու տարածքային ու հանրապետական մակարդակում տեղեկատվության պահանջի ու տվյալների օգտագործման մշակույթի ձևավորման համար, արդյունավետ քաղաքականության հիմքում դնելով որակյալ տվյալների հիման վրա կազմված եզրակացությունները:
- ✓ Երաշխավորվող ծառայությունները և երեխային կրթելու համար հատկացվող ֆինանսավորման բարձրացված չափաքանակը պետք է համահունչ լինեն երեխայի առանձնահատուկ կարիքներին, հաշվի առնվեն երեխան ունի ֆունկցիոնալության խնդիր մեկ թե մի քանի ոլորտներում, և ինչպես պետք է երաշխավորվող ծառայությունները փոխլրացնեն միմյանց՝ ապահովելու երեխայի ակտիվ մասնակցությունը ուսման պրոցեսում և ապահովեն նրա հմտությունների զարգացմանը: Գնահատման ժամանակ հավաքագրվող տեղեկատվությունը

բավարար է նման անհատական և թիրախային միջամտություն կազմակերպելու համար:

- ✓ Ցանկալի է առանձին վերլուծություն իրականացնել, օրինակ երաշխավորված ծառայությունների արդյունավետության գնահատման համար, որքանով են այդ ծառայությունները կամ միջամտությունները նպաստել հասնելու երեխաների կրթության համար սահմանված նպատակներին, արդյո՞ք բավարար են առաջարկվող տեսականին կամ հաճախականությունը, ինչպիսի՞ բացեր կան, առավել արդյունավետ քաղաքականություն մշակելու և հատկացվող ֆինանսական միջոցներն արդյունավետ ծախսելու համար:

Օգտագործված գրականության և փաստաթղթերի ցանկ

- ՀՀ օրենքը Հանրակրթության մասին
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97415>
- «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրաման
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=113152>
- ԱՀԿ ՖՄԴ հայերեն թարգմանությունը
- Համընդհանուր ներառական համակարգի ներդրման գործողությունների պլան և ժամանակացույցը <http://edu.am/index.php/am/about/view/107>
- Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը
- Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը
- ՀՀ Վիճակագրական կոմիտե «Հայաստանի սոցիալական վիճակը» 2016, 2017 թվականների համար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների մասին մանրամասն վիճակագրություն

Աղյուսակ 1.1: ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների բաշխումն ըստ արձանագրված ֆունկցիայի խանգարման, 2018 թվականին

Ֆունկցիայի խանգարման նկարագրությունը	Երեխաների թիվը	Տոկոսը բոլոր գնահատվածների մեջ	Տոկոսը ԿԱՊԿ ունեցողների մեջ
Միայն մեկ տեսակի ֆունկցիայի խանգարում ունեցողներ			
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	1122	31.9	40.7
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	238	6,8	8,6
Տեսողության ֆունկցիաներ	88	2.5	3.2
Շարժողական ֆունկցիաներ	65	1.9	2.4
Լսողության ֆունկցիաներ	18	0.5	0.7
Միաժամանակ երկու տեսակի ֆունկցիայի խանգարում ունեցողներ			
Ինտելեկտուալ (մտավոր) և ձայնի/խոսքի ֆունկցիաներ	762	21.7	27.7
Ինտելեկտուալ (մտավոր) և շարժողական ֆունկցիաներ	67	1.9	2.4
Ինտելեկտուալ (մտավոր) և տեսողության ֆունկցիաներ	40	1.1	1.5
Լսողության և ձայնի/խոսքի ֆունկցիաներ	17	0.5	0.6
Շարժողական և ձայնի/խոսքի ֆունկցիաներ	14	0. 4	0. 5
Տեսողության և ձայնի/խոսքի ֆունկցիաներ	13	0.4	0.5
Տեսողության և շարժողական ֆունկցիաներ	9	0.3	0.3
Ինտելեկտուալ (մտավոր) և լսողության ֆունկցիաներ	5	0.1	0.2
Տեսողության և լսողության ֆունկցիաներ	4	0.1	0.1
Միաժամանակ երեք ֆունկցիայի խանգարում ունեցողներ			
Ինտելեկտուալ (մտավոր), շարժողական, ձայնի/խոսքի ֆունկցիաներ	162	4.6	5.9
Ինտելեկտուալ (մտավոր), լսողության, ձայնի/խոսքի ֆունկցիաներ	45	1.3	1.6
Ինտելեկտուալ (մտավոր), տեսողության և շարժողական ֆունկցիաներ	10	0.3	0.4

Ֆունկցիայի խանգարման նկարագրությունը	Երեխաների թիվը	Տոկոսը բոլոր գնահատվածների մեջ	Տոկոսը ԿԱՊԿ ունեցողների մեջ
Տեսողության, լսողության և ձայնի/ խոսքի ֆունկցիաներ	2	0.1	0.1
Լսողության, շարժողական, ձայնի/ խոսքի ֆունկցիաներ	2	0.1	0.1
Ինտելեկտուալ (մտավոր), տեսողության, ձայնի/խոսքի ֆունկցիաներ	2	0.8	1.0
Տեսողության, շարժողության, ձայնի/ խոսքի ֆունկցիաներ	1	0.0	0.0
Ինտելեկտուալ (մտավոր), լսողության և շարժողական ֆունկցիաներ	1	0.0	0.0
Միաժամանակ չորս ֆունկցիայի խանգարում ունեցողներ			
Ինտելեկտուալ (մտավոր), տեսողության, շարժողական, ձայնի և խոսքի ֆունկցիաներ	29	0.8	1.1
Ինտելեկտուալ (մտավոր), լսողության, շարժողական, ձայնի/խոսքի ֆունկցիաներ	10	0.3	0.4
Ինտելեկտուալ (մտավոր), տեսողության, լսողության, ձայնի/ խոսքի ֆունկցիաներ	2	0.1	0.1
Ընդամենը ԿԱՊԿ ունեցող երեխաներ	2754	78.4	100.0
Ընդամենը ԿԱՊԿ չունեցող երեխաներ	759	21.6	
Ընդամենը գնահատված երեխաներ	3513	100.0	

Աղյուսակ 1.2: Մեկ ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ սեռի և ֆունկցիայի խանգարման աստիճանի

Սեռը	Ֆունկցիայի խանգարման տեսակը	Ֆունկցիայի խանգարման աստիճանը								Ընդամենը	
		Թեթև		Միջին		Ծանր		Խորը			
		Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%
Տղա	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	445	56.8%	330	42.1%	8	1.0%	0	0.0%	783	100.0%
	Տեսողության ֆունկցիաներ	27	54.0%	15	30.0%	6	12.0%	2	4.0%	50	100.0%
	Լսողության ֆունկցիաներ	4	30.8%	9	69.2%	0	0.0%	0	0.0%	13	100.0%
	Շարժողական ֆունկցիաներ	19	54.3%	14	40.0%	2	5.7%	0	0.0%	35	100.0%
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	115	65.7%	60	34.3%	0	0.0%	0	0.0%	175	100.0%
	Ընդամենը	610	57.8%	428	40.5%	16	1.5%	2	0.2%	1056	100.0%
Աղջիկ	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	165	51.1%	152	47.1%	6	1.9%	0	0.0%	323	100.0%

Մեղը	Ֆունկցիայի խանգարման տեսակը	Ֆունկցիայի խանգարման աստիճանը								Ընդամենը	
		Թեթև		Միջին		Ծանր		Խորը			
		Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%
	Տեսողության ֆունկցիաներ	22	59.5%	10	27.0%	4	10.8%	1	2.7%	37	100.0%
	Լսողության ֆունկցիաներ	2	40.0%	3	60.0%	0	0.0%	0	0.0%	5	100.0%
	Շարժողական ֆունկցիաներ	8	27.6%	16	55.2%	5	17.2%	0	0.0%	29	100.0%
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	41	67.2%	20	32.8%	0	0.0%	0	0.0%	61	100.0%
	Ընդամենը	238	52.3%	201	44.2%	15	3.3%	1	0.2%	455	100.0%
Բոլորը	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	610	55.2%	482	43.6%	14	1.3%	0	0.0%	1106	100.0%
	Տեսողության ֆունկցիաներ	49	56.3%	25	28.7%	10	11.5%	3	3.4%	87	100.0%
	Լսողության ֆունկցիաներ	6	33.3%	12	66.7%	0	0.0%	0	0.0%	18	100.0%
	Շարժողական ֆունկցիաներ	27	42.2%	30	46.9%	7	10.9%	0	0.0%	64	100.0%
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	156	66.1%	80	33.9%	0	0.0%	0	0.0%	236	100.0%
	Ընդամենը	848	56.1%	629	41.6%	31	2.1%	0.3	.2%	1511	100.0%

Աղյուսակ 1.3: Մեկ ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ տարիքային խմբերի և ֆունկցիայի խանգարման աստիճանի

Տարիքային խմբեր	Ֆունկցիայի խանգարման տեսակը	Ֆունկցիայի խանգարման աստիճանը								Ընդամենը	
		Թեթև		Միջին		Ծանր		Խորը			
		Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%
Մինչև 6 տարեկան	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	1	50.0%	1	50.0%	0	0.0%	0	0.0%	2	100.0%
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	7	63.6%	4	36.4%	0	0.0%	0	0.0%	11	100.0%
	Ընդամենը	8	61.5%	5	38.5%	0	0.0%	0	0.0%	13	100.0%
6-ից 10 տարեկան	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	354	61.9%	216	37.8%	2	.3%	0	0.0%	572	100.0%
	Տեսողության ֆունկցիաներ	24	68.6%	8	22.9%	1	2.9%	2	5.7%	35	100.0%
	Լսողության ֆունկցիաներ	1	12.5%	7	87.5%	0	0.0%	0	0.0%	8	100.0%
	Շարժողական ֆունկցիաներ	9	45.0%	10	50.0%	1	5.0%	0	0.0%	20	100.0%
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	121	69.5%	53	30.5%	0	0.0%	0	0.0%	174	100.0%

Տարիքային խմբեր	Ֆունկցիայի խանգարման տեսակը	Ֆունկցիայի խանգարման աստիճանը								Ընդամենը	
		Թեթև		Միջին		Ծանր		Խորը			
		Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%
	Ընդամենը	509	62.9%	294	36.3%	4	.5%	2	.2%	809	100.0%
11-ից 15 տարեկան	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	251	49.3%	248	48.7%	10	2.0%	0	0.0%	509	100.0%
	Տեսողության ֆունկցիաներ	22	51.2%	11	25.6%	9	20.9%	1	2.3%	43	100.0%
	Լսողության ֆունկցիաներ	4	44.4%	5	55.6%	0	0.0%	0	0.0%	9	100.0%
	Շարժողական ֆունկցիաներ	13	38.2%	17	50.0%	4	11.8%	0	0.0%	34	100.0%
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	27	55.1%	22	44.9%	0	0.0%	0	0.0%	49	100.0%
	Ընդամենը	317	49.2%	303	47.0%	23	3.6%	1	.2%	644	100.0%
16-ից բարձր տարիքի	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	19	50.0%	17	44.7%	2	5.3%	0	0.0%	38	100.0%
	Տեսողության ֆունկցիաներ	3	33.3%	6	66.7%	0	0.0%	0	0.0%	9	100.0%
	Լսողության ֆունկցիաներ	1	100.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	1	100.0%
	Շարժողական ֆունկցիաներ	6	54.5%	3	27.3%	2	18.2%	0	0.0%	11	100.0%
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	2	66.7%	1	33.3%	0	0.0%	0	0.0%	3	100.0%
	Ընդամենը	31	50.0%	27	43.5%	4	6.5%	0	0.0%	62	100.0%
Բոլորը	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	625	55.8%	482	43.0%	14	1.2%	0	0.0%	1121	100.0%
	Տեսողության ֆունկցիաներ	49	56.3%	25	28.7%	10	11.5%	3	3.4%	87	100.0%
	Լսողության ֆունկցիաներ	6	33.3%	12	66.7%	0	0.0%	0	0.0%	18	100.0%
	Շարժողական ֆունկցիաներ	28	43.1%	30	46.2%	7	10.8%	0	0.0%	65	100.0%
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	157	66.2%	80	33.8%	0	0.0%	0	0.0%	237	100.0%
	Ընդամենը	865	56.6%	629	41.2%	31	2.0%	3	.2%	1528	100.0%

Աղյուսակ 1.4: Մեկ ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ մարզի և ֆունկցիայի խանգարման աստիճանի

Մարզը	Ֆունկցիայի խանգարման տեսակը	Ֆունկցիայի խանգարման աստիճանը				Ընդամենը
		Թեթև	Միջին	Ծանր	Խորը	
Արագածոտն	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	1	1	0	0	2
	Ընդամենը	1	1	0	0	2
Արարատ	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	7	2	0	0	9
	Տեսողության ֆունկցիաներ	0	1	0	0	1
	Շարժողական ֆունկցիաներ	0	1	0	0	1
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	0	4	0	0	4
	Ընդամենը	7	8	0	0	15
Արմավիր	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	194	124	5	0	323
	Տեսողության ֆունկցիաներ	3	1	1	0	5
	Լսողության ֆունկցիաներ	0	6	0	0	6
	Շարժողական ֆունկցիաներ	3	3	0	0	6
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	13	11	0	0	24
	Ընդամենը	213	145	6	0	364
Գեղարքունիք	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	5	10	0	0	15
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	6	6	0	0	12
	Ընդամենը	11	16	0	0	27
Երևան	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	162	184	6	0	352
	Տեսողության ֆունկցիաներ	7	8	7	1	23
	Լսողության ֆունկցիաներ	3	2	0	0	5
	Շարժողական ֆունկցիաներ	9	12	2	0	23
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	52	26	0	0	78

Մարզը	Ֆունկցիայի խանգարման տեսակը	Ֆունկցիայի խանգարման աստիճանը				Ընդամենը
		Թեթև	Միջին	Ծանր	Խորը	
	Ընդամենը	233	232	15	1	481
Լոռի	Բնակելի տուր (մտավոր) ֆունկցիաներ	88	104	3	0	195
	Տեսողության ֆունկցիաներ	10	8	1	2	21
	Լսողության ֆունկցիաներ	2	4	0	0	6
	Շարժողական ֆունկցիաներ	13	9	3	0	25
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	31	12	0	0	43
	Ընդամենը	144	137	7	2	290
Կոտայք	Բնակելի տուր (մտավոր) ֆունկցիաներ	4	5	0	0	9
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	1	2	0	0	3
	Ընդամենը	5	7	0	0	12
Շիրակ	Բնակելի տուր (մտավոր) ֆունկցիաներ	73	22	0	0	95
	Տեսողության ֆունկցիաներ	27	6	0	0	33
	Լսողության ֆունկցիաներ	1	0	0	0	1
	Շարժողական ֆունկցիաներ	1	0	0	0	1
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	43	12	0	0	55
	Ընդամենը	145	40	0	0	185
Սյունիք	Բնակելի տուր (մտավոր) ֆունկցիաներ	47	26	0	0	73
	Տեսողության ֆունկցիաներ	1	1	0	0	2
	Շարժողական ֆունկցիաներ	1	2	1	0	4
	Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	7	2	0	0	9
	Ընդամենը	56	31	1	0	88

Մարզը	Ֆունկցիայի խանգարման տեսակը	Ֆունկցիայի խանգարման աստիճանը				Ընդամենը
		Թեթև	Միջին	Ծանր	Խորը	
Վայոց Ձոր	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	16	2	0	0	18
	Տեսողության ֆունկցիաներ	1	0	0	0	1
	Չայնի և խոսքի ֆունկցիաներ	1	4	0	0	5
	Ընդամենը	18	6	0	0	24
Տավուշ	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	28	2	0	0	30
	Տեսողության ֆունկցիաներ	0	0	1	0	1
	Շարժողական ֆունկցիաներ	1	3	1	0	5
	Չայնի և խոսքի ֆունկցիաներ	3	1	0	0	4
	Ընդամենը	32	6	2	0	40
Բոլորը	Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	625	482	14	0	1121
	Տեսողության ֆունկցիաներ	49	25	10	3	87
	Լսողության ֆունկցիաներ	6	12	0	0	18
	Շարժողական ֆունկցիաներ	28	30	7	0	65
	Չայնի և խոսքի ֆունկցիաներ	157	80	0	0	237
	Ընդամենը	865	629	31	3	1528




Աղյուսակ 1.5: ԿԱՊԿ ունեցող երեխաների երաշխավորված մասնագետների աջակցության ծառայություններն ըստ մարզերի

	Հատուկ մանկավարժ		Հոգեբան		Լոգոպեդ		Սոցիալական մանկավարժ		Ֆիզիոթերապիստ		Էրգոթերապիստ		Տիֆլո մանկավարժ		Սուրդո մանկավարժ	
	N	%	N	%	N	%	N	%	N	%	N	%	N	%	N	%
Արագածոտն	2	100%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%
Արարատ	27	87%	23	74%	19	61%	2	6%	10	32%	0	0%	3	10%	1	3%
Արմավիր	571	95%	372	62%	281	47%	29	5%	27	4%	19	3%	14	2%	26	4%
Գեղարքունիք	39	78%	20	40%	37	74%	1	2%	4	8%	1	2%	1	2%	1	2%
Երևան	928	88%	733	70%	625	60%	54	5%	129	12%	38	4%	45	4%	46	4%
Լոռի	412	87%	286	60%	215	45%	52	11%	48	10%	21	4%	23	5%	13	3%
Կոտայք	19	83%	11	48%	16	70%	3	13%	3	13%	3	13%	0	0%	0	0%
Շիրակ	210	74%	174	61%	163	57%	14	5%	26	9%	8	3%	15	5%	5	2%
Սյունիք	128	90%	93	65%	59	41%	6	4%	12	8%	2	1%	3	2%	1	1%
Վայոց Ձոր	39	91%	31	72%	24	56%	2	5%	1	2%	0	0%	2	5%	1	2%
Տավուշ	46	90%	14	27%	15	29%	3	6%	4	8%	1	2%	1	2%	0	0%

Հավելված 2: Լրացուցիչ վերլուծություն ֆունկցիա խանգարումների զուգորդումների հաճախականության և բնույթի վերաբերյալ


Բազմակի ֆունկցիաների խանգարումների դեպքում, երբ ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումը զուգորդվում է ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարման հետ N=762, ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարման աստիճանը բարձր է երբ այն առաջնային խանգարումն է: Դեպքերի 50 տոկոսում արձանագրվել է միջին և 36 տոկոսում՝ ծանր խանգարումներ:

Գծապատկեր 2. 1: Միաժամանակ ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումներն ըստ արձանագրված դեպքերի քանակի և խանգարման աստիճանի, N=578




Երբ ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաները երկրորդային խանգարում են հանդիսանում ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարման դեպքերի համար, ապա խանգարման աստիճանը դեպքերի 70 տոկոսի մոտ թեթև է:

Գծապատկեր 2. 2: Միաժամանակ ձայնի/խոսքի և ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներն ըստ արձանագրված դեպքերի քանակի և խանգարման աստիճանի, N=184




Երբ ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումները զուգորդվում են շարժողական ֆունկցիայի խանգարումների հետ՝ N=67, ապա դեպքերի 64 տոկոսում արձանագրվում է ֆունկցիայի խանգարման միջին աստիճան, եթե առաջնային խանգարումը արձանագրվել է ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումը, իսկ երբ առաջնայինը շարժողական ֆունկցիայի խանգարումներն են, ապա ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների գնահատումն արձանագրում է միջին աստիճանի խանգարում դեպքերի 40 տոկոսի համար:

Գծապատկեր 36: Միաժամանակ ինտելեկտուալ/մտավոր և շարժողական ֆունկցիայի խանգարումներն ըստ արձանագրված դեպքերի քանակի և խանգարման աստիճանի , N=33



Գծապատկեր 2. 4 Միաժամանակ շարժողական և ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներն ըստ արձանագրված դեպքերի քանակի և խանգարման աստիճանի , N=34




Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների խանգարումները զուգորդվում են նաև տեսողական և լսողական ֆունկցիաների խանգարումների հետ: Այս դեպքում, եթե ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաներն են առաջնային, ապա այս ֆունկցիայի խանգարման աստիճանը տեսողության ֆունկցիայի խանգարման հետ զուգորդման պարագայում հիմնականում միջին աստիճանի է: Լսողության ֆունկցիայի խանգարման հետ զուգորդման դեպքերը 5-ն են և առաջնայինը լսողության ֆունկցիայի խանգարումներն են, այս դեպքում ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումները միայն թեթև աստիճանի են:


Աղյուսակ 2. 1 Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների խանգարումների զուգորդումը տեսողության և լսողության ֆունկցիաների խանգարումների հետ, ըստ առաջնայնության և խանգարման աստիճանի

N=28	Թեթև	Միջին	Ծանր
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	11	17	0
Տեսողության ֆունկցիաներ	27	0	0
N=12	Թեթև	Միջին	Ծանր
Տեսողության ֆունկցիաներ	2	9	1
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	12	0	0
N=5	Թեթև	Միջին	Ծանր
Լսողության ֆունկցիաներ	1	4	0
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	5	0	0


Երբ երեխաների մոտ միաժամանակ արձանագրվում է **երեք ֆունկցիաների խանգարում** և ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումն առաջնային է, ապա ֆունկցիայի խանգարման աստիճանը հիմնականում միջին և ծանր աստիճանների է:

Գծապատկեր 2. 5: Միաժամանակ 3 ֆունկցիաների խանգարումների զուգորդումն ըստ ծանրության աստիճանի, երբ ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներն առաջնային են






Միաժամանակ ինտելեկտուալ (մտավոր), տեսողության և շարժողական ֆունկցիաներում արձանագրված խանգարումների ծանրության աստիճանը



Միաժամանակ ինտելեկտուալ (մտավոր), լսողության և ձայնի/խոսքի ֆունկցիաներում արձանագրված խանգարումների ծանրության աստիճանը




Միաժամանակ ինտելեկտուալ (մտավոր), լսողության և շարժողական ֆունկցիաներում արձանագրված խանգարումների ծանրության աստիճանը

Ոչ մի դեպք չի արձանագրվել, երբ առաջնային խանգարումը ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումն է

Երբ երեխաների մոտ միաժամանակ արձանագրվում է չորս ֆունկցիաների խանգարում և ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումն առաջնային է, ապա ֆունկցիայի խանգարման աստիճանը միջին, ծանր և խորը աստիճանի է:

Գծապատկեր 2. 6 Միաժամանակ 4 ֆունկցիաների խանգարումների զուգորդումն ըստ ծանրության աստիճանի, երբ ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներն առաջնային են



Ինչպես նշվեց նախորդ բաժնում, եթե ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը առաջնային խնդիրն է ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխայի մոտ, ապա արձանագրվում է հիմնականում միջին և ծանր աստիճանի խանգարում, հանդիպում են նաև խորը խանգարումներ:

Եթե ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը զուգորդվում է լսողական ֆունկցիայի հետ N=17, ապա արձանագրված դեպքերում ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումները երկրորդային են և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը սահմանվել է լսողական ֆունկցիայի խանգարման աստիճանի հիման վրա: Արձանագրված 17 դեպքերից 7-ում 2 ֆունկցիաների խանգարումը միջին աստիճանի է, իսկ 5 դեպքերում ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը ծանր աստիճանի էր: Ձայնի/խոսքի և լսողության ֆունկցիաների միաժամանակ խանգարում ունեցող երեխաների մեծ մասը՝ 17 երեխաներից 10-ը, տղաներ էին, սակայն ձայնի խոսքի ֆունկցիայի խանգարումներն առավել հաճախ ծանր աստիճանի էին աղջիկների մոտ:

Աղյուսակ 2. 2: Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարման զուգորդումը լսողական ֆունկցիայի խանգարումների հետ, N=17

Դասակարգում	Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարման աստիճանը
-------------	---

Լսողական ֆունկցիայի խանգարման աստիճանը	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
Միջին	7	4	0	11
Ծանր	0	1	2	3
Խորը	0	0	3	3
Ընդամենը	7	5	5	17

14 երեխաների մոտ ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը գուցորդված է շարժողական ֆունկցիայի խանգարումների հետ. Նրանցից 11-ը տղաներ են, 6-10 տարեկաններ և հիմնականում Երևանից: Երբ ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումն առաջնային է, ապա արձանագրված բոլոր 6 դեպքերում ձայնի և խոսքի ֆունկցիայի խանգարումը միջին աստիճանի էր, իսկ երբ ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը երկրորդային է, ապա ձայնի և խոսքի ֆունկցիայի խանգարման աստիճանը 8-ից 5 դեպքերում թեթև աստիճանի է:

Աղյուսակ 2. 3: Միաժամանակ ձայնի/խոսքի և շարժողական ֆունկցիաների խանգարումներ ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման ծանրության աստիճանի N=14

N=6	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	0	6	0	6
Շարժողական ֆունկցիաներ	3	3	0	6
N=8	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
Շարժողական ֆունկցիաներ	1	2	5	8
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	5	2	1	8

13 երեխաների մոտ ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը գուցորդված է տեսողական ֆունկցիայի խանգարումների հետ, ընդ որում՝ 9 դեպքերում ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը հանդիսանում է առաջնային և որոշիչ ԿԱՊԿ սահմանման համար: Այս երեխաներից 9-ը տղաներ են, 6-ից 10 և 11-ից 15 տարեկան, Արմավիրից և Երևանից, Լոռի և Շիրակ մարզերից: Եթե այս երեխաների մոտ առաջնայինը հանդիսացել է ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը, ապա ծանրության աստիճանը մեծ մասի մոտ գրանցվել է թեթև:

Աղյուսակ 2. 4: Միաժամանակ ձայնի/խոսքի և տեսողության ֆունկցիաների խանգարումներ ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման ծանրության աստիճանի N=13

N=9	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	6	3	0	9
Տեսողության ֆունկցիաներ	9	0	0	9
N=4	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
Տեսողության ֆունկցիաներ	2	0	2	4
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	2	2	0	4

Միաժամանակ 3 ֆունկցիաների խանգարում ունենալու դեպքում, երբ առաջնայինը ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումն է դեպքերի մեծ մասում ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումները միջին աստիճանի են:

Աղյուսակ 2. 5 Միաժամանակ 3 ֆունկցիաների խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի, երբ ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումն առաջնային է

Ֆունկցիայի խանգարումը	Խանգարման ծանրության աստիճանը			
N=15	Թեթև	Միջին	Ծանր	Խորը
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	1	7	2	5
Շարժողական ֆունկցիաներ	7	6	2	1
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	7	1	6	1
N=2	Թեթև	Միջին	Ծանր	Խորը
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	0	2	0	0
Տեսողության ֆունկցիաներ	2	0	0	0
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	1	1	0	0
N=3	Թեթև	Միջին	Ծանր	Խորը
Ձայնի և խոսքի ֆունկցիաներ	0	1	1	1
Լսողության ֆունկցիաներ	1	1	0	1
Ինտելեկտուալ (մտավոր) ֆունկցիաներ	2	0	1	0

Միաժամանակ 4 ֆունկցիայի խանգարում ունեցող 41 երեխաներից միայն մեկի մոտ էր ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը արձանագրվել որպես առաջնային: Այդ երեխայի մոտ արձանագրվել է միաժամանակ ձայնի/խոսքի, ինտելեկտուալ/մտավոր, տեսողության և շարժողական ֆունկցիաների թեթև աստիճանի խանգարում:

Զուգորդված խանգարումների դեպքում լսողական ֆունկցիայի խանգարումները հիմնականում հանդիպում են ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումների հետ N=17; ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումների հետ՝ N=5 և տեսողական ֆունկցիայի խանգարումների հետ՝ N=4:

Նախորդ ենթաբաժնում արդեն դիտարկվել են լսողական ֆունկցիայի խանգարման դեպքերի զուգորդումը ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումների հետ: Ինչպես նշվեց, արձանագրված դեպքերում լսողական ֆունկցիաների խանգարումները առաջնային են, և ԿԱՊԿ սահմանվում է այդ հիմքով, քանի որ հիմնականում լսողական ֆունկցիայի խանգարումներն այս դեպքերում միջին աստիճանի են՝ 11 դեպքում, 3-ական դեպքերում՝ ծանր և խորը: Եթե լսողական ֆունկցիայի խանգարումը ծանր և խորն է, ապա ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումը ևս ծանր է **Աղյուսակ 2.2: Ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարման զուգորդումը լսողական ֆունկցիայի խանգարումների հետ, N=17**


Աղյուսակ 2. 1-ում ներկայացված են ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների հետ լսողության ֆունկցիայի զուգորդման դեպքերը: Հինգ դեպքերից երեքն արձանագրվել են աղջիկների մոտ; 6-10 և 16 և բարձր տարիքի: Այս զուգորդմամբ դեպքերն արձանագրվել են Երևանում՝ N=2 և մեկական Արմավիրում, Լոռիում և Շիրակում:


Լսողության և շարժողական ֆունկցիաների համատեղ խանգարում չի արձանագրվել:

Լսողական և տեսողական ֆունկցիաների զուգորդման 4 դեպքերից 3-ում լսողական ֆունկցիայի խանգարումը հանդիսացել է առաջնայինը, երկու դեպքում թեթև և մեկ դեպքում միջին աստիճանի խանգարումով:

Միաժամանակ 3 ֆունկցիաներում՝ լսողության, ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաներում խանգարումներ արձանագրվել են 45 երեխաների մոտ, և նրանցից 35-ի մոտ լսողության ֆունկցիայի խանգարումն առաջնային է: Այդ երեխաներից 20-ը տղաներ են և 15-ը՝ աղջիկներ, 6-10 և 11-15 տարիքային խմբերում և մեծ մասամբ Երևանից:

Գծապատկեր 2. 7: Միաժամանակ 3՝ լսողության, ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաներում արձանագրված խանգարումների դեպքերի բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և մարզի, N=35





Միայն մեկ երեխայի մոտ է արձանագրվել միաժամանակ լսողության ֆունկցիայի խանգարման զուգորդումը ինտելեկտուալ/մտավոր և շարժողական ֆունկցիաների խանգարումների հետ, և լսողական ֆունկցիայի խանգարումը երկրորդային էր, միջին աստիճանի:

Երկու երեխաների մոտ արձանագրվել է միաժամանակ լսողության ֆունկցիայի խանգարման զուգորդումը տեսողության և ձայնի/խոսքի ֆունկցիաների խանգարումների հետ և այդ 2 դեպքերում էլ լսողական ֆունկցիայի խանգարումը առաջնայինն էր՝ միջին և ծանր աստիճանի:

4 ֆունկցիաներում միաժամանակ խանգարում ունեցող 41 երեխաներից 10 դեպքերում լսողության ֆունկցիայի խանգարումը զուգորդվել է շարժողական, ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաների խանգարումների հետ, որոնցից 8 դեպքում լսողական ֆունկցիան առաջնային է: Այս դեպքերն արձանագրվել են 4 տղաների և 4 աղջիկների մոտ՝ 11-ից 15 տարեկան, Արմավիրից և Երևանից, և մեկական Արարատ և Գեղարքունիք մարզերից: Այս 8 հոգու մոտ արձանագրվել է լսողական ֆունկցիայի հիմնականում ծանր ֆունկցիայի խանգարում՝ N=6, միջին և խորը աստիճանի խանգարում՝ 1-ական երեխաների մոտ:

Լսողական ֆունկցիաների համար ենթակատեգորիաներ չեն առանձնացված ԿԱՊԿ արձանագրության մեջ:

Տեսողության ֆունկցիայի խանգարման հետ զուգորդված ֆունկցիայի խանգարումներն են՝ լսողական ֆունկցիայի խանգարումներ – 4 դեպք, որից միայն մեկում է տեսողական ֆունկցիայի խանգարումն առաջնային, այն միջին աստիճանի է, իսկ լսողական ֆունկցիայի խանգարումը՝ թեթև: Նման խնդիր արձանագրվել է 11-15 տարեկան տղայի մոտ՝ Շիրակի մարզից:

Տեսողական ֆունկցիայի խանգարումների զուգորդումը ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումների հետ դիտարկվել է նախորդ ենթաբաժնում՝ **Աղյուսակ 2.1 Ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների խանգարումների զուգորդումը տեսողության և լսողության ֆունկցիաների խանգարումների հետ, ըստ առաջնայնության և խանգարման աստիճանի** 12 դեպք է արձանագրվել, երբ այդ զուգորդման ժամանակ տեսողական ֆունկցիայի խանգարումը հանդիսացել է առաջնային, որից 9 դեպքում ֆունկցիայի

խանգարումը եղել է միջին, մեկ դեպքում ծանր, իսկ ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումները եղել են թեթև բոլոր դեպքերում:

Տեսողական ֆունկցիայի խանգարումների զուգորդումը ձայնի/խոսքի ֆունկցիայի խանգարումների հետ դիտարկվել է նախորդ ենթաբաժնում՝ **Աղյուսակ 2.4: Միաժամանակ ձայնի/խոսքի և տեսողության ֆունկցիաների խանգարումներ ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման ծանրության աստիճանի N=13** արձանագրված 13 դեպքերից 4-ում տեսողական ֆունկցիայի խանգարումը գնահատվել է առաջնային խնդիր՝ հավասարապես 2 դեպքում արձանագրվել է ֆունկցիայի թեթև և 2 դեպքում ծանր խանգարում:

Միաժամանակ տեսողական և շարժողական ֆունկցիաների խանգարումներ արձանագրվել են 9 երեխաների մոտ՝ այս դեպքերից 4-ում տեսողական ֆունկցիայի խանգարումը հանդիսանում է առաջնային՝ միջին և ծանր աստիճանի, իսկ շարժողական ֆունկցիայի խանգարումներն այս դեպքերում թեթև են:

Աղյուսակ 2. 6: Միաժամանակ տեսողության և շարժողական ֆունկցիաների խանգարումներ ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման ծանրության աստիճանի N=9

	Թեթև	Միջին	Ծանր	Ընդամենը
N=4				
Տեսողության ֆունկցիաներ	0	3	1	4
Շարժողական	4	0	0	4
N=5				
Շարժողական ֆունկցիաներ	2	3	0	5
Տեսողության ֆունկցիաներ	5	0	0	4

Երբ երեխաների մոտ արձանագրվել են միաժամանակ 3 ֆունկցիայի խանգարումներ և տեսողության ֆունկցիայի խանգարումը հանդիսացել է առաջնայինը ապա 10 դեպքերում տեսողության ֆունկցիայի խանգարման հետ զուգահեռ երեխաների մոտ արձանագրվել են ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաների խանգարումներ: Այս երեխաների մոտ տեսողության ֆունկցիայի խանգարումները հիմնականում միջին աստիճանի էին, իսկ մեկ դեպքում ծանր և երկու դեպքում էլ՝ խորը:

Աղյուսակ 2. 7: Միաժամանակ 3 ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի, երբ տեսողական ֆունկցիայի խանգարումն առաջնային է, N=10

	Թեթև	Միջին	Ծանր	Խորը	Ընդամենը
N=10					
Տեսողության	0	7	1	2	10
Ինտելեկտուալ/մտավոր	6	3	1	0	10
Ձայնի/խոսքի	8	2	0	0	10

Եվս 10 դեպքում տեսողության ֆունկցիայի խանգարումը գուցորդվել է ինտելեկտուալ/մտավոր և շարժողական ֆունկցիաների խանգարումների հետ, սակայն ոչ մեկում տեսողության ֆունկցիայի խանգարումն առաջնային չի եղել:

Միայն մեկ դեպքում է տեսողության ֆունկցիայի խանգարումը գուցորդվել ձայնի/խոսքի և շարժողական ֆունկցիայի հետ և այս պարագայում շարժողական ֆունկցիայի խանգարումն էր առաջնային:

Երկու դեպքում տեսողության ֆունկցիայի խանգարումը գուցորդվել է լսողության և ձայնի/խոսքի ֆունկցիաների խանգարումների հետ, սակայն կրկին այն առաջնայինը չէր:

Միաժամանակ 4 ֆունկցիայի խանգարում ունեցող 41 երեխաներից երկուսի մոտ է տեսողական ֆունկցիայի խանգարումը եղել առաջնային, մեկ դեպքում այն գուցորդվել է ինտելեկտուալ/մտավոր, շարժողական և ձայնի/խոսքի ֆունկցիաների խանգարումների հետ և արձանագրվել է տեսողական ֆունկցիայի խորը խանգարում, իսկ մյուս ֆունկցիաների խանգարումները ծանր աստիճանի: Իսկ երկրորդ դեպքում, տեսողության ֆունկցիայի խորը խանգարումը գուցորդվել է լսողության, ձայնի/խոսքի և ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաների խանգարումների հետ և արձանագրվել է մյուս ֆունկցիաների խանգարումները ծանր, միջին և թեթև աստիճանի խանգարումներ:

Շարժողական ֆունկցիայի խանգարումների գուցորդումներն այլ ֆունկցիաների խանգարումների հետ արդեն դիտարկվել են վերը բաժիններում, ստորև ներկայացվում են այն դեպքերը, երբ շարժողական ֆունկցիայի խանգարումն առաջնային է:

Աղյուսակ 2.8 Շարժողական ֆունկցիայի խանգարումների գուցորդումներն այլ ֆունկցիաների խանգարումների հետ ըստ դեպքերի հաճախականության

Ֆունկցիայի խանգարումները	Շարժողական ֆունկցիայի խանգարում ունեցողներ		Երբ շարժողական ֆունկցիայի խանգարումն առաջնային է	
	N	%	N	%
Միայն շարժողական ֆունկցիաներ	65	17.6	65	33.2
Շարժողական և տեսողության ֆունկցիաներ	9	2.4	5	2.6
Շարժողական և ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիաներ	67	18.1	34	17.3
Շարժողական և ձայնի/խոսքի ֆունկցիաներ	14	3.8	8	4.1
Շարժողական, ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաներ	162	43.8	63	32.1
Շարժողական, ինտելեկտուալ/մտավոր և տեսողության ֆունկցիաներ	10	2.7	2	1.0
Շարժողական, ինտելեկտուալ/մտավոր և լսողության ֆունկցիաներ	1	0.3	1	0.5
Շարժողական, տեսողության և ձայնի/խոսքի ֆունկցիաներ	1	0.3	1	0.5
Շարժողական, լսողության և ձայնի/խոսքի ֆունկցիաներ	2	0.5	1	0.5

Ֆունկցիայի խանգարումները	Շարժողական ֆունկցիայի խանգարում ունեցողներ		Երբ շարժողական ֆունկցիայի խանգարումն առաջնային է	
	N	%	N	%
Շարժողական, ինտելեկտուալ/մտավոր, ձայնի/խոսքի և տեսողության ֆունկցիաներ	29	7.8	14	7.1
Շարժողական, ինտելեկտուալ/մտավոր, ձայնի/խոսքի և լսողության ֆունկցիաներ	10	2.7	2	1.0
Ընդամենը	370	100.0	196	100.0

Շարժողական ֆունկցիայի խանգարման զուգորդումը տեսողական ֆունկցիայի խանգարումների հետ դիտարկվել է **Աղյուսակ 2.6: Միաժամանակ տեսողության և շարժողական ֆունկցիաների խանգարումներ ունեցող երեխաների բաշխումն ըստ ֆունկցիայի խանգարման ծանրության աստիճանի N=99** դեպքերից 5-ում շարժողական ֆունկցիայի խանգարումները հանդիսացել են առաջնայինը՝ երկու դեպքում թեթև և 3 դեպքում միջին աստիճանի, իսկ տեսողության ֆունկցիայի խանգարումները գնահատվել են թեթև աստիճանի:

Շարժողական ֆունկցիայի խանգարման զուգորդումը ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումների հետ դիտարկվել է **Գծապատկեր 2.4 Միաժամանակ շարժողական և ինտելեկտուալ/մտավոր ֆունկցիայի խանգարումներն ըստ արձանագրված դեպքերի քանակի և խանգարման աստիճանի , N=34** Այս զուգորդումների դեպքում շարժողական ֆունկցիայի խանգարումները բավական ծանր են:

Առավել մեծ խումբ են կազմում շարժողական ֆունկցիայի խանգարումների զուգորդումներն ինտելեկտուալ/մտավոր և ձայնի/խոսքի ֆունկցիաների խանգարումների հետ: Երբ շարժողական ֆունկցիայի խանգարումներն առաջնային են այս խմբում, ապա խանգարման աստիճանը բավական ծանր է ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների մոտ՝ դեպքերի երկու երրորդի համար արձանագրվել են ծանր և խորը աստիճանի խանգարումներ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքները 2018 թվականին Վիճակագրական հաշվետվություն